

Ա. Ա. ԱՄԵՆԱՅԵԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՅԿԵԶԻԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ

ԱԶՍՏԱԳՐՈՒՄԸ

323-1(37-925)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АЛТАЙ
ИНСТИТУТ ИСТОРИИ
И ЭТНОГРАФИИ

И. А. АЛЕКСАНДРОВ

И. А. АЛЕКСАНДРОВ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АЛТАЙ
ИНСТИТУТ ИСТОРИИ
И ЭТНОГРАФИИ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АЛТАЙ
ИНСТИТУТ ИСТОРИИ
И ЭТНОГРАФИИ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. А. АРУТЮНЯН

НАЧАЛО АРЦАХСКОЙ ВОЙНЫ И ОСВОБОЖДЕНИЕ ШУШИ

ИЗДАТЕЛЬСТВО НАН «ГИТУТЮН» РА
ЕРЕВАН 2000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. Ա. ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

ՏՇ ՊԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԵՐԱՏՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ 422

Տղազրվում է Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիայի
դասնության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
դասնական գիտությունների դոկտոր Գ.Մ. ԳԵՂԱՄՅԱԼ

Գլխից հրատարակության են երաշխավորել՝
դասնական գիտությունների դոկտոր Վ. Մ. ԱՎԱՆԵՍՅԱՆԸ եւ
դասնական գիտությունների թեկնածու Վ. Ռ. ԲԱԼԱՅԱՆԸ

Հարությունյան Մ.Ա.

Հ 422. Արցախյան դասերազմի սկիզբը եւ Շուշիի ազատագրումը:
Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 176 էջ, 52 լուսանկար, 2 ներդիր

*Նդասակ ունենալով գիտական հարթության վրա բարձրացնել Արցախյան
ժառանգումը ու դասերազմի դասնության ուսումնասիրությունը, հեղինակը իննու-
թյան առարկա է դարձրել Արցախյան պատերազմի հետեւանում սկսված գիտական
հակամարտության նախնական փուլը, 1991-92թթ. առավել կարեւոր իրադարձու-
թյունները՝ մինչեւ Լաչինի մարդասիրական միջանցքի բացումը:*

*Մենագրությունում, իրադարձությունների լայն համայնադասկերի վրա, հա-
մակողմանի վերլուծության է ենթարկվում դարավերջի փառավոր հաղթանակնե-
րից մեկը՝ Շուշիի ազատագրումը, ներկայացվում նախօրեին Արցախում տիրած
ռազմաաղաղակական իրադրությունը, լուսաբանվում է ռազմագործողության ըն-
թացքը, սրվում արդյունքներն ու դասնական նշանակությունը:*

*Նախատեսված է ընթերցող լայն շրջանների, ինչդեպ նաեւ Արցախյան ազա-
տանարտի դասնությանը հետաքրքրվողների եւ մասնագետների համար:*

Հ $\frac{0503020913}{703(02)-2000}$ չհայտարարված

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8080-0463-2

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Ազգային ազատագրական պայքարի նոր՝ Արցախյան փուլը նշանակալից փառաբանական ու ռազմական մի շարք հաղթանակներով, որոնք արժանի են մնալուն սեղ զբաղեցնելու հայոց բազմադարյա դասնության ոսկե մասշտաբում:

Դեռեւս դասերազմի օրերին ստեղծվել ու ներկայումս էլ ստեղծվում են բազմադարյա գործեր, որոնք իրենց որակական ու բովանդակային տարբեր մակարդակներով հանդերձ, նյութ են դառնալու դասնագիտական ուսումնասիրությունների համար: Սակայն, հանուն ճշմարտության լուրջ է արձանագրել, որ վերահսկողությունից դուրս մնացած ու ինքնահոսի մասնավոր գրադասարակության գործը լայն աստիճան է բացել անբարեխիղճ եւ դաստիարակապես մի շարք հեղինակների համար, ինչի արդյունքում այսօր, մեր աչքի առաջ աղավաղվում են ոչ հեռու անցյալի իրադարձություններն ու դեպքերը: Թե՛րեւս դրանով են դայնամավորված Արցախյան շարժման եւ դասերազմի դասնությունը գիտական հարթության վրա բարձրացնելու հրատարակչությունն ու անհրաժեշտությունը: Դա մի բարդ խնդիր է, որի լուծումը ժամանակ ու ֆրանչայզի աշխատանք է դառնալու: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ ժամանակին հավոր դասերազմի հոգ չի տարվել համադասարանական փաստաթղթերի, բարեգների դաստիարակման, դեպքերն արձանագրելու եւ տղազրված նյութերը արխիվներում ժողովելու մասին: Այս առումով անհասնելի նախաձեռնությունները բավարար լինել չեն կարող: Հասկալու անհասկանալի է դեպքերի մասնակիցների ու ակամաստների անտարբերությունը: Տղազրվող նյութերը մեծամասամբ անարձագանք են մնում եւ աղաղակող անճշտություններն անզամ անարգել ստանում են «փառաբանություն»: Հաճախ ծայրահեղության է հասնում դեպքերին անճանաչված մոտեցում ցուցաբերելը, այսինքն՝ հաշտությունը կամ ձախողումը մեկ անհատի անվան հետ կապելը: Այս «անճանաչված» ու «զգացմունքային» շրջանում երիցս դժվար է բոլորի համար հավասարադեպ լինել օբյեկտիվ ու ընդունելի: Դեպքերի մասնակիցները երբեմն իրենց անունները չգտնելով այս կամ այն գործում, իսկույն «խոսանում» են այն, անտեսելով կատարված աշխատանքն ու ամենայն դրակարգը:

Ինչ խոսք, հնարավոր չէ միանգամից սղառել ամբողջ նյութը, անդրադառնալ բոլորին եւ յուրաքանչյուր մանրամասնության, ինչդեռ նաեւ վերհանել ճեմարտությունը: Դրան կարելի է ձգել ու հասնել համասեղ ջանքերով, համընդհանուր շահագրգռվածություն ու դասախանասվություն դրսեւորելով: Վերջին հաշվով, որդոսումների ու բանավեճերի արդյունքում է երեսակվում իսկությունը:

Սույն ուսումնասիրությունը իր բնույթով ու նդասակարգումներով առաջինը լինելով, չի կարող զերծ լինել թերություններից: Դեռեւս արդիներ առաջ առաջարկությունների ու ճեգրումների ակնկալությամբ խնդրո առարկա թեմայով սասնյակ հողվածներ ենք տղագրել տղաբերական մամուլում: Արձագանքները, արարախարար, այնքան էլ շաս ու էական չէին: Չեռնարկելով այս գրքի հրատարակումը, հույս ունենք, որ կլինեն շահագրգիռ քննարկումներ, լրացումներ, առաջարկություններ ու դիտարկություններ, ինչը մեծադեռ կօգնի շակել վերհանված թերությունները, հեռեաբար եւ ոչ հեռու անցյալի ճեմարտի արտացոլմանն ու վերաիմաստավորմանը:

ՀԵՂԻՆԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

18-րդ դարի սկզբներին լեռնական ցեղերի չդադարող ասպատակություններին դիմագրավելու համար Հայաստանի լեռնային եւ բնականից անառիկ վայրերում, այդ թվում նաեւ Արցախում, ստեղծվեցին ինքնապաշտպանության հանգրվաններ՝ սղնախներ: Այդ ժամանակ էլ հենց վերստին ուշադրության առնվեց Շուշի անմատչելի դիրքը եւ Ավան հարյուրապետը այստեղ բերդ կառուցեց¹: [1]*

Շրջակա տարածքի վրա գերիշխող դիրքի շնորհիվ աշխարհագրական ու ռազմավարական առումներով կարելուր նշանակություն ստացած Շուշին մոտակա գավառների բնակիչների կողմից օգտագործվել է ինքնապաշտպանության նպատակով եւ վերածվել ազգային ազատագրական պայքարի ամրակուռ կենտրոնի: Բերդաքաղաքի պարիսպների տակ տարբեր ժամանակաշրջաններում ջարդվել են այլազան նվաճողներ: Նրան տիրելու համար պայքարը, որոշակի ընդհատումներով, տեւել է մի քանի դար: Պատահաբար չէ ասված՝ տիրել Շուշիի բերդին, նշանակում է տիրապետել ամբողջ Արցախին²:

Դեռ ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է անվանի պատմաբան Լեոն, «Շուշու ահարկու ամրությունների առաջ բացվում էին տիրապետության անհուն հորիզոններ - հարավում՝ մինչեւ Նախիջեւան, արեւմուտքում՝ մինչեւ Սեւանի լիճը, հյուսիսում՝ մինչեւ Գանձակ եւ արեւելքում՝ մինչեւ այն տեղը, ուր Կուրն ու Արաքսը խառնվում են իրար³»:

Նման մի բան տեղի ունեցավ 18-րդ դարի երկրորդ կեսին, երբ լեռներում հիմնված այդ բերդը դարձավ Փանահ խանի անխորտա-

¹ А. Г. Иоаннисян, Историческое введение к сборнику документов "Армяно-русские отношения в первой трети 18-ого в.", т. 2, ч. 1. Ереван, 1964, с. XLI.

*Բառակոսի փակագծերում նշված համարներն են Նախարարություններ բաժնում:

² В. Потто, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества (Мелик Вани и Аконь-Юзбашу Атабековы). Тифлис, 1902, с. 4

³ Լեո, Հայոց դասմարտն, 3-րդ հատ., գիրք 2-րդ: Երեսան, 1973, էջ 267

կելի զենքը՝ մի մեծ իշխանապետություն՝ Խամսայի մելիքությունները նվաճելու համար:

Պատմությունը կրկնվեց 1918-1920 թվականներին, երբ Շուշին առանց դիմադրության հանձնվեց նախ տաճկական, ապա եւ՝ մուսավաթական զորքերին, ինչը, վերջին հաշվով, հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի ինքնիշխանության կորստին եւ 70-ամյա գերության:

1988-1992 թթ. Շուշիի սպառազեն ադրբեջանցիները հավակնում էին այն ծառայեցնել Շարժումը ճնշելու նպատակին, սակայն հայ ազատամարտիկները կանխեցին նրանց եւ, վնասազերծելով թշնամական մահասփյուռ կրակակետերը, հինավուրց բերդաքաղաքը վերջնականապես վերադարձրին հայ ժողովրդին...

Դրանից, այսինքն՝ 1992թ. մայիսի 9-ից հետո Արցախյան շարժումը թեւակոխեց որակական նոր փուլ, վճռական բեկում մտցվեց դարաբաղա-ադրբեջանական պատերազմում, իրական դարձավ ԼՂ Յանրապետության անկախությունը:

Շուշիի ազատագրումը պատմական անհրաժեշտություն էր, մի հերոսամարտ, որ կոչված էր հաստատելու այս հողի վրա ապրելու՝ հայության անկապտելի իրավունքը, նրա ոգու հաղթանակը, ծեւավորվող ազգային զինված կազմավորումների առաքելությունն ու գործությունը: Ու դրանից հետո, ռազմավարական տեսակետից թեեւ ավելի դժվարին ու լայնածավալ ճակատամարտեր են շահվել, բայց եւ այնպես, Շուշիի ազատագրումը շարունակում է մնալ հայոց նորագույն պատմության ու հայ ռազմարվեստի փայլուն, իր բնույթով եզակի դրվագներից մեկը:

Շուշիի ազատագրման ռազմագործողությունն առանձին ուսումնասիրության առարկա չի եղել: Այն դիտարկելով հայ ազգային ազատագրական պայքարի եւ, մասնավորապես, նրա նոր՝ Արցախյան փուլի համատեքստում, անհրաժեշտ է բազմակողմանիորեն վերլուծել եւ տալ գնահատական, վերաիմաստավորել ու դարձնել պատմության սեփականությունը:

Սույն գիրքն անառարկելի վկայությունն է Շուշի բերդաքաղաքը ազատագրելու համար հայ զինվորների մղած դժվարին ու արյունահեղ մարտերի: Ընթերցողն անշուշտ կըմբռնի ու կհասկանա հատկապես սկզբնական շրջանում տարածում գտած այն տեսակետի անհեթեթությունը, որ իբր Շուշին հեշտությամբ, «զրեթե առանց արյունահեղության» է ազատագրվել¹: Անտեղյակ մարդկանց ու քաղա-

¹ «Республика Армения», № 182, 1992г., г. У. Բաղդասարյան, Գինակայություն (հուսագրություններ): Երևան, 1998, էջ 110, 114, 119 եւ այլն:

քական շարժառիթներով առաջնորդվողների այդ վարկածը համահունչ է Ադրբեջանի քարոզչական մեքենայի այն բարբառաբանքներին, որ իբր Շուշիի անկումը դավաճանության արդյունք էր [2]: Թեեւ այդ երկու վարկածի ելակետը եւ շարժառիթը տարբեր են, սակայն երկու դեպքում էլ միտված են հայ զենքի փառավոր հաղթանակի, հայ ռազմարվեստի եզակի փայլատակման նսեմացմանը, ինչը, սակայն, անհնար է եւ, իհարկե, անթույլատրելի:

Ուստի ընթերցողի դատին հանձնվող այս ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտել մերօրյա զորահրամանատարների ռազմական տաղանդը, հայ զինվորականության հերոսությունն ու անձնվիրությունը, ներկայացնել Շուշիի ռազմագործողությանը նախորդած ու հաջորդած կարեւորագույն իրադարձությունները եւ տալ հայոց հինավուրց քաղաքի ազատագրման պատմական նշանակությունը:

Առանձնապես կարեւորելով Շուշիի ազատագրման ռազմագործողությունը, տողերիս հեղինակը փորձել է մանրամասնորեն վերլուծել այն, ներկայացնելով նրա նախադրյալներն ու անհրաժեշտությունը, նախապատրաստման փուլերը, ընթացքը, պատմական նշանակությունը եւ չուսումնասիրված այլ հիմնախնդիրներ: Լաչինի ռազմագործողությունը դիտարկվել է որպես Շուշիի ռազմագործողության տրամաբանական շարունակություն եւ Յայաստանի հետ ցամաքային կապի վերականգնման, շրջափակման ճեղքման անհրաժեշտության ու կենսական պահանջի արգասիք: Յեղինակը, սակայն, անընդունելի է համարում Շուշիի ու Լաչինի ռազմագործողությունները միավորելու եւ որպես մեկ ռազմագործողություն ներկայացնելու փորձերը[3], քանի որ Շուշիի ռազմագործողության նպատակները եւ խնդիրներն արմատապես տարբերվում էին Լաչինի ռազմագործողության խնդիրներից ու նպատակներից: Մյուս կողմից, «Շուշիի առումը» մարտական հրամանի ուսումնասիրությունը թույլ է տալիս միանշանակ պնդել, որ Լաչինի ազատագրման խնդիր, անգամ պայմանական(թեական), չի դրվել¹ ու այդ ժամանակ չէր էլ կարող դրվել: Վճռման համար այն ԻՊՈՒ-ին առաջադրվեց Շուշիի ռազմագործողության հա-

¹ ՊԲԿԱ, «Взятие Шуши: боевой приказ». План операции РАЗДАН. Карта обр. 1973г., М 1:100000, г. У. Բաղդասարյան, Գինակայություն, էջ III, 119, 121

ջողությունից հետո, դեպքերի բարեհաջող զարգացման եւ բարենպաստ պայմաններում:

Ազատամարտի թեմայով հրատարակված գրեթե բոլոր գրքերում ու գրքույկներում հեղինակներն այս կամ այն կերպ անդրադարձել են այդ պատմական, բեկումնային դեր խաղացած ճակատամարտին:

Շատ թե քիչ արժեքավոր տեղեկություններ են պարունակում Չ. Բալայանի¹, Դ. Բաղդասարյանի², Վ. Հարությունյանի³, Վ. Բաղդասարյանի⁴, Ս. Հասրաթյանի⁵, Բ. Ուլուբաբյանի⁶, Գ. Ղարիբյանի⁷, Ռ. Պետրոսյանի⁸ եւ այլոց⁹, հիմնականում ոչ գիտական բնույթի երկերը. ժամանակագրություն, հուշագրություն, հրապարակախոսություն, գեղարվեստական ստեղծագործություն: Սակայն, հիշյալ հեղինակները առանձին դրվագներ ներկայացնելուց բացի, լիովին չեն պարզաբանել Շուշիի ազատագրմանն առնչվող հիմնախնդիրները:

Տողերիս հեղինակի կողմից Արցախյան պատերազմի եւ, մասնավորապես, Շուշիի ռազմագործողության ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դնելու անդրանիկ փորձերը ձեռնարկվել են դեռեւս հինգ տարի առաջ: Այդ նպատակով պարբերական մամուլում

¹ Չորի Բալայան, *Դժոխք և դրախտ: Երեւան, 1995, նույնի՝ Բժիշկ Մարտիրոսը և նրա «Աստերազմի» հետքերը երկար է մնում»* գիրքը: Երեւան, 1999:

² Դ. Ս. Բաղդասարյան, *Դիմակայություն(հուշագրություններ): Երեւան, 1998, էջ 110-122*

³ **В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе, Хроника, т. 4-ая(январь 1991 г. – январь 1993 г.). Ереван, 1994.**

⁴ Վարդես Բաղդասարյան, *Ֆենոմեն: Ստեփանակերտ, 1998:*

⁵ Սենոր Հաւարթյան, *Գոյամարս (ԼՂՀ դաժնագրության բանակի մարտական ուղի դաժնագրության համառոտ ուղեցույց): Ստեփանակերտ, 1998:*

⁶ Բազրուս Ուլուբաբյան, *Արցախի դաժնագրությունը (Սկզբից մինչև մեր օրեր): Երեւան, 1994, նույնի Արցախյան գոյատևման արեւմտյան արեւմտյան: Երեւան, 1997:*

⁷ «Արթուր. արժիք թո՛ղք էր նա», կազմեց Գ. Ղարիբյան: Երեւան, 1999:

⁸ Ռազմիկ Պետրոսյան, *Արցախի դաժնագրության դիրքերում: Երեւան, 1997:*

⁹ Տես Կիմ Գաբրիելյան, *Վոլոդյա Ստեփանյան, Անավարտ կենսագրություն: Ստեփանակերտ, 1996. Յաւա Բարայան, Շիկաբաշի արժիպը: Ստեփանակերտ, 1995, Սեյրան Բանայան, Ավրոն մեր այժմուկ: Երեւան, 1994, նույնի՝ **Карабах на пути к независимости. Краснотар, 1994, Ս. Նանագույան, Շուշին: Երեւան 1993, նույնի՝ Արժիպները բարձրագույն են ինչու, գիրք Բ: Երեւան, 1993, Գուրգեն Գաբրիելյան, Աստղատեղիի աստղերը: Երեւան, 1996, Սուրբուս Խանյան, Արցիկ Մխիթարյան, Անմահության ճանապարհով: Երեւան, 1997:***

տպագրվել են մի շարք հեղինակային հրապարակումներ ու հոդվածներ¹:

Հնգամյա պրպտությունների արդյունքը սույն մենագրությունն է, որի ուսումնասիրության թեմայի շրջանակներից դուրս է Արցախյան շարժման եւ պատերազմի ամբողջական ու սպառնալից վերլուծությունը կամ մեկնաբանությունը, հետեւաբար, Լեռնային Ղարաբաղի ազատագրումը հակառակորդի ռազմական հեռանակներից ու թշնամական կրակակետերի ճնշումը դիտարկվել են այնքանով, որքանով դրանք առնչվում են Շուշիի ազատագրմանը: Համապատասխան փաստաթղթերի ու աղբյուրագիտական նյութերի բացակայությունը ազդել է առաջին բաժնի շարադրանքի վրա, երբեմն թույլ չտալով հեղինակին ծավալվել կամ դուրս գալ ժամանակագրական ու հուշագրային տեղեկությունների շրջանակներից:

Ներկայացվող ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել ԼՂՀ պաշտպանության բանակի կենտրոնական արխիվի (ՊԲԿԱ), ԼՂՀ պետական եւ Աժ ընթացիկ արխիվների՝ թեմային առնչվող սակավաթիվ նյութերը, պատերազմի մասնակիցների վկայություններն ու հուշագրությունները, ժամանակի պարբերական մամուլը, Ազատամարտին նվիրված տպագիր գրականության մեծ մասը (*տես գրականության ցանկը*):


Առաջին անգամ օգտագործվել ու գիտական շրջանառության մեջ են դրվել բացառիկ փաստաթղթեր եւ ռազմական քարտեզների տվյալները, ինչպես օրինակ, «Շուշիի առումը» մարտական հրամանը, «Հրազդան» ռազմագործողության պլանի քարտեզը, ԼՂՀ նախարարների խորհրդի եւ ԳԽ նախագահության որոշումների արձանագրությունները եւ այլն: Ցավով պետք է նշել, որ «Շուշիի ազատագրման ռազմագործողության պլան» քարտեզը գտնվում է մասնավոր անձի մոտ, որը

¹ Տես «Մարտիկ», ԼՂՀ դաժնագրության բանակի դաժնագրություն, ք. 10, 17-18, 1995 թ., 2-4, 7, 9, 10, 15, 18-19, 35 1996 թ., 9, 14, 15, 18, 19 1997 թ., 14-18, 22, 24, 42, 46, 49 1998 թ., 2-4, 7-11, 14, 16, 18-23, 24, 28, 30, 32-34, 36-38, 41, 44, 45 1999 թ., 12, 18, 2000 թ., «Ազատ Արցախ», հանրադատական թերթ, №№ 9, 16, 19, 22, 41, 53 1999 թ., «Խաչեն», Սկեռտնի քաղաքացիական դաժնագրություն, ք. 3, 8 1993 թ., 4 1994 թ., «Շուշի», Շուշիի քաղաքացիական դաժնագրություն, քիվ 6, 1994 թ., «Հայրենյաց դաժնագրություն», Արցախի դաժնագրություն, քիվ 2, 2000 թ., «Azat Arцах», № 19, 1999 թ.:

այդ արժեքավոր պատմական սկզբնաղբյուրին տիրացել է զարտուղի ճանապարհով եւ համառորեն հրաժարվում է այն վերադարձնել ՊԲ արխիվին: Դժբախտաբար, այսպիսի օրինակները շատ են: Լավ է դեռ, որ ոմանք գոնե հնարավորություն են տալիս ծանոթանալ իրենց տներում պահվող եզակի փաստաթղթերին ու ռազմական քարտեզներին...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԻՎ

ԱՐԿԻՎԻ ՄԱՍԻՆ ԱՐԿԻՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄ




ԲԱԺԻՆ Ա

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՆԱԽՕՐԵՒՆ

Այս քարտեզը ներկայացնում է Ղարաբաղի ռազմական դրությունը 1992 թվականի սեպտեմբերի 26-ին, երբ Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը Հայաստանից: Քարտեզը ցույց է տալիս Ղարաբաղի սահմանները, ինչպես նաև Ղարաբաղի հարևան շրջանները: Քարտեզը նաև ցույց է տալիս Ղարաբաղի ռազմական դրությունը 1992 թվականի սեպտեմբերի 26-ին, երբ Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը Հայաստանից: Քարտեզը ցույց է տալիս Ղարաբաղի սահմանները, ինչպես նաև Ղարաբաղի հարևան շրջանները:

**ԼՂԻՄ-Ի ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ
ՏԱՐԱԾՔՆԵՐԸ 1988 Թ. ՄԿԶԲԻՆ**



Հեղինակ
Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՂՂԻՄ ԱՐԱՅԻՆ

**ԱՂԻՐԵՋԱՆԻ ԱՂՐԵՍԻԱՆ ԱՐՑԱՆԻ ԴԵՄ:
ԱՐՑԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ**

Աղրբեջանի ազրեսիան սկզբնական շրջանում կրում էր տարերային բնույթ եւ դրսեւորվեց համապարփակ շրջափակման, պետական ու անհատական ունեցվածքի ավարառության, բերքի եւ ցանքատարածությունների փչացման կամ բերքահավաքին խոչընդոտելու, հայկական բնակավայրերի, մերձակա օժանդակ տնտեսությունների ու արտադրական ձեռնարկությունների վրա ավազակային զինված հարձակումների եւ հակաօրինական այլ գործողությունների տեսքով:

Այդ ամենին հաջորդեցին կազմակերպված ու բացահայտ զինված ներխուժումներն ու տարածքներ զավթելու, հայ բնակչությանը բռնատեղահանելու նպատակով իրականացվող լայնածավալ ռազմագործողությունները: Արցախյան պատերազմի ընթացքում, լայնածավալ ռազմագործողությունների միջոցով ներխուժման փորձերը կարելի է բաժանել 3 հիմնական փուլերի.

ա. 1991 թ. ապրիլ-հունիս՝ «Օղակ» ռազմագործողությունը եւ հայկական մի շարք բնակավայրերի բռնագրավումն ու բնակչության տեղահանությունները:

բ. 1992 թ. հունիս-1993թ. հունվար՝ լայնածավալ ազրեսիայի արդյունքում Շահումյանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի մեծ մասի զավթումը:

գ. 1993 թ. դեկտեմբեր-1994 թ. հունվար՝ հարձակողական լայնածավալ ռազմագործողություններ ԼՂ Հանրապետության սահմանագծի ողջ երկայնքով:

Ա եւ Բ փուլերում աղրբեջանական կողմը լայնորեն օգտագործեց ռուսական արդիական սպառազինություն եւ վարձկան, բայց որակյալ զինվորական մասնագետներ, ինչով էլ, ընդհանուր առմամբ, պայմանավորված էին թշնամու ժամանակավոր հաջողությունները: Գ փուլում, Աղրբեջանը ներգրավել էր տարբեր երկրներից ստացված սպառազինություն եւ այլազգի բազմաթիվ վարձկաններ: Այդուհանդերձ, բոլոր երեք դեպքերում էլ, Արցախը

պաշտպանող զինված կազմավորումները ոչ միայն կասեցրին հակառակորդի առաջխաղացումը, այլեւ, հակահարձակման անցնելով, ջախջախիչ պարտության մատնեցին նրա ընտիր զորամասերին եւ տիրեցին ռազմավարական առումով կարելու ու նպաստավոր բնագծերի:

Հայտնի է, որ Արցախյան շարժման անմիջապես հետեւեց ԼՂԻՄ-ի շրջափակումը: Արցախահայությանը ծնկի բերելու նպատակով, Շարժման թշնամիները դիմեցին տնտեսական շրջափակման ամենատարբեր ձեւերի, ինչպես, ասենք, արտաքին աշխարհից, նամանավանդ՝ Հայաստանից ԼՂԻՄ-ի մեկուսացմանը, ժողովրդատնտեսական բեռների, սննդամթերքների, վառելանյութերի, մի խոսքով՝ առաջին անհրաժեշտության իրերի ներկրման կամ տեղափոխման արգելակմանը եւ այլն: Այդ իսկ նպատակով դադարեցվեց երկաթուղային շարժակազմերի եւ բեռնատար ավտոմեքենաների մուտքը ԼՂԻՄ: Շրջափակվեցին հենց իսկ ինքնավար մարզի ներքին ավտոճանապարհները, ինչը մի առանձին դժվարություն չէր ներկայացնում, քանզի ժամանակին խորհրդային ռազմավարները հաղորդակցության ճանապարհների ու մայրուղիների կարելու հատվածների հարեւանությամբ ադրբեջանական բնակավայրեր էին հիմնել: Արդյունքում Ստեփանակերտ-Ասկերան ուղեհատվածը հայտնվել էր խոջալու ավանի, Ստեփանակերտ-Մարտունի՝ Մալիբեկլու եւ Խոջավենդ գյուղերի, Ստեփանակերտ-Մարտակերտը՝ Սրխավենդի վերահսկողության տակ: Ներշրջանային հաղորդակցությունը կաթվածահար անող նման գյուղեր էին Ղարադաղլուն եւ Վերին Վեյսալուն՝ Մարտունու շրջանում, հնամենի Տող գյուղի ադրբեջանական թաղամասը՝ Հադրութի, Իմերեթ-Քերեվենդը՝ Մարտակերտի շրջաններում: Ուստի, բնավ պատահական չէր, երբ «տնտեսական բոլկոտի» ու շրջափակման նախաձեռնումից հետո այդ գյուղերը մտան իրենց դերի մեջ, ուժեղացվեցին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներով (ՄՀՆՁ)[4], որոնք խնդիր ունեին կաթվածահար անել ԼՂԻՄ-ի հաղորդակցության ողջ համակարգը եւ տրանսպորտի աշխատանքը, ինչպես նաեւ ահաբեկել հայ բնակչությանը: Խորհրդային իշխանությունների հովանավորությունը վայելող ավազակախմբերը պարբերական հարձակումներով, կողոպտում էին հայկական գյուղերի բանջարանոցներն ու հացահատիկային ցանքատարածությունները, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների ունեցվածքը, քշում-տանում հանրային ու

անհատական անասունները: Դրանից բացի, առեւանգվում էին հողվորները, կոլտնտեսային դաշտերում աշխատող գյուղացիները, նախրապանները: Գնդակոծությունների եւ իրդեհման սպառնալիքի տակ փորձում էին խափանել բերքահավաքը կամ վար ու ցանքը, հաճախ իրի էին մատնում հասուն արտերը, փչացնում ցանքսերն ու բերքը, դրանով իսկ մարդկանց զրկելով ապրուստի միջոցներից՝ բնակչության մեծամասնությանը սովի մատնելու չար դիտավորությամբ[5]...

Հակահայկական գաղափարաքաղաքական ու քարոզչական պատերազմն Ադրբեջանում մշտական երեւոյթ էր դեռեւս մինչեւ Արցախյան շարժումը, իսկ 1988-ից ի վեր այն դարձավ ավելի սանձարձակ ու թունոտ: Հայերին բնաջնջելու, հողն արյամբ նվաճելու եւ այլ մոլեռանդ կոչերով հագեցված քարոզչությունը դավազրգոմուն էր ադրբեջանական ամբոխին ու դրդում հաշվեհարդար տեսնել անգն հայերի հետ: Իբրեւ դրա անմիջական հետեւանք, Ադրբեջանում ծայր առան բռնարարքները եւ արյունահեղությունը:


Սոււմգայիթի, Գանձակի [6], Բաքվի բազմահազարանոց հայ բնակչության ջարդերը եւ տեղահանությունները, կազմելով ուժի ու ահաբեկչության միջոցով Արցախի հիմնահարցը լուծելու խորհրդային պետության ղեկավարության քաղաքական գծի բաղկացուցիչ մասը, իբրեւ դաս ազգային մյուս փոքրամասնություններին, պատերազմական գործողությունների եւս մի դրսեւորում էին եւ ուղղված էին նախ եւ առաջ Արցախի ու արցախցիների դեմ, քանի որ այդ քաղաքների հայ բնակչության մեծամասնությունն արցախյան ծագում ուներ կամ հենց ծնվել էր Արցախում: Ուրեմն, արդեն իսկ Սոււմգայիթում ու Բաքվում Ադրբեջանը պատերազմում էր Արցախի ու արցախցիների դեմ:

Ադրբեջանի ազրեսիայի առաջին օբյեկտներ դարձան Հյուսիսային Արցախի բնակավայրերը [7]: Դեռեւս մինչեւ սոււմգայիթյան ջարդերը 1987թ. վերջերին Ադր. ԽՍՀ ՆԳՆ ստորաբաժանումները ջարդեր ու ավազակություններ էին իրագործել ԽՍՀՄ մարշալներ Հ. Բադրամյանի եւ Հ. Բաբաջանյանի ծննդավայր Չարդախլու գյուղում, հայաթափելով այն¹: Դա եղավ Հյուսիսային Արցախի հայության բացահայտ բռնատեղահանության նախերգան-

¹ *Տես Артем Шуаев, Проблема Северного Нагорного Карабаха. "Армянский Вестник", № 2, 1998г., стр. 33, Կիւ Ղահրամանյան, Հյուսիսային Արցախ(դասնորթյան բնական վերածրոյթ): Պոստագիտության դոկտրի գիտական ասիճանի հայցման անենախոսքայան սեղմագիր: Երեւան, 2000. էջ*

քը եւ իր ավարտին հասցվեց հակամարտության զինված փուլի սկզբնավորման ընթացքում:

Նախապատրաստական այդ ձեռնարկումները, ներառյալ նաեւ 1988 թվականի փետրվարից մինչեւ 1991 թ. ապրիլն ընկած ժամանակամիջոցում ադրբեջանական ավազակախմբերի, ՄՅՆԶ-ի եւ ԽՍՀՄ Ձինված ուժերի (ՁՈՒ), Ներքին զորքերի (ՆՁ) ստորաբաժանումների՝ համատեղ անցկացված պատժիչ գործողությունները, անձնագրային ռեժիմի պահպանման քողի տակ իրականացված ձերբակալությունները, բռնությունները եւ սպանությունները, ի վերջո, արցախահայությանը կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու միակ ճիշտ ուղու վրա: Իսկ 1991 թ. ապրիլ-մայիսյան դեպքերը, սկզբնավորելով դարաբաղաադրբեջանական պատերազմը, այլեւս այլընտրանքի տեղ չթողեցին...



Գետաշենի ենթաբնակավայրի գյուղերի սխեմատիկ քարտեզ
Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Գետաշեն: Երևան, 1992 թ.

ՉՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

«ՕՂԱԿ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով «Օղակ» ռազմագործողության կարեւորությունը, աննախադեպությունը եւ, միաժամանակ, նրա համապատասխանությունը ազրեսիայի դասական ձեւերին ու եղանակներին, նպատակահարմար գտանք հնարավորինս բազմակողմանի բնության ենթարկել այն:

Գետաշենում եւ նրա շրջակա գյուղերում հայերն ապրում էին հնուց ի վեր: Խանլարի շրջանի Ղուշի-Արմավիր, Ազատ եւ Կամո գյուղերի բնակիչները, չդադարող զինված հարձակումներից, տեղական իշխանությունների, ներքին զորքերի հրամանատարների ճնշումից նեղվելով, ստիպված էին 1989-1990թթ. ձմռանը թողնել իրենց բնակության վաղնջական վայրերը: Տները գյուղացիներից գնվեցին շրջխորհրդի գործկոմի կողմից եւ անմիջապես էլ բաժանվեցին ադրբեջանցի վերաբնակներին: Շուրջ 3000 բնակիչ ունեցող Գետաշենը եւ 315 բնակիչ ունեցող Մարտունաշենը կտրականապես մերժեցին տեղահանվելու մասին շրջանի իշխանությունների բազմաթիվ առաջարկները: Մերձակա ադրբեջանական գյուղերի կողմից շրջափակվելով, իրարից 1 կմ հեռավորություն ունեցող հայկական այդ երկու գյուղերն առնվեցին հրազենի, ականանետի ու կարկտահար թնդանոթի մշտական կրակի տակ: Իրավիճակը ծայրահեղ սրվեց 1991 թ. ապրիլի 20-ին, երբ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումը թողեց Գետաշենը: Ադրբեջանի կողմից կաշառված խորհրդային զորքերը, ադրբեջանական ՄՅՆԶ-ի համագործակցությամբ, փորձեցին Գետաշեն ներխուժել դեռեւս ապրիլի 23-ին: Սակայն, ձորակում շրջված տանկը, ակամա փակելով շարասյան ծանապարհը, ձախողեց հակառակորդի նկրտումների իրականացումը:

Տիրահռչակ «Կոլցո» («Օղակ») ռազմագործողությունը սկսվեց 1991 թ. ապրիլի 30-ին: Վաղ առավոտյան, խորհրդային զինծառայողները զրահափոխադրիչներով անարգել մտան Գետաշեն, բացատրեցին, որ զենքի առգրավման գործողություն պիտի իրա-

կանացվի: Սակայն, հայտնի դարձավ, որ գյուղ են ներխուժել նաեւ Ադրբեջանի ՆԳՆ ՄՅՆՁ աշխատակիցները եւ բռնություններ, կամայականություններ, կողոպուտ ու ձերբակալություններ են կատարում: Գյուղի պաշտպանները զրկվեցին ադրբեջանցի ջարդարարներին դիմադրելու հնարավորությունից, որովհետեւ խորհրդային բանակի զինծառայողները ոչ միայն արդեն գրավել էին գյուղը, այլեւ ահաբեկում էին բնակիչներին¹: Դրությունը չփրկեց նաեւ Թաթուլ Կրայեյանի սխրանքը, որը նռնակը պայթեցնելու սպառնալիքի տակ պատանդ վերցնելով գնդապետ Մաշկովին եւ զրահապատ փոխադրիչում գտնվող եւս 14 զինծառայողների, պահանջներկայացրեց գյուղից դուրս բերել ՄՅՆՁ-ն:

Մարտունաշենի պաշտպանները, չերկնչելով հակառակորդի գերակշռող ուժերից, ընդունեցին մարտը: Գյուղի միակ ճանապարհով առաջացող զրահատեխնիկայի շարասյունը կանգ առավ առաջին զրահապատ փոխադրիչը խփվելուց հետո: Ջգալով զրահատեխնիկայով գյուղ ներխուժելու վտանգավորությունը, հակառակորդի տանկերը հեռվից, ուղիղ նշանառությամբ, խփում էին տներին: Միաժամանակ, հարձակման անցավ հակառակորդի հետեւակը: Առջեւից ընթացող ՄՅՆՁ-այինները, ծամփեզրով բերում էին գյուղի ծեր ուսուցչին, որ այդ ստոր մեթոդով հոգեբանորեն ազդեն հայ մարտիկների վրա: Սակայն, հնչեցին կրակահերթերը, գետին տապալելով տասնյակ ՄՅՆՁ-այիններ²:

Խորհրդային տանկերը, հասնելով գյուղի հյուսիսային մասը, շարունակեցին նշանառու կրակ տեղալ տների վրա: Գյուղի պաշտպանների մի մասը ճակատամարտ էր տալիս, իսկ մյուս մասը բնակչությանը նախապատրաստում էր էվակուացիայի: Մարտը վարող Սիմոն Աչիկոյոզյանը, ձեղնահարկում դիրքավորված, անվրեպ կրակով ապահովում էր մարտընկերների նահանջը: Սոսկ տանկից արձակված արկն ի գորու եղավ լռեցնել անվեհեր մարտիկի երգն ու գնդացիրը...

Մայիսի 1-ի հետմիջօրեին Գետաշենին մոտեցան տասնյակ տանկեր, իսկ բարձրախոսներով հայտարարվեց գրոհի սկզբի մասին, որից հետո անհապաղ ազատվեցին գերված զինվորները եւ

¹ Библиотека центра русско-армянских отношений, Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов. апрель-июнь 1991 года, составила Седя Вермишева. Ереван, 1995, с. 8-10, 61

² «Ազրակ» քաղաքիկ, 20 փետրուար, 1998, էջ 57

վերադարձվեցին առգրավված զենքերը: Ի պատասխան, ազատ արձակվեց նախօրեին ձերբակալված հայերից 27 մարդ՝ սաստիկ ծեծված ու մարմնական վնասվածքներով: Պատանդների փոխանակությունից հետո էլ գյուղը մշտապես գնդակոծվում էր ավտոմատներից, գնդացիրներից ու տանկերից:

Մայիսի 4-7-ը ռազմական ուղղաթիռներով բռնի տեղահանվեցին ծերերը, կանայք ու երեխաները, իսկ 8-ին ավտոբուսներով տղամարդիկ:

Գետաշենի իրադարձությունները եւ Մարտունաշենի հերոսական դիմադրությունը կաշկանդեցին ՄՅՆՁ-ին եւ խորհրդային բանակին, ստիպելով նրանց հրամանատարությանը՝ հետաձգել Շահումյանի վրա ծրագրված հարձակումը:

Այս իրադարձությունների մասին գրող հեղինակները, հիմնականում, խորամուխ չեն լինում Գետաշենի ողբերգության պատճառների մեջ, դրանց վերհանումը թողնելով ապագա պատմաբաններին¹: Ողբերգության պատճառները վերհանելու յուրահատուկ մի փորձ է ձեռնարկել դեպքերի մասնակից ու ակամատես Վահան Յովհաննիսյանը: «Հայկական ղեկավարութեան քաղաքական սխալների արդիւնքն էր, որը խորհրդային ղեկավարութեանը դատարկ յոխորտամք էր հակադրել,- գրում է նա իր հուշերում,- դատապարտութեան գիտակցումն էր, որ կաթուածահար էր արել ոչ միայն Գետաշենի, այլեւ Բերդաձորի եւ հարեւան Հադրութի շրջանի գյուղերի բնակչութեանը, որոնք ենթարկուել էին տեղահանման»: Չառարկելով Հայաստանի ղեկավար այրերի ավելորդ շտապողականության ու կրեմլի դեմ բացահայտ առձակատման ելնելու աննպատակահարմարության մասին հեղինակի ակնարկին, բնավ չենք կարող համաձայնվել նրա հաջորդ դատողություններին. «Բայց մի կողմ թողնենք մեծ քաղաքականութիւնը,- շարունակում է նա,- ներքին հիմնախնդիրներ նույնպէս կային: Գետաշենը կարող էր պայքարի նախապատրաստուել միայն տեղացի ժողովրդական առաջնորդ ունենալով: Գետաշենի ողբերգութիւնը, սակայն, յատկապէս այն էր, որ այդ գիւղն այդպէս էլ չառաջադրեց Դիմադրութեան իր առաջնորդին: Սակայն չի նշանակում, թէ Գետաշենն ընդհանրապէս մարտիկներ չուներ: Ո՛չ, նրանք կային: Սակայն նրանք քիչ էին: Չկար պաշտպանուելու համաժողովրդական պատրաստակամութիւն: Դիմադրութեան ոգի չկար:

¹ Տես օրինակ, Հ. Գեւորջան, Պետն: Երեւան, 1994, էջ 21, Ս. Նանսպուլյան, Արժիվները բարձունքներ են սեղնում, գիրք Գ: Երեւան, 1993, էջ 112

Եւ այդ պատճառով գիւղը դատապարտուած էր: Այդ պատճառները շատ խորն են՝ թաղուած առեւտրական հին գիւղի պատմութեան, մանր խանութպանների հոգեբանութեան մեջ, Գետաշէնի եւ հարեւան հայկական գիւղերի փոխյարաբերութիւններում: Հիմա ձեռնպահ եմ մնում Գետաշէնի պարտութեան պատճառները մանրագին վերլուծելուց, որպէսզի չփորփրեմ գետաշէնցիների թարմ վերքերը. բայց չէ՞ որ ամէն ինչ աւելի պարզ է. Գետաշէնն ընկաւ, քանզի այնտեղ պատրաստ էին յանձնուել առանց դիմադրութեան, ու հակառակորդը գիտէր այդ մասին»¹:

Առանձնակի չժանրանալով հեղինակի մտքերի վրա, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել առկա հատկանշական միակողմանիության եւ «արդարանալու» կամ «մեղքը» ուրիշի վզին փաթաթելու հնավանդ մտայնության վրա: Անհիմն ու անհամոզիչ են հատկապէս դիմադրության ոգու բացակայության կամ առանց դիմադրության հանձնվելու պատրաստակամության մասին պնդումները: Հայտնի է գյուղական դպրոցի ներքնահարկում անցկացված ձեպախորհրդակցությունում գյուղը պաշտպանելու մասին վճռի կայացման փաստը²: Հայտնի են նաեւ 1990 թ. հունվարի 12-14-ին Մանաշիղ, Ազատ եւ Գետաշէն բնակավայրերի հերոսամարտերը, որոնց միջոցով Հյուսիսային Արցախի պաշտպանները, այդ թվում բազմաթիվ գետաշէնցիներ, դիմակայեցին գերակշռող թշնամուն, ջախջախեցին նրա սպառազեն հրոսակների ու կասեցրին նրանց ագրեսիան: Այդ փառավոր հաղթանակը լեռնաշխարհի հայության հավաքական ուժի եւ ազատատենչ ոգու արգասիքն էր³: Հյուսիսային Արցախի պատմության հիմնախնդիրներով զբաղվող Կիմ Ղահրամանյանն իր դոկտորական ատենախոսության մեջ ցույց է տվել, թե ինչ անձնուրաց կռիվներ են մղվել Գետաշէնի ենթաշրջանի ու Շահումյանի շրջանի սահմանային գյուղերում⁴, ուր մեծ էր նաեւ գետաշէնցիների ավանդը: Գետաշէնում 200-ից ավելի մարդ ընդունակ էր զենք վերցնել, սակայն մարտական զենքերը, դժբախտաբար, շատ քիչ էին: Ուրեմն՝ խոսքը պետք է գնա ոչ թե դիմադրական ոգու բացակայության, այլ անկազմակերպվածության, մարտական գործողություններին բնակ-

¹ Վահան Յովհաննիսեան, *Արցախյան ազատագրական դաշտի հիմնարար ժամանակները*: «Ազդակ» բացառիկ, 20 փետրուար, 1998, էջ 56-57

² Նվարդ Մողրմունյան, 1991. «Կոլցո» (Մարդոտություն), Ա մաս: Ստեփանակերտ, էջ 8

³ Տես «Մռավի դրոշմներ», ԼՂՀ Շահումյանի օրջանային թերթ, թիվ 1, 1994 թ.:

⁴ Կիմ Ղահրամանյան, նեվ. գործը, էջ 35

չությանը հոգեբանորեն չնախապատրաստելու եւ կազմակերպական այլ «մանրութիւնների», մանավանդ՝ գյուղի ինքնապաշտպանության ղեկավարների ճակատագրական թերացումների մասին: Պատերազմը ռոմանտիկա չի համոզութում, հետեւաբար՝ անիրատեսական է մտածել անգամ, թե իր աչքի առաջ փուլ եկող տունը, մահացու վտանգի, օրհասի մատնված ընտանիքը չպետք է կաշկանդեին գետաշէնցուն՝ որսորդական հրացանով խոյանալ տանկերի ու ռազմական ուղղաթիռների վրա: Դա առնվազն դոնքիշոտություն կլիներ... Եթե հաշվի առնենք նաեւ խորհրդային բանակի անպարտելիության եւ ռուս զինվորի անձեռնմխելիության հոգեբանական արգելքը, որի հաղթահարման մասին, 1991 թ. կտրվածքով, խոսելն անիմաստ է, պատկերը, թերեւս, կամբողջանա...

Հիմնական պատճառն, ըստ իս, պետք է որոնել ֆիդայականության, այսինքն՝ պայքարի ձեւերի, մեթոդների ու եղանակների ընտրության մեջ: Ինչ խոսք, կամավորական մարտիկների անձնվիրությունն ու հայրենասիրությունը կասկածներ չեն հարուցում, նրանց հուսահատ ընդվզումն ու սխրանքը երբեք չի կարելի նսեմացնել: Սակայն, տվյալ պարագայում, մարտը գյուղում ընդունելը ճիշտ ու նպատակահարմար չէր: Մանավանդ, եթե հաշվի ենք առնում թշնամու ռազմական, տեխնիկական, թվական առումներով գերակշռող վիթխարի ուժը: Ինքնապաշտպանական ջոկատների համար նախընտրելին գյուղից դուրս, փոքր խմբերով, համառ կամ էլ կարճատեւ մարտեր մղելն էր: Անհրաժեշտ էր հակառակորդին դիմավորել մինչեւ նրա գյուղ հասնելը կամ էլ նրան ձգելով դեպի լեռներն ու անտառները՝ մարտ տալ փոքրաթիվ ուժերի համար արդեն նպաստավոր պայմաններում:

Այս պարագայում հաջողության հասնելու հեռանկար էլ կար, հնարավորություն էլ, քանզի հակառակորդը լեռներում ու անտառներում իր ամբողջ զինանոցը կիրառել չէր կարող եւ գործնականում անհնար էր հարվածի գլխավոր ուղղությունում մեծ ուժեր ու միջոցներ կենտրոնացնելը, հետեւաբար՝ նա պետք է ստիպված լիներ կռվել կամ գործել փոքրիկ խմբերով ու առանց տանկերի: Ինքնապաշտպանական ջոկատները տեղանքին ավելի քաջածանոթ էին, ուստի, մանւերելու առումով, նույնիսկ, առավելություն կարող էին ստանալ, ինչպէս դա եղավ, ասենք, չեչենական 1996 թ. պատերազմաշրջանում: Ապրիլի 23-ի դեպքը, երբ ճանապարհին շրջված տանկն ակամա ձախողել էր հակառակորդի առաջխաղացումը եւ, ընդհանրապէս, ծրագրված ռազմագործողության իրա-

կանացունը, պետք է որ հուշեր մերօրյա ֆիդայիներին՝ ճանապարհի ա՛յդ կամ մի այլ հատվածում տանկերի առաջխաղացումը խափանելու, խոչընդոտելու գործողություն իրականացնել: Թշնամուն կանխելու համար պետք է տիրապետել իրավիճակին, հետախուզությամբ ու այլ աղբյուրներից իմանալ նրա ծրագրերի ու տեղաշարժերի մասին, ըստ այդմ էլ՝ պլանավորել, թե հակահարվածը որտեղ ու երբ հասցնել: Չպետք է անտեսել նաեւ ուշադրություն շեղող կամ մաներային գործողություններով հակառակորդին կանխելու, նրան մոլորեցնելու եւ թյուրիմացության մեջ զցելու հնարավորությունը: Ամեն պարագայում, իրեն չարդարացրեց ռազմագործողության նախօրեին գյուղերում մնալու եւ բնակավայրում մարտն ընդունելու մարտավարությունը: Հենց այդ վրիպումն էլ վարպետորեն օգտագործեցին ադրբեջանցիները եւ խորհրդառուսական բանակը ուղղեցին հայ «գրոհայիներին» վրա...

Մենք շատ հեռու ենք այն պարզունակ մտքից, թե հայ «ֆիդայիները», եթե ժամանակին թողնեին գյուղը, ապա բռնատեղահանություն չէր լինելու, կամ հնարավոր կլինեիր կանխել ողբերգությունը: Մեզ համար նախընտրելին հնարավոր բոլոր միջոցների ու հնարների վերհանման ուղին է, որոնք այս կամ այն կերպ կարող էին նպաստել Կրեմլի ու Բաքվի դիվային ծրագրերի խափանմանը, ստեղծված ծանր պայմաններում արագ կողմնորոշվելուն եւ ճիշտ վճիռ կայացնելուն:

Ուզենք թե չէ՝ «ֆիդայիները» օրենքից դուրս էին եւ խորհրդային «իրավապահները» իրենց զենքերն ուղղելու էին հենց նրանց վրա: Նման իրավիճակում պետք էր փորձել միլիցիայի ջոկատ ստեղծել ՆԳ շրջանային բաժնին կից, իսկ լավագույն դեպքում՝ եւ նրա կազմում: Կարելի էր զինված տղաներին քողարկել ժողովրդական աշխարհագորայիների (դրուժինիկների) կարգավիճակով, կամ նրանց ձեւակերպել որպես քաղաքաշտպանության շտաբի անդամներ: Այս պարագայում, համենայն դեպս, օրինականության քողի տակ կարելի էր ինչ-ինչ հարցեր լուծել, թեեւ չի բացառվում, որ հատուկ ծրագրված «Օղակ» գործողությունն, այնուամենայնիվ, իրականացվելու էր եւ անխտիր զինաթափվելու էին թե միլիցիոներ, թե աշխարհագորային, թե քաղաքաշտպանության աշխատակից, մանավանդ, որ ունենք Ոսկեպարում հայ միլիցիոներների գնդակահարման փաստը: Ուրեմն՝ խնդիրը բացահայտ առձակատման չէլնելու եւ առկա պայմանների ու իրա-

վիճակի ճիշտ օգտագործման մեջ է... Իսկ գերակշիռ ուժերի դեմ պայքարի միակ արդարացված միջոցը փոքր խմբերով պարտիզանական պատերազմն է, նամանավանդ՝ Լեռնային շրջաններում...

Այսպիսով, Գետաշենի ու Մարտունաշենի անկման հիմնական պատճառներից էին ԽՍՀՄ քաղաքական իշխանության ձգնաժամը, Հայաստանի նորընտիր իշխանությունների շտապողականությունը եւ բացահայտ ու վաղաժամ առձակատման դիմելը, իսկ դրան հակառակ՝ Ադրբեջանի կողմից այդ հակասությունների օգտագործումը եւ կենտրոնի հետ հանցավոր համագործակցության մեջ մտնելը, ինչի հետեւանքն էր նաեւ «Օղակ» ռազմագործողությունը՝ իբրեւ «ըմբոստ» հայերին պատժելու մի միջոց...


Անշուշտ, հարկ է կարելորել նաեւ ազգային պետության գործոնը, առանց որի, ինչպես ցույց են տալիս Հայոց նախընթաց պատմությունն ու իրադարձությունների վերլուծությունը, անհնար էր արդյունավետորեն դիմադրություն կազմակերպել եւ դիմագրավել խորհրդային կայսրության ռազմական մեքենային:

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե ինը տարիների բարձրությունից հեշտ դատողություններ ենք անում իրադարձությունների մասին: Հասկանալով ժամանակի եւ իրավիճակի ողջ բարդությունն ու ողբերգականությունը, ուզում ենք ապագա սերունդների համար վերհանել Գետաշենի անկման դասերը, սխալներն այլեւս չկրկնելու ցանկությամբ, մոլորություն համարելով մեզնից դուրս մեղավորներ փնտրելու, «աշխարհից» անպտուղ նեղանալու մտայնությունը:

Մայիսի 13-16-ը խորհրդային զորքերը եւ տխրահռչակ ՄՅՆՁ-ները բռնությամբ տեղահանեցին նաեւ Հադրութի շրջանի Ջրաբերդ(Աղբուլաղ), Քարինգ (Արփագյաղուկ), Առաքել, Բանագուր, Կարմրաքար (Բինյաթլար), Սարալանջ (Ջիլան), Արեւշատ (Դոլանլար), Քարագլուխ, Մյուլքուդարա, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Ծամձոր, Ցոր, Խանձաձոր գյուղերի բնակիչներին (1350 մարդ): Իսկ մայիսի 18-ին բռնատեղահանվեցին Շուշիի շրջանի Մեծ-շեն, Եղծահող, Կիրով գյուղերի 550 բնակիչները: Տեղահանությունից 2-3 օր առաջ, որպես կանոն, գյուղերը շրջափակվում էին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի կամ խորհրդային բանակի ստորաբաժանումների կողմից, իսկ ՄՅՆՁ-այիները խուժում էին գյուղ եւ խուզարկություններ, կողոպուտ, բռնություն-

ներ կատարելով, պահանջում գյուղացիներից՝ թողնել բնակության վայրը¹...

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հենց «Օղակ» ռազմագործողությունը տարածաշրջանում կտրուկ սրեց իրավիճակը, շեշտակի մեծացրեց լարվածությունը եւ դարաբաղյան հակամարտությունը փոխակերպեց ռազմական առձակատման, ապա եւ՝ պատերազմի...



Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Գետսան: Երևան, 1992 թ.

¹ Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов., с. 11,17,

ՎՈՒՄ ԵՐՐՈՐ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ադրբեջանի մի շարք քաղաքներում կազմակերպված հայ բնակչության ջարդերից ու տեղահանություններից, ԼՂԻՄ բնակավայրերի վրա ավազակային հարձակումներից հետո, ինքնապաշտպանության նպատակով սկսեցին ձեւավորվել զինված ջոկատներ ու մարտական շարժումակ խմբեր[8]: Այդ գործընթացը տարերայնորեն սկիզբ առավ նախ սահմանամերձ կամ ադրբեջանական գյուղերի հետ սահմանակից բնակավայրերում: Որսորդական հրացաններով ու ինքնաշեն զենքերով զինված խանդավառ ու նախաձեռնող մարդիկ, համախմբվելով, կամավոր ստանձնում էին գյուղի պաշտպանությունը, այդ իսկ նպատակով տանելով գիշերային հեթապահություն, հսկում հանրային ունեցվածքը, ապահովում բերքահավաքի, գյուղատնտեսական մյուս աշխատանքների, ճանապարհների ու ջրամբարների անվտանգությունը, մանավանդ, եթե դրանք դուրս էին մնում ԽՍՀՄ ՆԳՆ պահակախմբերի ուշադրությունից: Ինքնապաշտպանական ջոկատների ձեւավորման նախնական փուլում, որպես կանոն, միավորվում էին ազգակցական, ընկերական, դրացիական ու վստահություն ներշնչող այլ կապերով մերձեցած մարդիկ: Դա թելադրված էր ընդհատակում գործելու, գաղտնիության պահպանման եւ ՆԳՆ ներքին զորքերի հետապնդումներից խույս տալու անհրաժեշտությունից:

Ըստ նշանակության ու լուծելիք խնդիրների, կարելի է առանձնացնել ինքնապաշտպանական ջոկատների մի քանի տեսակ.

ա) Սահմանամերձ ու վտանգված բնակավայրերի բնակիչներից կազմված տեղայնական խմբեր, որ խնդիր ունեին պաշտպանել իրենց տունն ու ընտանիքը, ժողովրդատնտեսական կարելոր օբյեկտները, հանրային ունեցվածքը, ապահովել գյուղատնտեսական աշխատանքների ու անասնահոտերի պահպանության անվտանգությունը: Այս կարգի խմբերը, մեծամասամբ,

մարտական չէին, նրանց անդամները միայն դեպքից դեպք էին իրենց դերի մեջ մտնում, ավելի շատ զբաղվելով առօրյա հոգսերով ու խաղաղ ստեղծագործ աշխատանքով:

բ) Հիմնականում քաղաքաբնակներից ստեղծվում էին այնպիսի զինված խմբեր ու ջոկատներ, որ կամ օգնության էին հասնում վտանգված բնակավայրերի պաշտպաններին, կամ էլ կատարում էին զանազան մարտական առաջադրանքներ:

գ) Կային նաեւ հատուկ պատրաստություն անցած կամ զինվորական համապատասխան փորձ ունեցող եւ տարբեր վայրերից ժամանած հայ կամավորականների մարտունակ ջոկատներ, որ, ըստ անհրաժեշտության, գործում էին առավել վտանգված շրջաններում, հատկապես՝ Ղուխսային Արցախում, Հաղործի ծայրամասային, Շուշիի շրջանի հայկական գյուղերում եւ այլուր: Ի դեպ, ինչքան մեծ էր վտանգը եւ հաճախակի՝ հակառակորդի հարձակումները, այնքան կազմակերպված ու մարտական էր տվյալ վայրի ինքնապաշտպանական ջոկատը:

Այսպիսով, նախկին ԽՍՀՄ ղեկավար մարմինների թողտվությանը, Ադրբեջանական ԽՍՀ կողմից իրականացվող բռնությունների, կողոպուտի ու տեղահանությունների քաղաքականությունը, խորհրդային ներքին զորքերի ու ադրբեջանական ՄՅՆԶ-ի կամայականությունները ԼՂԻՄ-ում, տնտեսական շրջափակումը եւ նախապատրաստվող ագրեսիայի ահագնացող վտանգը արցախահայությանը կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու, ապա եւ՝ ինքնապաշտպանության ուժեր ստեղծելու անհրաժեշտության առաջ: Սակայն զինված կազմավորումներ ունենալու համար անհրաժեշտ էին զենք, զինամթերք, համապատասխան նյութատեխնիկական հենք, հարկ էր լուծել բազմաթիվ կազմակերպական-նախապատրաստական խնդիրներ, ինչը խորհրդային զորքերի ու ադրբեջանական ՄՅՆԶ-ի համապարփակ օղակման եւ դաժան վերահսկողության պայմաններում տեսականորեն անհնար էր: Այդուհանդերձ, հայ ժողովրդի լավագույն զավակների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ խոր ընդհատակում ձեռնարկել զենքի ու զինամթերքի հայթայթումը, կամավորական ջոկատների ստեղծումը եւ ինքնապաշտպանության գործի կազմակերպումն ու ղեկավարումը:

Խոջալուի եւ Կրկժանի 1988թ. սեպտեմբերի 18-ի ընդհարումներից, Շուշիի հայության տեղահանությունից հետո, երբ վտանգն անմիջականորեն սպառնում էր մարզկենտրոնին, այս-

տեղ եւս սկսեցին կազմակերպվել զինված ջոկատներ: Ինքնապաշտպանության գործի, ժողովրդի մարտունակ մասի զինման եւ արագ հակազդման ջոկատների ստեղծումը հիմնականում իրականացնում էին ընդհատակյա կազմակերպությունները, հատկապես՝ ՀՀ Դաշնակցությունը¹: Ադրբեջանական ավազակախմբերն արդեն արժանի հակահարված էին ստանում: Ադրբեջանի ղեկավարությունը, որ ձգտում էր հայաթափել նաեւ ԼՂ ինքնավար մարզը, մեկեն սարսափեց կազմակերպվող ժողովրդից եւ Կրեմլի միջոցով ավելի սաստկացրեց խաղաղ բնակչության ահաբեկումները, հալածանքներն ու հետապնդումները:

Ապահովվեց նաեւ կենտրոնական իշխանությունների անվերապահ աջակցությունը, ինչն իր արտահայտությունը գտավ ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովի 1990թ. հուլիսի 25-ի հրամանագրում, որով ԽՍՀՄ ՆԳ նախարարին իրավունք էր վերապահվում օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումները ցրելու, առկա զենքն ու զինամթերքը առգրավելու համար օգտագործել ներքին զորքեր, իսկ առանձին գործողություններում թույլատրվում էր նաեւ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների մասնակցությունը²: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ հրամանագիրը կիրառվեց իր օջախն ու տունը պաշտպանող հայ բնակչության նկատմամբ: Բնականաբար, Ադրբեջանական ԽՍՀ իրավասության տակ գտնվող տարածքներում «օրենսդրությամբ նախատեսված» հայկական զինված կազմավորումներ ստեղծելն այլեւս անհնար էր, իսկ ժողովրդի ինքնապաշտպանության փորձերն օրենքից դուրս էին դիտվում:

Այդուհանդերձ, գաղտնի գործող փոքրաթիվ կամավորականները, ոգեւորված ֆիդայական շարժման գաղափարներով, բազմաթիվ մանր ու մեծ ընդհարումներում սխրագործությունների ու անձնվիրության հրաշալի օրինակներ էին տալիս: Սակայն «Օղակ» ռազմագործողությունը եւ Հայաստանի սահմաններում իրադրության կտրուկ բարդացումը ցույց տվեցին, որ ինքնապաշտպանության գործն ինքնահոսի մատնելը կարող է ճակատագրական լինել: Խանդավառությունը, նախաձեռնողականությունը, նվիրումը բավարար չէին ժողովրդի պաշտպանության

¹ Տես ՀՀ Դաշնակցությունը եւ արցախյան դաժնագրի սկիզբը (1988-1998): «Ազգայն» քաղաքիկ, 20 փետրուար, 1998, էջ 7-8

² Նվառդ Սողոմոնյան, նւզ. զիրք, էջ 27-28:

գործը հիմնավորապես կազմակերպելու համար: Պետական, համազգային վերաբերմունք ու ջանքեր էին անհրաժեշտ: Այս առումով կարելուք քայլ էր 1991թ. մայիսի 4-ին Պաշտպանության կոմիտեի ստեղծումը, որն իբրեւ համակարգող, կազմակերպող ու ղեկավարող համազգային մարմին, անմիջապես ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության ոլորտում ծառայած բազմաթիվ ու տարաբնույթ, հաճախ բարդ խնդիրների լուծմանը: Կոմիտեի առաջնահերթ խնդիրներից էին նաեւ Շահումյանի շրջանի պաշտպանության կազմակերպման, այնտեղ Շահեն Մեղրյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող կամավորական ջոկատների ղեկավարման աշխատանքներին օժանդակելը, ինչպես նաեւ վտանգված սահմանային շրջանների անվտանգության ապահովումը¹:

1991թ. սկզբներին Ադրբեջանը ազգային բանակ էր կազմավորում, բռնագրավելով իր տարածքում տեղակայված խորհրդային զորամասերի գեներն ու զինամթերքը: Տարվա ընթացքում միութենական լրատվամիջոցները բազմաթիվ հաղորդումներով անդրադառնում ու ծանուցում էին Գանձակի ու Քյուրդամիրի, Բաքվի ու Ապշերոնի խորհրդային զորանոցների ու զինապահեստների կողոպուտների մասին²:

Ադրբեջանական բանակի ստեղծումը եւ նախապես նրա ահռելի զինավառության ապահովումը մատնում էին հարեւան պետության եռանդագին նախապատրաստությունները պատերազմին, որը սանձազերծվեց տխրահռչակ «Օղակ» ռազմագործողությամբ ու հետագա զարգացումներն ունեցավ 1991թ. ամառային պատերազմաշրջանում...

¹ Տես «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ դաստիարակ, թիվ 19, 1999թ.,

² Բ. Ուրուբաբյան, Արցախի դաժնությունը, էջ 335

ՉԼՈՒԽ ԶՈՐՐՈՐ

1991 Թ. ԱՍՏՈՒՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆԸ

1991 թ. հունիսի սկզբներին իրավիճակն Արցախում շարունակում էր մնալ լարված: Հաղրութի շրջանի գյուղերի վրա չդադարող հարձակումներին վերստին գումարվեցին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի սադրանքները: Հաղրութի զինվորական պարետը հունիսի 2-ին պահանջում էր շրջանի վտանգված գյուղերից հեռացնել բնակչությանը: Ի հեճուկս նրան, մոտ 100 ընտանիք վերադարձավ Քարինգ, Առաքել, Խծաբերդ, Ցոր, Սպիտակաշեն եւ Բանազուր գյուղերը: Չէին դադարում նաեւ հարձակումները Շահումյանի, Մարտունու շրջանների ու Ստեփանակերտի վրա¹:

1991 թ. հունիսի առաջին օրերին ԼՂԻՄ գործկոմի շենքում հավաքվեցին ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի մի խումբ անդամներ ու մարզի ղեկավար աշխատողներ եւ պայմանավորվեցին համախմբել բոլոր ուժերն ու միջոցները մարզի խաղաղ բնակչության անվտանգության խնդիրը լուծելու համար²: Մարզի կոմունիստ ղեկավարներից մեկը՝ Հենրիխ Պողոսյանը ազդարարում էր, որ «ծնվում են նոր քաղաքական ուժեր, որոնք քննադատաբար են գնահատում ԼՂԻՄ-ի ղեկավարության նախկին քաղաքականությունը եւ գտնում են, որ հիմա էլ դեռ ուշ չէ բռնել կառուցողական քաղաքական երկխոսության, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կենտրոնական մարմինների բոլոր որոշումների, մասնավորապես՝ 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշման[9] պաշտպանության ուղին: Այս հայտնի փաստաթղթում կան ռացիոնալ հատիկներ, եւ դրանց հիման վրա, կենտրոնի միջնորդությամբ, ինչպես ինքնավար մարզի ու Ադրբեջանի, այնպես էլ, ըստ երեւույթին, Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ երկխոսության ծավալումը եւ հարաբերությունների նորմալացումը կհամապատասխանեին երկու ժողովուրդների շահերին»³: Հ. Պողոսյանն առանձնակի ուշադրություն էր հրավիրում մարզի օրինական իշխանու-

¹ Բ. Ուրուբաբյան, նույն զինվոր, էջ 240

² Վ. Բ. Հարությունյան, նույն զինվոր, էջ 25-26

³ Բ. Ուրուբաբյան, նույն զինվոր, էջ 238

թյան՝ մարզխորհրդի գործկոմի վրա, ցույց տալով, որ վերին իշխանությունների կողմից նրա անտեսումը հակաօրինական է, եւ պետք է հենց կենտրոնում գործող սահմանադրական մարմիններին ստիպել, որ վերականգնեն մարզխորհուրդին՝ իր գործադիր կոմիտեով եւ մյուս կառույցներով:

Մարզգործկոմում հավաքված ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ Ստեփանակերտում ու շրջաններում հայտնի աշխատողներն ու ղեկավարները քննարկեցին մարզում ստեղծված աղետալի իրավիճակը: Քննարկումների արդյունքում ակտիվը հանգեց այն եզրակացությանը, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ է ձեռնարկել կազմակերպական շտապ միջոցներ եւ ամրապնդել մարզի ղեկավարության դիրքերը: 1991 թ. հունիսի 11-ին ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի ընդլայնված նիստը նախագահի պարտականությունները դրեց նրա առաջին տեղակալ Լեոնարդ Պետրոսյանի վրա, որը գործկոմի անդամների հետ ձեռնամուխ եղավ ռազմական ու տնտեսական ծանր քառսից մարզը դուրս բերելու միջոցառումների մշակմանն ու կազմակերպմանը¹: Մարզի ղեկավար աշխատողների խորհրդակցությունը որոշեց նաեւ բանակցություններ սկսել Ադրբեջանական ԽՍՀ կազմկոմիտեի հետ՝ մարզի վիճակը տանելի դարձնելու համար: Սակայն դա խափանվեց Վ. Պոլյանիչկոյի կողմից[10]:

Չէին դադարում նաեւ մարտական գործողությունները: Հունիսի 5-ին Խծաբերդն ու Հին Թաղերը գնդակոծվեցին ԽՍՀ ՋՈՒ ուղղաթիռներից: Չինվորական պարետը շարունակ առաջարկում էր բնակչությունը տեղափոխել անվտանգ վայրեր, ինչի համար խոստանում էր տրամադրել բեռնատար մեքենաներ: Սակայն Հին Թաղերի բնակիչները վճռել էին մնալ ու դիմադրել: Իսկ Խանձածորում, Առաքելում ու Արեւշատում նստած էին ադրբեջանցի ՄՅՆՁ-այինները: Հունիսի 6-ին ՄՅՆՁ-այինների հարձակումը Հադրութի շրջանի Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերի վրա հնարավոր եղավ կասեցնել մասամբ: Ինքնապաշտպանական ջոկատների դեռեւս անփորձ մարտիկները ստիպված էին կանանց ու երեխաներին հեռացնել Խծաբերդից, ուր շրջանի պարետը նպատակ ուներ ստեղծել պահակակետ: Խաղաղ բնակչության «հոգսից» ազատված Խծաբերդի մարտիկները լավ ջարդ տվեցին ադրբեջանցի զինյալներին...

¹ Վ.Բ. Հարությունյան, նւյ. գիրք, էջ 26

Հունիսի 7-ին ադրբեջանական ՄՅՆՁ-ները եւ Ֆիզուլու շրջանից օգնության եկած ավազակախմբերը, պաշարելով Խծաբերդն ու Հին Թաղերը, բնակիչներին առաջարկեցին հեռանալ: Սակայն նրանք հերոսաբար պաշտպանվում էին ժամ առ ժամ աճող թշնամական ուժերի հարձակումներից: Հադրութի զինվորական պարետը չէր հրաժարվում հոգեբանական ճնշումներից եւ շարունակ առաջարկում էր գաղթեցնել բնակչությանը, պատճառաբանելով, թե, իբր, Ջաբրայիլի ու Լաչինի կողմերից նոր, խոշոր հարձակում է սպասվում:

Իսկ կենտրոնի, այսպես կոչված, դիտորդների հանձնաժողովը (նախագահ՝ Վ. Ֆոտեւեւ, պատգամավորներ Օ. Վոստրոուխով, Վ. Կիրիլով, Գե. նախագահի խորհրդական Մ. Սոկոլով), մեղմ ասած՝ ինքն իրեն անգործության էր մատնել¹: Այս փաստերը վկայում են Մոսկվայի ու Բաքվի կողմից համատեղ իրականացվող տեղահանությունների, հայ բնակչության ահաբեկումների քաղաքականության մասին: Իսկ դատարկված հայկական գյուղերն անմիջապես բնակեցվում էին ադրբեջանցիներով՝ մարզի ազգագրական կազմը փոխելու հեռագնա նպատակով: Այսպես, Բաքվի թերթերից մեկում փաստեր են բերվում այն մասին, որ Բերդաձորի ենթաշրջանի հայկական եղծահող, Ղարաղլաղ եւ Կիրով գյուղերում, վերջին օրերի ընթացքում բնակեցվել են, համապատասխանաբար՝ 32, 49, 51, իսկ Հադրութի շրջանի Արեւշատ, Առաքել եւ Բանագուր գյուղերում՝ 245 ադրբեջանական ընտանիքներ, Գետաշենում՝ 3000 ադրբեջանցիներ²: Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը հայաթափելուց հետո դրանք ադրբեջանցիներով բնակեցնելու, այդ միջոցով իր տիրապետությունը երկրամասում հաստատելու՝ Ադրբեջանի փորձերն ու նկրտումները ձախողման էին դատապարտված, քանզի ամբողջ ժողովուրդը կանգնեց իր հայրենիքի պաշտպանության դիրքերում, իսկ համախմբված ժողովուրդն անպարտելի է...

Մինչդեռ, շարունակվում էր ծանր կացությունից դուրս գալու ուղիների որոնումը: Հունիսի 19-ին Լեռնային Ղարաբաղի ժողպատգամավորների ընդլայնված նիստում մշակվեց արցախահայության գոյատևման ծրագիր: Դա անհրաժեշտություն էր եւ շատ կարեւոր նախաձեռնություն, քանզի ապրիլ-մայիսյան իրադարձությունները ցույց տվեցին, որ մարզային եւ տեղական իշխանու-

¹ Բ. Ուրտարյան, նւյ. գիրք, էջ 241-242

² “Бакинский рабочий”, № 112, 1991 թ.

թյունների կազմալուծման պատճառով, ժողովուրդը միանգամայն պատրաստ չէր զինված դիմադրություն ցույց տալ ԽՍՀՄ ՁՈՒ եւ ԵԳՆ զորքերի աջակցությամբ իրականացվող լայնածավալ ագրեսիային: Ծրագրում նախատեսվում էին կարգավորել մարզի քաղաքական ու տնտեսական վիճակը եւ տիրահռչակ «Օղակ» ռազմագործողության հետագա ծավալումը կասեցնելու միջոցները: Դրա համար, նախ եւ առաջ, անհրաժեշտ էր ԽՍՀՄ ղեկավարության միջոցով հասնել մարզգործկոմի եւ ժողպատգամավորների մարզխորհրդի վերականգնմանը, անցկացնել Մարզխորհրդի ժողպատգամավորների ընտրություն, ժողովրդի ցանկությունների հաշվառմամբ, մարզի նորընտիր ղեկավարության ուժերով մշակել Արցախի գոյատևման իրատեսական ծրագիր, հավուր պատշաճի նախապատրաստվել զինված ինքնապաշտպանության¹:

Մոսկվայում Ադրբեջանի ներկայացուցիչների հետ բանակցությունները չկայացան: Կենտրոնական իշխանությունները ստիպեցին բանակցությունները վարել Բաքվում: Դրան համաձայնություն տալը եւ Բաքու մեկնելու քայլը, թեեւ Արցախում միանշանակ չընդունվեցին, սակայն, նպաստեցին ժամանակավոր խաղաղության հասնելուն: Բանակցությունների ընթացքում, խիստ շրջափակման մեջ գտնվող ԼՂԻՄ-ը ստացավ մեծ քանակությամբ սնունդամթերք ու վառելիքաքսայուղային նյութեր, որոնց մի մասը պահեստավորվեց պաշտպանության կարիքների համար: Այդ ընթացքում, մարզի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով, հայթայթվեց նաեւ զենք ու զինամթերք²:

Մարզի ղեկավարությունը, հունիսի 22-ին պատվիրակություն առաքեց Մոսկվա՝ ԽՍՀՄ ղեկավարության հետ հանդիպելու եւ իշխանության մարզային մարմինների վերականգնման ու դառաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ ադրբեջանական կողմի հետ երկխոսության հնարավորության մասին պայմանավորվելու նպատակով: Մինչեւ հուլիսի 14-ը ԼՂԻՄ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ԽՍՀՄ տարբեր ղեկավար շրջանների, նախարարների եւ պատասխանատու աշխատողների հետ³:

¹ Վ.Բ.Հարությունյան, *ն.մ.* զիրք, էջ 32

² Նույն տեղում, էջ 32-33

³ Նույն տեղում, էջ 37-40

Սակայն, թե՛ մոսկովյան այս բանակցությունները եւ թե՛ Ադրբեջանի ղեկավարության հետ երկխոսության փորձերը ցանկալի արդյունք չտվեցին, իսկ զինված ընդհարումներն ու արյունահեղությունը շարունակվում էին...

Այդուհանդերձ, 1991 թ. հուլիսի 4-ին, ԽՍՀՄ նախագահի հրամանագրով Շահումյանի շրջանում վերացվեց արտակարգ դրության ռեժիմը: Հուլիսի 6-ին, երբ խորհրդային զորամասերը հեռացան շրջանից, սահմանամերձ գյուղերին մոտեցան ադրբեջանական ՄՅՆՋ-այիններն ու հարեան շրջանների ավազակախմբերը: Նոր թափ ստացան լայնածավալ հարձակումներն ու հրետակոծությունները: Իսկ մինչ այդ, ադրբեջանցիները հասցրել էին անջատել էլեկտրականությունը, կապի միջոցները ու կտրել հաղորդակցության ուղիները: Ձինվորական ստուգիչ անցակետերի ցանցով Շահումյանի շրջանը մեկուսացվեց նաեւ Արցախից... Արտաքին աշխարհի հետ միակ կապն ապահովում էին Մոսկվի անտառածածկ փեշերի վրայով վտանգավոր թռիչքներ կատարող ուղղաթիռները, տեղափոխելով շրջանի պաշտպանության եւ բնակչության կենսապահովման համար անհրաժեշտ բեռներ:

ԽՍՀՄ ներքին զորքերի հեռանալուց հետո, ՄՅՆՋ-այինները սկսեցին գնդակոծել, իսկ հուլիսի 6-ին փորձեցին ներխուժել Մանաշիդ, Էրքեջ եւ Բուզլուխ գյուղերի բնակելի թաղամասերը: Այդ գործողությանը մասնակցում էին մի քանի հարյուր ՄՅՆՋ-ային, Ադրբեջանի ԵԳ նախարարի տեղակալը եւ Գերանբոյի[11] կուսընկերների առաջին քարտուղարը: Հայերի ինքնապաշտպանության ջոկատներն արժանի հակահարված հասցրին հակառակորդին՝ հետ շարտելով նրան¹: Սակայն, նույն օրը ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Դ. Յազովը հրաման արձակեց Շահումյանի շրջան թռիչքները դադարեցնելու մասին, ինչը դավադիր հարված էր հայ մարտիկների թիկունքին:

Հուլիսի 13-ին, Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերում տեղակայվեցին խորհրդային բանակի նոր ստորաբաժանումներ, ակնհայտորեն հայերին տեղահանելու Ադրբեջանի քաղաքականությունն իրագործելու հանձնարարությամբ ու նպատակով: Խորհրդային սպաները պահանջում ու հարկադրում էին բնակիչներին մինչեւ ամսվա 15-ը թողնել իրենց բնակավայրերը, խոստանալով միջոցներ տրամադրել Հայաստան տեղափոխվելու հա-

¹ «Մոսկվի Ղոթանցներ», թիվ 7, 1994 թ.:

մար: Նույն բովանդակությամբ թռուցիկներ էին նետվում նաեւ այդ գյուղերի վրա թեւածող ուղղաթիռներից:

Հուլիսի 14-ին, առանց սպասելու իրենց իսկ սահմանած ժամկետը լրանալուն, խորհրդային բանակի զինվորները եւ ադրբեջանական ՄՅՆՁ-այինները ներխուժեցին Մանաշիղ եւ Բուզլուխ գյուղերը, տեղահանեցին բնակիչներին, որոնք ստիպված եղան պատսպարվել հարեւան վերին-շենում: Լքված գյուղերն անմիջապես կողոպտվեցին մոտակա ադրբեջանական գյուղերից եկած ավարառուների կողմից:

Հուլիսի 15-ին, հրետամային նախապատրաստությունից հետո, խորհրդային բանակայիններն ու ՄՅՆՁ-այինները ներխուժեցին Էրքեջ, սակայն համառ դիմադրության հանդիպելով, հարկադրված նահանջեցին Թոդան գյուղի ուղղությամբ, կրելով կենդանի ուժի զգալի կորուստներ¹:

Ազրեսորների գործողությունները քողարկվում ու արդարացվում էին համապատասխան քարոզչությամբ: Մասնավորապես, ԽՍՀՄ տարբեր լրատվամիջոցներով հայտարարվում էր, թե Բուզլուխ, Մանաշիղ եւ Էրքեջ գյուղերում, իբր, արդեն խաղաղ բնակչություն չկա, բացի հայ «գրոհայիններից»: Ադրբեջանի ղեկավարությունը վարպետորեն օգտվեց ԽՍՀՄ-ում տիրող խառնակ իրավիճակից (ղեկավարությունը հանգստանում էր Ղրիմում, իսկ Գ. Յանաեւը, Ա. Լուկյանովը, Վ. Պավլովը, Գ. Յազովը, Վ. Կրյուչկովը, Բ. Պուզոն եւ այլք, տենդագին նախապատրաստվում էին հեղաշրջման), խորհրդային զորքերի օգնությամբ, իրականացրեց հիշյալ գյուղերի հայ բնակչության բռնի տեղահանության չարաղետ ծրագիրը:

Սակայն այդ գյուղերը հեշտությամբ չզիջվեցին թշնամուն: Ուժերի անհամեմատելի գերակշռությամբ հանդերձ, հակառակորդը չհամարձակվեց մտնել Էրքեջ, զգուշանալով Բուզլուխի ու Մանաշիղի շրջակա անտառապատ բլրալանջերից սպասվող հակահարվածներից: Թիկունքն ապահովելու համար, ադրբեջանցիները հապշտապ պահակակետեր կարգեցին Էրքեջ տանող ճանապարհներին: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերի ղեկավարությունը, տեւական քննարկումներից հետո, վճռեց թույլ չտալ

¹ Նույն տեղում, էջ 251:

Ըստ Բ.Ուրուբաբյանի, Էրբեջում դարձիզաններն իսկական մահ սկեցին խորհրդային բանակի գերազանցող ուժերին, շարից հանելով 3 գրահամեմատ եւ մեկ նազմական ուղղաթիռ (էջ 254), ինչը, սակայն, էիջ հավանական է թվում...

թշնամուն՝ անպատիժ մտնել գյուղ: Այդ վճիռը պայմանավորված էր նրանով, որ Էրքեջն ավելի ստվար բնակչություն ուներ եւ ավելի մոտ էր շրջանի մյուս հայկական բնակավայրերին, ուստի, նրա անկումը սպառնալիք կստեղծեր նաեւ վերջիններիս համար: Մյուս կողմից, անհրաժեշտ էր օգտվել գյուղը պաշտպանելու իրական հնարավորությունից եւ հակառակորդին մի լավ դաս տալ:

Հուլիսի 25-ի կեսօրին, մի քանի զրահամեքենաներից միաժամանակ բացված կրակի աջակցությամբ, ՄՅՆՁ-այիններն անցան հարձակման: Գյուղի պաշտպանները, Ջիվան Աբրահամյանի ղեկավարությամբ, շարունակում էին դիմադրել անգամ փլված տանիքների ու պատերի հետեւից¹: Կազմակերպված դիմադրության հանդիպելով, ադրբեջանցի գրոհայինները խուճապի մատնվեցին: Անակնկալի եկան նաեւ խորհրդային բանակի ստորաբաժանումները: Հակատանկային նռնակներով շարքից հանվեց զրահամեքենաներից մեկը, որից հետո հակառակորդի զրահատեխնիկական նահանջեց եւ սկսեց կրակել հեռվից: Շրջապատումից խուսափելու համար սակավաթիվ հայկական ջոկատները եւս հարկադրված եղան նահանջել վերին-շենի կողմը²:

Նախնական հաջողությունից ոգեւորված Ադրբեջանի ղեկավարությունը եւ նրա հայեցողությանը հանձնված խորհրդային բանակի ստորաբաժանումները փորձում էին շարունակել առաջխաղացումը եւ հասնել Շահումյանի շրջանի լիակատար հայաթափմանը: Այսպես, հուլիսի վերջերին հակառակորդը մոտեցավ վերին-շենին: Հատուկ նշանակության զորամասերն ուղղաթիռներով իջազորը հասցրին մոտակա Երկար - բարձունք: Քիչ հեռվում երեւացին նաեւ տանկերը: Շատ ցածր պտտվող ռազմական ուղղաթիռները հոգեբանորեն ազդում էին բնակչության վրա, ստիպելով սարսափահար թողնել ու հեռանալ իրենց օջախներից: Ինքնապաշտպանության մարտիկները կրակ բացեցին ուղղաթիռների, տանկերի վրա, որոնց աջակցությամբ հակառակորդը հարձակման էր անցել: Թեւեւ այն հետ մղվեց, սակայն մարտերը դեռ երկար շարունակվեցին: Հայ մարտիկներն, ի վերջո, ամրացան Երկար կոչվող բարձունքում: Տեխնիկապես ու թվապես գերակշռող թշնամին պարտվեց նախեւառաջ հայ ազատամարտիկների ոգու

¹ «Ազգային հերոսներ» մասնագետ, Ավեսաբերներ (Դիմանկարների ժողովածու): «Հայ գինիոր», Երևան 1997, էջ 52-53

² Վ. Գեղիկյան, Ինչո՞ք ն նոտանեց յարասնակր: «Ազգակ» բացատիկ, 20 փետրուար 1998, էջ 16-17

եւ կամքի առաջ... Այդ մարտն օգնեց շրջանի բնակչությանը՝ ուշքի գալ: Ինքնապաշտպանական ջոկատներն սկսեցին արագ համալրվել: Բարձրագույն մարտիկների փորձառությունը եւ մարտական ոգին: Հայաստանից ու Արցախից նորանոր ջոկատներ եկան օգնության, սատար կանգնեցին ծանր օրեր ապրող հայրենակիցներին եւ համատեղ դիմագրավեցին թշնամուն¹:

Խորհրդաադրբեջանական ագրեսիայի հետեւանքով ամառացած հայկական բնակավայրերն անմիջապես բնակեցվում էին ադրբեջանցիներով: Ադրբեջանի ղեկավարները այդ քաղաքականությունը թաքցնելու կամ քողարկելու կարիք չէին զգում: Այլապես, Ադրբեջանի ՆԳ նախարար Ս. Ասադովը չէր հաղորդի, որ Շահումյանի շրջանի էրբեջ, Բուզլուխ եւ Մանաշիդ գյուղերն արդեն բնակեցվել են ադրբեջանցիներով²:

Հուլիսի վերջին ԼՂԻՄ Ազգային խորհրդի «Պ» (այսինքն՝ պաշտպանություն) ժամանակավոր խմբի հիման վրա ստեղծվեց ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե, ինչը թելադրված էր ադրբեջանական բանակի ճնշմանն ու հարձակումներին դիմագրավելու համար մարզի պաշտպանությունը նոր մակարդակով կազմակերպելու անհրաժեշտությամբ: Այդ իսկ նպատակով կազմակերպվեց ինքնապաշտպանության ուժերի շտաբ, որի կազմի մեջ մտան Ռ. Քոչարյանը, Ս. Սարգսյանը, Գ. Պետրոսյանը, Վ. Բալայանը, Ս. Պետրոսյանը եւ այլք³: Նորաստեղծ շտաբը սկզբում կազմավորում ու զինում էր արագ հակազդման ջոկատներ: Մարզի բոլոր շրջաններում եւ Ստեփանակերտում դրանց թվաքանակը օրըստօրե աճում էր, քանի որ ցանկացողները շատ էին: Մարզի գրեթե բոլոր հասուն տղամարդիկ կամավոր խանդավառությամբ ցանկություն էին հայտնում կանգնել հայրենիքի, իրենց ընտանիքների, երեխաների պաշտպանության դիրքերում: Սակայն զենքը չէր հերիքում... Ինքնապաշտպանության հարածուն պահանջները բավարարելու համար անհրաժեշտ էր ձեւավորել կանոնավոր բանակ: Դրա համար նպաստավոր հիմքեր ստեղծեցին Շահումյանի շրջանում եւ Արցախի այլ վայրերում ընթացող պաշտպանական համառ մարտերը, որոնց բովում թրծվում էին ապագա հրամանատարները, համապատասխան մարտավարական փորձ էր ձեռք բերվում եւ սկսում էր ձեւավորվել կյանքի պա-

¹ Սեդրակ Նանսզույան, Շահեն, էջ 82-84

² Վ. Բ. Հարությունյան, նւյլ. գիրք, էջ 50

³ Նույն տեղում, էջ 40-41

հանջներին համապատասխանող ռազմավարություն ու համապատասխան քաղաքականություն: Ինքնապաշտպանական ջոկատները դեռ երկար ու ծանր փորձություններով հագեցված ճանապարհ ունեին անցնելու... [12]

Հուլիսի վերջին օրերը նշանավորվեցին նաեւ նրանով, որ երեւան եկան պարտիզանական ջոկատներ, որոնցից անուն հանեցին «Գետաշենցի վրիժառուները»: Այդ ջոկատներից մեկը հուլիսի 29-ին արժանի պատժի ենթարկեց էրբեջ գյուղի զավթիչներին, սպանելով 7 եւ վիրավորելով 10-ից ավելի ՄՅՆՋ-այիններ: Իսկ հուլիսի 30-ին մի այլ պարտիզանական խումբ Հադրութի շրջանում անակնկալ մտավ Ցոր գյուղը, ոչնչացնելով 2 եւ գերեվարելով 5 զավթիչ¹: Աստիճանաբար սկսում էր իրեն զգացնել տալ կազմակերպվող ինքնապաշտպանությունը, որի հատու ուժը թշնամին դեռ պիտի շատ զգար:

1991 թ. օգոստոսի սկզբներին ԽՍՀՄ ՆԳՆ եւ Ադրբեջանի ՄՅՆՋ զորամասերը շրջապատեցին Մարտակերտի շրջանի Հաթերք եւ Վերին Հոռաթաղ գյուղերը եւ գրոհի անցնելով, պատանդ վերցրին ինքնապաշտպանության ջոկատի 15 անդամների: Պատասխան գործողությամբ, նույն ջոկատի՝ ազատության մեջ մնացած մարտիկները, գյուղի կանանց աջակցությամբ, օգոստոսի 13-ին շրջապատեցին խորհրդային մի զորամաս ու պատանդ վերցրին ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի 33 սպա եւ զինվոր, առգրավեցին մեկ զրահափոխադրիչ, մեկ նռնականետ եւ 29 ավտոմատ², պահանջ դնելով ազատ արձակել հայ պատանդներին: Վերին Հոռաթաղի կանայք եւ ջոկատի մարտիկները զինաթափեցին 13 զինվորական, որոնք ազատ արձակվեցին օգոստոսի 23-ին՝ առանց մարտական զենքերի... Իսկ Հաթերքում բանակցությունները շարունակվեցին մինչեւ օգոստոսի 18-ը, երբ երեկոյան մոտակա Իմերեթ – Քերեվենդ եւ Ումութլու ադրբեջանաբնակ գյուղերից շուրջ 100 միավոր ռազմական տեխնիկա ու մեծ թվով զինծառայողներ սպառնալից շրջապատեցին գյուղը: Օգոստոսի 20-ին կատարվեց պատանդների փոխանակություն, վերացվեց Հաթերքի պաշարումը: Մեծ աղմուկ հանած այս ձեռնարկումն ինքնահաստատման ու սեփական ուժերի նկատմամբ հավատի վերականգնման, կազմակերպվող ինքնապաշտպանական ուժերի առնականացման մի

¹ Նույն տեղում, էջ 60-61

² «Արցախ» հանդես, №1, 1992, էջ 17

վկայություն էր: Թերեւս, հեղաշրջման օգոստոսի 19-ի փորձը եւ Արտակարգ դրության պետական կոմիտեի (տխրահռչակ ԳԿՉՊ-ի) ստեղծումը խանգարեցին Հաթերքի ինքնապաշտպանների բուն նպատակների իրագործմանը:

4. Պոլյանիչկոյի անունից, նրա տեղակալ Մ. Ռադաեւը, ձեռնամուխ եղավ ԱԴՊԿ-ի որոշումները մարզում իրագործելուն¹: Սեւ ամպեր էին կուտակվում Արցախի երկնակամարում, եւ հայտնի չէր, թե ինչպես էր փոխնախագահ Գ. Յանաեւը մեկ շաբաթվա ընթացքում լուծելու Լեռնային Ղարաբաղի հարցը, թեւ կարելի էր կռահել, որ՝ ոչ հայերի օգտին, քանզի Ադրբեջանի ղեկավար շրջանները սկսել էին շողոքորթել ԱԴՊԿ-ի պարագլուխներին: Բարեբախտաբար, հաղթող հանդիսացան Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը, ինչի շնորհիվ, թերեւս շատ աղետներ կանխվեցին... Բայց եւ այնպէս, ճակատագրական օգոստոսի 21-ից հետո էլ Արցախում իրադրությունը ծայրաստիճան լարված էր մնում:

ՂՈՒՄ ՀԻՆՔԵՐՈՐԳ

ԼՂԸ ԸՈՉԱԿՈՒՄԸ: ԻՆՔՆԱՊԱՅՏՊԱՆԱԿԱՆ ՈՒՇԵՐԻ ՇԱՄԱՐԺԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ^[13]

1988 թ. փետրվարին անկասելիորեն սկսված ազգային ազատագրական պայքարի նոր փուլում ժողովրդական զանգվածները համախմբվեցին Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորման գաղափարի շուրջ: Սակայն պաշտոնական Մոսկվայի ու Բաքվի միտումնավոր քաղաքականությունը, համաժողովրդական Շարժումն արյան մեջ խեղդելու նրանց փորձերը հանգեցրին ոչ միայն պայքարի ձեւերի ու մեթոդների, այլեւ բուն իսկ գաղափարաբանության վերանայմանը: Ստեղծված իրադրությունում Շարժման ղեկավարները կայացրին միակ ճիշտ ու հեռանկարային վճիռը՝ հռչակել անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն...

Մինչդեռ շարունակվում էր Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, ադրբեջանական հրոսակախմբերը վխտում էին հաղորդակցության ճանապարհներին, խոչընդոտում էրթեւեկությանը, չէին դադարում ավազակային հարձակումները խաղաղ բնակավայրերի վրա, դաշտային աշխատանքներով զբաղված մարդկանց եւ ուղեւորների առեւանգումները: ԽՍՀՄ 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի ստորաբաժանումները, ասես, ի հեճուկս պաշտպանության նոր նախարար եվզ. Շապոշնիկովի եւ անտեսելով կրակի դադարեցման մասին նրա հրամանը, մարտական գործողություններ էին վարում Շահումյանի շրջանում, հատկապէս՝ Վերին-շեն գյուղի ուղղությամբ:

1991 թ. օգոստոսի 28-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում՝ հռչակագիր Ադրբեջանական Հանրապետության անկախությունը վերականգնելու մասին: Փաստորեն, Ադրբեջանը ԽՍՀՄ կազմից դուրս էր գալիս առանց հանրաքվեի: Իսկ դա ամենահարմար առիթն էր անկախ պետություն ստեղծելու որոշմանը հանգած Շարժման ղեկավարների համար՝ դիմել համապատասխան քայլերի, մանավանդ, որ նախադեպը տալիս էր Լեռնային Ղարաբաղի անկախության թիվ 1 հակառակորդը: Դեռեւս 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ ԳԽ-ի կողմից ընդունված որոշմամբ, Միությունից դուրս եկող հանրապետության ազգային-վարչական միավորները լիակատար իրավունք էին ստացել՝ տնօրինել իրենց ճակա-

¹ Վ. Բ. Հարությունյան, *Նով. գիրք*, էջ 40, 65

տագիրը... Եվ ԼՂԻՄ-ի հայությունն օգտվեց անկախացող Ադրբեջանից օրինական ճանապարհով բաժանվելու իր իրավունքից եւ դարձավ սեփական ճակատագրի տերը: Մյուս կողմից, քանի որ Ադրբեջանն անկախություն էր հռչակում 1918-20 թթ. հավակնած սահմաններում, այսինքն՝ հրաժարվում էր լինել Ադր. ԽՍՀ իրավահաջորդը, ապա նրա իրավունքները չէին տարածվում ամբողջ Ղարաբաղի (ինչպես նաև՝ Նախիջևանի) վրա, քանզի վերջիններս 1918-20թթ. չեն եղել Ադրբեջանի կազմում¹: 1991թ. սեպտեմբերի 2-ի երեկոյան տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ: Ընդունվեցին որոշում եւ հռչակագիր՝ ԼՂԻՄ-ի եւ հարակից Շահումյանի շրջանի պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմիններ կազմակերպելու մասին: Նստաշրջանը համապատասխան դիմումներ հղեց ԽՍՀՄ ժողպատգամավորների 5-րդ արտակարգ համագումարին, Ռուսաստանի նախագահին, ԼՂՀ եւ ադրբեջանական ժողովուրդներին²: ԼՂՀ հռչակումը դեպի իրական անկախություն կատարված առաջին կարեւոր քայլն էր, որին այնուհետեւ հաջորդեցին իրավաբանական, քաղաքական, ռազմական ու դիվանագիտական փուլերը...

Պատմական այս իրադարձությանն անդրադառնալիս հարկ է պարզաբանել մի հարց եւս: Մենք տեսանք, որ մարզի քաղաքական ղեկավարների ջանքերը՝ ուղղված օրինական իշխանության ու տեղական կառավարման մարմինների վերականգնմանը, հաջողություն չունեցան: Պաշտոնական Մոսկվան շարունակում էր ճանաչել միայն տխրահռչակ Կազմկոմիտեին: Սակայն, նախագահ Ս. Գորբաչովի տապալումից եւ իշխանությունը ԱԳՊԿ-ի կողմից զավթվելուց, մանավանդ՝ ժողովրդավարական ուժերի հաղթանակից հետո, ԼՂԻՄ Կազմկոմիտեն քաղաքական վախճան ապրեց, քանի որ յուր ժամանակին պատրաստակամություն էր հանդես բերել համագործակցելու խռովարարների հետ եւ, ի վերջո, կրախի մատնվեց: ԽՍՀՄ-ում առաջացած քաղաքական ճգնաժամի պայմաններում, երբեք էլ Ադրբեջանի Կազմկոմիտեն չընդունած արցախահայությունը վերականգնեց օրինական իշխանությունը՝ հանձին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի [14]:

1. Տես Ա. Ս. Մանասյան, Ղարաբաղյան հակամարտությունը դաժնահատուկ կան եւ իրավական ճեղքանկումներից: Ղարաբաղ. հակամարտություն-համաձայնություն: Երեւան, 1997, էջ 12-21
 2. «Արցախ» հանդես, № 1, 1992, էջ 18

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը հռչակվեց արցախահայության համար դժվարին ժամանակահատվածում, ռազմաքաղաքական բարդ պայմաններում:

Այդուհանդերձ, անկախ պետականության վերականգնումը նոր խթան հանդիսացավ հակառակորդի ագրեսիային դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ու խաղաղ աշխատանքն ապահովելու համար: Այն առավել լայն ասպարեզ բացեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորման ու պաշտպանական գործուն համակարգ ստեղծելու համար: Պետական շինարարության ու զինված ուժերի կազմավորման գործընթացներին զուգահեռ, տեղի էին ունենում նաև զինված ընդհարումներ ու տեղայնական մարտեր, չդադարող հարձակումների ու գնդակոծությունների էին ենթարկվում ԼՂՀ բնակավայրերը... ՄՅՆՁ-այինների հարձակումներն ավազակային բնույթ էին կրում եւ անասնահոտերի ավարառության, խաղաղ բնակչության ահաբեկման ու կողոպուտի նպատակ էին հետապնդում:

Խորհրդային գորբերը, որոնց օգնությամբ Ադրբեջանի ՆԳՆ ՄՅՆ ջոկատները զավթել էին Հյուսիսային Արցախի հայկական մի քանի գյուղեր, սեպտեմբերին հետ քաշվեցին, դեմ առ դեմ թողնելով հայերին ու ադրբեջանցիներին: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերը ձեռնամուխ եղան բռնազավթված բնակավայրերն ազատագրելու եւ շրջանը ադրբեջանցի ՄՅՆՁ-այիններից մաքրագործելու ռազմագործողություններին: Ընդհանուր հակահարձակումը սկսվեց սեպտեմբերի 14-ին: Ազատագրական մարտերին ներգրավվեցին 120 մարտիկ, այդ թվում՝ տեղաբնակ գյուղացիներ, զինված կամավորականներ Մարտակերտի շրջանից ու Հայաստանից: Հայերը համեմատաբար լավ էին սպառազինված. հակաօդային ծանր գնդացիորների, «Ալազան» տիպի հրթիռների ու դրանք արձակող կայանքի, փոքր տրամաչափի հրանոթի, ավտոմատների ու կարաբինների առկայությունը հաջողություն էին խոստանում: Թեև 100-ից ավելի ՄՅՆՁ-այինները նույնպես լավ էին զինված, դեռ ավելին՝ նպաստավոր դիրքեր ունեին, սակայն, հայ մարտիկներին չորս ու կես ժամում հաջողվեց տիրել հակառակորդի վերահսկողության տակ գտնվող չորս բարձունքներից երեքին եւ ազատագրել Բուզլուխ գյուղը: Մյուս բարձունքում լրիվ շրջափակված հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Ժամը 13-ին հայտնված ուղղաթիռը, թեև սաստիկ գնդակոծվեց, բայց եւ այնպես, հաջողացրեց ողջ մնացած ՄՅՆՁ-այինների էվակուացումը:

Գրանից կես ժամ հետո մարտերը հանդարտվեցին: Հայերից երեք հոգի զոհվեցին, մի քանի մարտիկներ թեթեւ վիրավորվեցին: Հակառակորդը տվեց 15 սպանված, երեք գերի, ներառյալ՝ մեկ սպա, առգրավվեցին 100 մմ հրանոթ՝ իր 32 արկերով, «Ուրալ» եռասունի, «ԳԱԶ-66» երկսունի, 3 «ՌԲԱԶ» ավտոմեքենաներ, ԱԿՍ-74 տիպի 12 ավտոմատ, «Մակարով» տիպի 3 ատրճանակ եւ սահմանափակ քանակությամբ զինամթերք¹: Սակայն, ամենակարեւորն այն էր, որ ազատագրվեցին Բուզլուխը եւ շրջակա ռազմավարական բարձունքները: Սեպտեմբերի 15-ին հայ մարտիկներն առանց կռվի մտան բռնազավթված Մանաշիդ, սակայն այն պաշտպանելու համար հարկ եղավ հետ մղել հակառակորդի չորս կատաղի հարձակում: Սեպտեմբերի 18-ին հայ մարտիկներն ազատագրեցին էրքեջ գյուղը, դիրքեր գրավելով Մարտունաշենից չորս կիլոմետր հեռավորության վրա: Այսպիսով, Շահումյանի շրջանն ադրբեջանցի զավթիչներից մաքրելու ռազմագործողությունն անցավ կազմակերպված ու հաջողությամբ պսակվեց...

Սեպտեմբերի 22-ին, Բ. Ելցինի եւ Ն. Նազարբաեւի Ստեփանակերտ կատարած այցելության օրը, հարձակման ենթարկվեց Մարտակերտի շրջանի Չափար գյուղը: Ականանետներով, ավտոմատներով, գնդացիրներով, նռնականետներով զինված ադրբեջանցի հրոսակները գրոհը սկսեցին երեկոյան, Իմերեթ-Քերեվենդ գյուղի կողմից: Այնուհետեւ գրոհողներին միացան Աղդաբան գյուղից ուղղաթիռներով տեղափոխված ՄՅՆԶ-այինները: Չափարի պաշտպանները, ԽՍՀՄ ՆՁ զինվորների աջակցությամբ, հետ շարտեցին թշնամուն: Հաջորդ օրվա առավոտյան Իմերեթ-Քերեվենդից զրահամեքենայից գնդակոծվեցին Չափար գյուղի թաղամասերը: Կեսօրից հետո Աղդաբանի կողմից ադրբեջանական սպառազեն կազմավորումները հարձակվեցին Չափարի վրա, սպանեցին ու խոշտանգեցին 5 խաղաղ բնակիչ: Կրկին ոտքի ելան գյուղի պաշտպանները: Ծավալված կատաղի մարտում թեթեւ վիրավորվեց 4 գյուղացի: Հակառակորդը, սպանվածներ ու վիրավորներ տալով, անկանոն նահանջեց: Ադրբեջանական կողմն այդպես արձագանքեց Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելությանը եւ ժելեզնուկոսկրում ստորագրված համաձայնագրին: Դեռ ավելին, ջիվանջիդցիների հետնորդների ջանքերով, դրանից հետո իրադրությունը ԼՂՀ-ում ավելի վատթարացավ:

ԳՈՒԽ ՎԵՃԵՐՈՐԳ

1991 Թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆԸ

Հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում կայացած արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհրդի նիստում հարց բարձրացվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ եւ զինված ուժեր ստեղծելու վերաբերյալ, ինչը թելադրված էր Ադրբեջանի կողմից բանակ ստեղծելու եւ այն ԼՂՀ-ի դեմ ուղղելու վտանգին դիմագրավելու անհրաժեշտությունից:

Ադրբեջանական հրոսակախմբերի օրավուր աճող լկտիությունը եւ հայկական խաղաղ բնակավայրերի գնդակոծություններն ու հրթիռահարումները հնարավոր էր դադարեցնել միայն համարժեք գործողություններով: Դեռեւս նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը, չունենալով բավարար միջոցներ, այս ու այնտեղ պատասխան գործողությունների էին դիմում, սակայն թշնամուն ցնցող ու զգաստացնող հարված էր պետք: Անհրաժեշտ էր, ինչքան հնարավոր է, շուտ եւ արագ այն իրականացնել: Ուժերի փորձության վայր ընտրվեց Հադրուքի շրջանի Տող գյուղը, ուր մնացել էին միայն ՄՅՆԶ-այինները, որոնք իրենց դաժանությամբ վատ համբավ էին վայելում: Դեռեւս թարմ էին հոկտեմբերի 15-ին Տող գյուղի տնտեսության դաշտում աշխատող հողագործների վրա նրանց հարձակման եւ հատկապես՝ հոկտեմբերի 16-ի գիշերվա դեպքերի սահմոկեցուցիչ տպավորությունները, երբ ադրբեջանցի հրոսակները Տողում հրդեհեցին 2 տուն, իսկ այնուհետեւ, ներխուժելով Միսաք Դանիելյանի բնակարանը, զազանաբար սպանեցին նրա ընտանիքի 5 անդամներին: Վանդալիզմի այդ քայլից վրդովված հայ բնակիչները թեւեւ զենքի էին դիմել եւ ստիպել ադրբեջանցիների մեծամասնությանը ճողոպրել գյուղից, բայց վտանգը դեռեւս չէր վերացվել: Տողը նախընտրելի ու նպատակահարմար էր թե ռազմավարական եւ թե հոգեբանորեն թշնամու վրա ներգործելու առումներով, մանավանդ, որ այնտեղ մարտական գործողությունների համար համեմատաբար ազատ ասպարեզ կար: Տող եկան Մարտակերտի շրջանից՝ Վլադիմիր Բալայանի, Ստեփանակերտից՝ Աշոտ Ղուլյանի, Հայաստանից՝ Մանվել Գրիգորյանի, Հադրուքից՝ Արթուր Աղաբեկյանի մարտական խմբե-

¹ «Հայ զինվոր», քիվ 51, 1998թ.

րը, ինչպես նաեւ այլ կամավորականներ, ընդհանուր առմամբ՝ շուրջ 100 ազատամարտիկ: Համակարգող կենտրոնի ներկայացուցչի եւ Արկադի Տեր-Թադեւոսյանի գլխավորությամբ մշակվեց գյուղն ազատագրելու գործողությունների պլան: Վիզեն Գրիգորյանի խումբը պետք է ապահովեր հետախուզությունը եւ տեղանքում ճիշտ կողմնորոշվելը: Ժամանակին կատարված հետախուզության շնորհիվ հայտնաբերվեցին թշնամու շտաբը, նրա ուժերի տեղաբաշխումը, նույնիսկ հաշվարկվեցին Ֆիզուլուց օգնություն հասցնելու նրա հնարավորությունները եւ ժամանակը: Հրետանային կարծատեւ նախապատրաստությունը, որ սկսվեց երեկոյան կողմ, խուճապի մատնեց թշնամուն, հատկապես՝ երբ արկն ընկավ ուղիղ շտաբի վրա: Մարտական գործողություններն այնքան լավ էին ծրագրվել ու նախապատրաստվել, իսկ գրոհն այնպես հանկարծակի եղավ, որ ընդամենը մեկ ժամ հուսահատ դիմադրելուց հետո, հակառակորդը սկսեց հապճեպ հեռանալ գյուղից, չսպասելով անգամ Ֆիզուլուց ստանալիք օգնությանը: Ադրբեջանցիներին «պաշտպանելու» եկան 2 զրահամեքենա, սակայն հայերը ռադիոխաղով խանգարեցին ռուսների անձնակազմին՝ կրակել¹:

Տողի ազատագրումը, թերեւս, առաջին հաղթանակն էր, որով կոտրվեց հակառակորդի անպատժելիության զգացումը, բացվեց Հադրութի ներշրջանային երթեւեկության ճանապարհը, իսկ հայ ազատամարտիկները ոգեպնդվեցին ու ձեռք բերեցին համապատասխան մարտական փորձ...

Նոյեմբերին տարերային բախումներին փոխարինելու եկան, համեմատաբար, կազմակերպված բնույթ կրող մարտական գործողությունները: Սակայն, միասնական ռազմածակատ եւ ժամանակակից ընկալմամբ պատերազմական գործողություններ դեռ չկային, ուստի ստորեւ ներկայացվում են տարբեր շրջաններում մղված մարտական գործողությունների առանձին դրվագներ: Ամսվա սկզբներին Հադրութի շրջանում շարունակվեցին հայ ինքնապաշտպանական ջոկատների ազատագրական մարտերը: Նոյեմբերի 6-ի գիշերն ազատամարտիկները, նախապատրաստվող հարձակումը կանխելու նպատակով, մտան Ֆիզուլու շրջանի Հալիֆշա գյուղը, ոչնչացրին մոտ 20 ադրբեջանցի զինյալ: Փոխհրաձգության ժամանակ զոհվեց 2 ազատամարտիկ:

Նոյեմբերի 7-ին Ֆիզուլու շրջանի զինյալները լայնածավալ

¹ «Լ.Ղ. Հանրադատություն» հանրադատական թերթ, p.145, 1996թ.: Տես նաև Շահեն Մկրտչյան, Արցախում եւ ուրիշ դաժնագրի տեսակ: Երևան, 1996, էջ 50-54:

գործողություններ սկսեցին Հադրութի շրջանի Ջրաբերդ, Խրմանջուղ եւ Բլութան գյուղերի ուղղությամբ: Հակառակորդին, մեծ դժվարությամբ, հաջողվեց ներխուժել Խրմանջուղ եւ հրի մատնել տների մի մասը: Մինչեւ առավոտ տեւած մարտերում ջախջախելով զավթիչներին, հայ մարտիկները վերատիրացան ռազմական նշանակություն ունեցող բարձունքներին: Արդյունքում սպանվեց 3 ադրբեջանցի զրոհային: Երկու կողմից էլ եղան վիրավորներ¹: Նոյեմբերի 8-ին մարտական գործողությունները տեղափոխվեցին խառը բնակչություն ունեցող Հախուլլու գյուղը: Առավոտյան ազատամարտիկներն ու զինվորականները, համատեղ ուժերով ջարդեցին դեպի գյուղ ուղղություն վերցրած ՄՅՆՁ-այինների ավտոշարասյունը: Հետմիջօրեին, մարտերն արդեն մղվում էին Ջրաբերդ, Խրմանջուղ, Բլութան եւ Էդիլլու գյուղերի տարածքում: Այդ օրը սպանվեց մոտ 10 ՄՅՆՁ-ային: Իսկ, ընդհանուր առմամբ, ամսվա առաջին կեսին սպանվեցին 40 ադրբեջանցի եւ 2 հայ²:

Ազատամարտիկները ՄՅՆՁ-այիններին Սարին-շենից եւ Ծամծորից հեռանալու վերջնագիր էին ներկայացրել, որի ժամկետը սպառվեց նոյեմբերի 15-ի ժամը 4-ին: Մերժողական պատասխան ստանալուց հետո, հայկական կողմին այլ բան չէր մնում, քան ակտիվ գործողությունների դիմել: Դեռեւս մայիսին տեղահանված գյուղերի ազատագրումը սկսվեց առավոտյան ժամը 6-ին: Ազատամարտիկների մի խումբ մարտերով թափանցեց Ծամծոր եւ սկսեց զրավել տներում գտնվող ՄՅՆՁ-այինների հենակետերը: Կեսօրին գյուղն ամբողջովին հայերի հսկողության տակ անցավ: Դրանից հետո, Սարին-շենի ՄՅՆՁ-այինները, փաստորեն, հայտնվեցին շրջապատման մեջ: Ազատամարտիկների սրընթաց գրոհի ժամանակ սպանվեցին մի քանի ադրբեջանցի զինյալներ: Հեռուստահաղորդիչ կայանում ամրացած ՄՅՆ ջոկատը զինվորականների միջոցով հաշտություն խնդրեց: Ազատամարտիկները պահանջեցին վայր դնել զենքը: ՄՅՆՁ-ային պահակախմբի մեծամասնությունը, հայերին հանձնելով զենքը, հեռացավ: Հեռուստակայանի շենքում մնացածները ոչնչացվեցին: Ընդհանուր առմամբ, սպանվեցին ադրբեջանցի 25 ՄՅՆՁ-ային եւ զինվոր: Հայերը տվեցին 4 զոհ եւ մի քանի վիրավոր:

Նոյեմբերի 17-ին հրի մատնվեցին շրջանի Սալաքյաթին գյուղի գրեթե բոլոր տները, դուրս մղելով բազմաթիվ ադրբեջանցի

¹ «Պայմարի արարվա լուրեր», 9 նոյեմբերի, 1991թ., հ.3:

² Նոյնի տարում, 16 նոյեմբերի, 1991թ., հ.4:

գինյալներ[15]: Նոյեմբերի 20-ի երեկոյան, ազատամարտիկների ճնշմամբ, հակառակորդը ստիպված հեռացավ Հադրութի շրջանի Քարազուլու գյուղից, հրի մատնելով ու ավերելով հայերին պատկանող տները:

Ազատագրական մարտեր ծավալվեցին նաեւ Մարտունու շրջանում: Նոյեմբերի 19-ին ազատամարտիկները մի նոր ու կարեւոր հաջողության հասան. ազատագրվեց Մարտունի քաղաքի առանձին բնակավայրի կարգավիճակ ստացած Խոջավենդ թաղամասը: Լուրջ ընդհարումներն այստեղ սկսվել էին դեռեւս նոյեմբերի 15-ին եւ կարծատեւ դադարներով տւելէ 3 օր: Հակառակորդն այդ օրերի ընթացքում հրդեհել էր հայերի 5 տուն: Նոյեմբերի 19-ի առավոտյան ազատամարտիկներին հաջողվեց հրի մատնել ՄՅՆԶ-այինների հենակետեր դարձած 15 տուն, ինչպէս նաեւ միջնակարգ դպրոցի շէնքը: Միաժամանակ, Մարտունու եւ Խոջավենդի սահմանագծում ազատամարտիկները գնդակոծեցին հակառակորդի 2 «ՁԻԼ» բեռնատար, որոնց մէջ սպանվեցին եւս մի քանի ՄՅՆԶ-այիններ: Մինչեւ կեսօր հրո ճարակ դարձավ Խոջավենդի տների գրեթէ կեսը: Ձինվորականների ուղեկցությամբ, թաղամասի քաղաքացիական բնակչության վերջին ներկայացուցիչները կեսօրից հետո հեռացան դեպի Ամիրանլար, իսկ մարտերը շարունակվեցին մինչեւ երեկո: Արդյունքում ճնշվեցին հակառակորդի բոլոր կրակակետերը, սպանվեցին ու վիրավորվեցին տասնյակ ՄՅՆԶ-այիններ:

Նոյեմբերի 20-ի ժամը 16³⁰-ին, Բերդաշեն գյուղի մոտ, չպարզված հանգամանքներում, վթարի ենթարկվեց մի ռազմական ուղողաթիռ, ինչի հետեւանքով մահացավ շուրջ 20 մարդ, այդ թվում՝ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպէս նաեւ արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ-մայոր Ն. Ժինկինը: Ադրբեջանական կողմն աղմուկ բարձրացրեց այդ առթիվ, մեղադրելով հայերին՝ ուղղաթիռի կործանման մէջ, բայց ապարդյուն... Այս դեպքն ամենայն հավանականությամբ, արագացրեց ռազմավարական ուղղությամբ հակառակորդի հարձակումը:

Նոյեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը Աղդամի շրջանի տարածքից լայնածավալ գործողություններ սկսվեցին Խրամորթ, Ջրվեր (Ոսկեվազ, Խանաբաղ), Փառուխ, Դլիշբաղ, Սառնաղբյուր (Աղբուլաղ), Նախիջեւանիկ, Փոջամալ, Դահրազ բնակավայրերի եւ Ասկերան ավանի ուղղությամբ: Հայկական բնակավայրերն ակտիվորեն գնդակոծվեցին հրաձգային զենքերից: Հայ մարտիկների

կազմակերպված ու աննկուն դիմադրությանը հանդիպելով, ՄՅՆԶ-այինները՝ գործի դրեցին ականանետներն ու «Ալազան» տիպի հրթիռները, իսկ լուսադեմին՝ նաեւ թնդանոթները: Շրջանի սահմանագիծը պաշտպանելիս, հայ մարտիկներն արիաբար եւ հաջողությամբ հետ մղեցին բոլոր հարձակումները, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի կորուստներ¹:

Նոյեմբերի 22-25-ը Շուշիից, Ջանհասանից, Մալիբեկլուից եւ Կրկժանից հրթիռահրետանային կրակի տակ առնվեցին Ստեփանակերտը, Շոշը, Մխիթարաշենը եւ Քարին-տակը: Խորհրդային բանակի կայազորը պատասխան կրակով փորձեց ճնշել ադրբեջանական կրակակետերը: Մարտական գործողություններին զուգահեռ, Ադրբեջանի դեկավար շրջանները պայքար էին ծավալել նաեւ գաղափարաքաղաքական ու իրավաբանական-դիվանագիտական ճակատներում:

Նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը սադրիչ որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը լուծարելու մասին²: Սակայն դա իրատեսական չէր ու չէր կարող ընդունելի լինել, առավել եւս՝ գործադրվել, քանզի վաղուց Արցախն անկախ էր Ադրբեջանից: Այդ որոշման հետեւանքը եղավ այն, որ տարածաշրջանում ռազմաքաղաքական մթնոլորտն ավելի շիկացավ եւ նոր թափ ստացան մարտական գործողությունները...

¹ «Պայխախի» շաբաթվա լուրեր», 23 նոյեմբերի, 1991թ., հ.5:

² Բ. Ուլուբաբյան, նւ. գիւրք, էջ 332:

ՓՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1991 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ - 1992 Թ. ՇՈՒՆՎԱՐԻՆ

1991 թ. դեկտեմբերը նշանավորվեց ռազմական ու քաղաքական կարեւոր իրադարձություններով, որոնք իրենց մշտական տեղն ապահովեցին Արցախյան ազատամարտի տարեգրության մեջ: Օրեցօր սաստկանում էին մարտական գործողությունները: Հակամարտության գոտում տեղաբաշխված ԽՍՀՄ ՁՈՒ Եւ ԵԳՆ զորքերը, մերթ հայկական, մերթ էլ ադրբեջանական կողմին աջակցելով, ավելի սուր բնույթ էին հաղորդում զինված ընդհարումներին Եւ հրահրում կամ խորացնում էին հայերի ու ադրբեջանցիների՝ գլորվող ձնագնդի պես ածող թշնամանքը: Սակայն ցույց տալու համար, որ զինվորականությունը չի շեղվել Արցախում գտնվելու իր նպատակից, այն է՝ ապահովել բնակչության անվտանգությունն ու անդորրը, ռուսական հրամանատարությունը երբեմն նաեւ միջնորդի ձեւական դեր էր խաղում: Այլ կերպ չես որակի զինվորական պարետ, գնդապետ Վ. Ժուկովի՝ Ստեփանակերտի ռադիոյով տված հաղորդագրությունն այն մասին, որ ինքը դեկտեմբերի 3-ին Աղղամում հանդիպել է Ադրբեջանի ԳԽ նախագահի տեղակալ Թամերլան Կարաեւի հետ Եւ պայմանավորվել կրակի դադարեցման շուրջ: Իբր վերջինս էլ զանգահարել է Շուշիի ու Կրկժանի ադրբեջանցիներին Եւ ցուցում տվել՝ դադարեցնել կրակը: Սակայն, շարունակվող հրետակոծությունների պայմաններում քիչ ստեփանակերտցիներ հավատացին դրան, մանավանդ, որ դեկտեմբերի 8-ին ադրբեջանական հեռուստատեսությամբ շատերն ականատես եղան, թե ինչպես են նորակոչիկները երգվում գնալ ու կռվել Լեռնային Ղարաբաղում, իսկ այդ «իգիթներին» ճանապարհելու էր եկել ոչ այլ ոք, քան հենց նույն Թ. Կարաեւը¹: Ուստի, արցախահայությունը, փորձելով ազատվել սին պատրանքներից Եւ ապավինել իր ներուժին, վճռական քայլեր ձեռնարկեց արցախյան պետականությունն կերտելու ուղղությամբ: Մարզգործկոմի նոյեմբերի 27-ի որոշման համաձայն, դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացվեց հանրաքվե: Բնակչությունը, ճնշող մեծամասնու-

1. Վ. Բ. Հարությունյան, նւյ գիրք, էջ 96-97:

թյամբ, քվեարկեց ԼՂՀ անկախության օգտին: Ավելի քան 50 դիտորդներ, որոնց բոլոր ընտրական տեղամասերում լինելու հնարավորություն էր ընձեռնվել, միահամուռ հայտարարեցին, որ հանրաքվեն անց է կացվել օրինականության բժախնդիր պահպանումով, համաժողովրդական խանդավառությամբ¹:

«Հաշվեհարդարի» ու «Ղարաբաղի հայաթափման» կոչերից Բաբուն՝ Կենտրոնի բացահայտ օժանդակությամբ, փորձում էր Արցախում Եւ նրա շուրջ արագ թափ հաղորդել էթնիկական գտման գործընթացին: Ձենքի ուժով հայաթափվել ու ադրբեջանցիներով էին բնակեցվել Բերդաձորի ենթաշրջանի Եւ Հադրութի շրջանի, ինչպես նաեւ Հյուսիսային Արցախի Կամո, Ազատ, Գետաշեն Եւ Մարտունաշեն գյուղերը: Հաղորդակցության բոլոր կարեւոր ծանապարհները, անցնելով ադրբեջանական գյուղերի միջով կամ մոտակայքով, եթե դեռ չէին փակվել, ապա մշտական վտանգի տակ էին գտնվում, ինչը խանգարում էր ինքնապաշտպանության գործի կազմակերպմանը: Ջամիլլուն, Մալիբեկլուն, Կրկժանը Եւ Քյոսալարի ենթաշրջանի գյուղերն աքցանել էին Արցախի մայրաքաղաքը: Խոջալուն կտրել էր հաղորդակցությունը Ասկերանի, Մալիբեկլուն՝ Մարտունու, Սրխավենդը՝ Մարտակերտի շրջանների հետ: Լեռնային Ղարաբաղի ադրբեջանաբնակ բոլոր գյուղերը կարճ ժամանակահատվածում վերածվել էին ՄՆՆԶ-այինների ռազմահանգրվանների: Անասնագողությունների, կողոպուտների, բռնությունների վերջը չէր երեսում: Դեռ ավելին, Ադրբեջանի օրենսդիրները թունոտ որոշումներ էին «թխում» Եւ հող նախապատրաստում այդ ամենի համար: Այլ կերպ չես որակի Շահումյանի շրջանը Կասում Իսմայիլովին միացնելու Եւ Գերանբոյի շրջան ստեղծելու (1991 թ. հունվարի 14) կամ ԼՂԻՄ-ը լուծարելու մասին որոշումները: Նման պայմաններում ադրբեջանական բնակավայրերը, ռազմական հենակետեր լինելուց զատ, նաեւ «միջանկյալ օղակներ» էին հանդիսանում արցախյան այս կամ այն հողատարածքը պոկելու Եւ Ադրբեջանի հարակից շրջանին բռնակցելու համար: Հիշյալ որոշումներով խրախուսված ադրբեջանցի հրոսակների հարձակումներին դիմագրավելուն զուգահեռ, Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուների առաջնահերթ խնդիրներից էին հանդիսանում նաեւ հաղորդակցության կարեւոր ծանապարհներն ադրբեջանցիների վերահսկողությունից ազատելը Եւ վերոհիշյալ պոտենցիալ «միջանկյալ օղակների» վնասագերծումը:

1 Նույն տարում, էջ 97-101:

Ղարաբաղյան լեռնաշղթայից այս կողմ ընկած ադրբեջանական գյուղերից յուրաքանչյուրը մի-մի ռազմական հենակետ էր հանդիսանում Արցախի կենտրոն ներխուժելու համար: Այս առումով հատկապես վտանգավոր էին Ջամիլլուն ու Լեսնոյեն: Վերջինս մշտական սպառնալիք էր Բադարա, Աստղաշեն (Դաշբուլաղ) ու Դահրավ գյուղերի համար եւ Խոջալուի հետ ռազմավարական գիծ ստեղծելու հավակնություն ուներ:

Ստեփանակերտն անընդհատ գնդակոծության տակ պահող մերձակա Ջամիլլու գյուղը վնասազերծվեց դեկտեմբերի 15-ին: Հաղթական մարտում զոհվեցին Ներսես Ջաքարյանը եւ Մարատ Ավանեսյանը: Հաջորդ օրը, Բերքաձորի մոտ հայ ազատամարտիկների խումբը բախվեց ՄՀՆՋ-այիներին ու վարձկան ռուս զինվորների միացյալ ուժերին: Մի քանի ժամ տեւած մարտի արդյունքում հայ ռազմիկները փախուստի մատնեցին հակառակորդին: Հակահարձակման անցնելով, ինքնապաշտպանական մի ջոկատ զրահամեքենայի ուղեկցությամբ մտավ Ղուշչուլար գյուղը եւ տուն առ տուն ազատագրելու էր այն, եթե կռվի ամենաեռուն պահին զրահամեքենան վաղաժամ չլքեր մարտադաշտը:

Ժամանակի հեռավորությունից մարտական այս գործողությունը հիացմունքի հետ նաեւ զարմանք է հարուցում այն առումով, որ անբավարար էր գործերի դրվածքը, իսկ կազմակերպվածության չափը, մարտավարության տարօրինակությունը, ռուս զինվորի «անձեռնմխելիության» հոգեբանական արգելքը պարզունակ էին, մանավանդ խոշորածավալ, ժամանակակից մարտական տեխնիկայի կիրառմամբ ընթացած պատերազմական գործողությունների գորշ ֆոնի վրա: Իսկ 1991 թվականին ամեն ինչ ասես օրինաչափ էր, այդ թվում նաեւ Ջամիլլուի եւ Բերքաձորի մարտերը, որոնցից հատկապես վերջինում ավելի ցայտուն արտահայտվեցին վերոհիշյալ թերությունները: Բայց եւ այնպես, անկարելի է չհիանալ Ազատամարտին կամավոր զինվորագրված տղաների նվիրվածությամբ ու խանդավառությամբ: Հատկություններ, որոնք օգնեցին նրանց ծանր պայմաններում մարտնչել մինչեւ ատամները զինված հակառակորդի, այդ թվում նաեւ Կենտրոնի տխրահռչակ պատժիչ զորամիավորումների դեմ, ի տարբերություն որոնց հայ նորընծա մարտիկների զինվածությունը խիստ անբավարար էր: Սակայն, ոգու ուժով նրանք ի վերջո հաղթող դուրս եկան եւ դրանով իսկ ոգեշնչման աղբյուր դարձան հետագա ռազմական փայլուն հաղթանակները կռող հայ զինվորների համար...

Տարեմուտին իրադրությունը վերստին լարված էր Հադրութի շրջանում:

Դեկտեմբերի 23-ին հակառակորդը զանգվածային հարձակում ձեռնարկեց շրջանի Քարագլուխ գյուղի ուղղությամբ: Բնակավայրի պաշտպաններին դժվարությամբ հաջողվեց կասեցնել ադրբեջանցիների ու ԽՍՀՄ ՆԳՆ զինվորականների գերակշռող միացյալ ուժերի առաջխաղացումը: Մարտի ժամանակ ստացած վերքերից զոհվեցին 5 մարտիկներ:

Թեեւ օրակարգում Կրկժանի ազատագրումն էր, Արցախի ինքնապաշտպանական ջոկատները մարտական գործողություններ ձեռնարկեցին Լեսնոյեի ուղղությամբ, նպատակ ունենալով մի հարվածով լուծել երկու խնդիր. վնասազերծել վտանգավոր «միջանկյալ օղակներից» մեկը եւ հակառակորդի ուշադրությունը շեղել Կրկժանից, նրա մեծաթիվ ուժերը զամելով Լեսնոյեին...

Ռազմագործողությունը սկսվեց դեկտեմբերի լույս 23-ի գիշերը: Յոթ ժամ տեւած փողոցային մարտերն ավարտվեցին թշնամական կարեւոր ռազմահանգրվանի վնասազերծմամբ: Հակառակորդը մարտադաշտում ավելի քան 80 դիակ ու մեծ քանակությամբ զենք եւ զինամթերք թողեց¹: Հայ մարտիկները կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրները: Դեկտեմբերի 22-23-ին հայ մարտիկների վրիժառու բազկի ուժը զգացին նաեւ Մարտակերտի շրջանի Իմերեթ-Քերեվենդ եւ Ումուլթու գյուղերի ադրբեջանցիները: Դեկտեմբերի 25-ին եւ 26-ին Արցախից դուրս բերվեց ԽՍՀՄ ներքին զորքերի «ԴՈՆ*» դիվիզիան (իրամանատար՝ գեներալ-մայոր Լոբունեց), այդ թվում՝ Ստեփանակերտից՝ փոխգնդապետ Տյուլովիչի, Մարտունուց՝ Բատակովի, Մարտակերտից՝ Կալիբերդենկոյի գնդերը²: Դրա հետեւանքով, անպաշտպան մնացին ԼԴՀ բազմաթիվ բնակավայրեր եւ ժողովրդատնտեսական կարեւոր օբյեկտներ, իսկ սահմանագծի ողջ երկայնքով սկսվեցին ադրբեջանական զինված խմբավորումների խժոժությունները: Այսպես, դեկտեմբերի 25-ի երեկոյան, հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդն Աղդաբանից հար-

¹ «Խաչեն», Ստեփանի Երջանային վարչակազմի դաժնաստերք, ք.3, 1993թ., «Մարտիկ», ք.10, 1996թ.:

* Դիվիզիա օտրովո նազնաչենիա - հասուկ նեանակոտրյան դիվիզիա

² ՊԲԿԱ, Аппаратный журнал радиоостанова. Начал 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992г. (այսուհետեւ՝ ռադիոկայանի աղյուսային մասյան), լ. 4а

ծակվեց Մարտակերտի շրջանի Չափար գյուղի վրա, իսկ Աղդամում տեղադրված հանութիցներից հրետակոծվեց Ասկերան ավանը: Լույս 26-ի գիշերն ալազանահարվեց Ստեփանակերտը: Հաջորդ օրը հարձակման ենթարկվեցին Հին Թաղեր եւ Խծաբերդ գյուղերը: Հայ մարտիկներն արհաբար հետ մղեցին զրահամեքենաներով ու թնդանոթներով զինված հակառակորդի զրոհները: Հադրութի շրջանում հրի մատնվեց մի զինեզործարան, իսկ ճարտար գյուղում՝ հացահատիկի պահեստը: Ադրբեջանցիների նման ակտիվացումը, թերեւս, պայմանավորված էր նրանով, որ Բաքվից եւ Աղդամից Արցախ էին տեղափոխվել 300-ական ասկյար ընդգրկող 18 գումարտակներ, ինչպես նաեւ ռազմական տեխնիկա եւ նույնիսկ՝ Մի-24 ուղղաթիռ¹: Ստեղծված իրադրությունում Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր ունեին ուժեղացնել ժողտնտեսական օբյեկտների պաշտպանությունը, ներգրավելով նաեւ խաղաղ բնակչությանը, ինչպես նաեւ՝ ստեղծել առանձին ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տագնապալից իրավիճակի թելադրանքով, Պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Արկաղի Տեր-Թադեւոսյանին հանձնարարվեց անհապաղ ավարտել զինված խմբավորումների կազմավորումը: Հադրութի եւ Մարտունու շրջաններում ներգրավելով 400-ական, իսկ Ասկերանում, Մարտակերտում եւ Ստեփանակերտում՝ 500-ական մարտիկ: Միաժամանակ, Գուրգեն Դալիբալթայանը խորհուրդ տվեց առաջարկել տեղական ղեկավարներին՝ անցկացնել մասնակի զորահավաք²:

Դեկտեմբերի 28-ին, չդադարող հրետակոծությունների, զինված ավազակախմբերի պարբերական հարձակումների պայմաններում տեղի ունեցան ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Ախոյան կողմը, դրանք ձախողելու դիտավորությամբ, նույն օրը դադարեցրեց Ստեփանակերտի էլեկտրամատակարարումը: Չբավարարվելով դրանով, հակառակորդի զինված խմբերը երեկոյան ուժգին հարձակում ձեռնարկեցին Քարին-տակի ուղղությամբ: Գյուղի պաշտպանները, թեւս մեծ դժվարությամբ, բայց կասեցրին թշնամու առաջխաղացումը: Մարտերի ընթացքում զոհվեց 1 եւ վիրավորվեց 2 հայ: Ի պատաս-

¹ Նույն տեղում, ք. 7ք:

² Նույն տեղում, ք. 7ա:

խան, ինքնապաշտպանական ջոկատները նույն օրվա գիշերը հանկարծակի մտան Կրկժան: Հակառակորդը ստիպված Քարին-տակի ուղղությունից ուժեր հանեց ու նետեց Կրկժանի կողմը: Այդուհանդերձ, ՄՀՆՁ-ային ուժերին հաջողվեց պաշտպանություն բռնել միայն դպրոցի շրջակայքում: Մարտերի ընթացքում ոչնչացվեցին հակառակորդի բազմաթիվ զինյալներ, գերվեց 6 ՄՀՆՁ-ային: Հայերից զոհվեցին 4, վիրավորվեցին 10-ից ավելի ազատամարտիկներ: Հաջորդ օրը մարտական գործողությունները նոր թափով վերսկսվեցին: Ձինված բախումներ եղան նաեւ Կիչանում ու Մարտունիում: Մարտական գործողություններին զուգընթաց, շարունակվում էր հակառակորդի կազմավորումների զինումը: Այսպես, դեկտեմբերի 29-ին Շուշի բերվեցին 8 ՀՄՍ, 2 ՁՓ, մի քանի օր անց՝ նաեւ 2 ծանր տանկ¹: Դեկտեմբերի 30-ին մարտեր էին ընթանում Ղազանչիում, Կրկժանում, Մխիթարաշենում, Ասկերանում, Խրամորթում, Մարտունիում եւ այլուր: Հակառակորդը, թեւս 3-4 անգամ առավելություն ուներ կենդանի ուժի եւ սպառազինության առումով, սակայն հաջողության չէր հասնում [16]:

ԼՂՀ տարածքում 1991 թ. տեղի ունեցած մարտական գործողությունների արդյունքները հուսադրող չէին: Կորսվել էր Հադրութի շրջանի լեռնային մասը եւ գրեթե ամբողջ Շուշիի շրջանը (անսասան էր մնացել միայն Քարին-տակ գյուղը): Մեկ տարվա ընթացքում հայկական կողմը տվել էր 270 զոհ, մեծամասամբ խաղաղ բնակիչներ, ծերեր, կանայք ու երեխաներ, ադրբեջանականը՝ 216, խորհրդային զինվորականությունը՝ 15: Վիրավորվել էին 400 հայեր, 180 ադրբեջանցիներ, 34 զինվորականներ: Պատանդ տարված 599 հայերից 226-ը տարեվերջին դեռ չէին վերադարձվել²: Թեւս դրությունը ծանր էր, սակայն հայրենի իշխանությունները եւ, հատկապես, ժողովուրդն ու նրա անվեհեր պաշտպանները ոչ թե հուսալքվում, այլ ավելի էին համախմբում իրենց ուժերը, ինչի արդյունքում հաջողության մտարը սկսեց թեքվել դեպի Արցախի ինքնապաշտպանական ուժերի կողմը...

1992 թ. հունվարի 1-ին եւս իրադրությունը լարված էր Շահումյանի շրջանում: Հակառակորդը հոծզանգված հետեւակ, զրահատեխնիկա ու տանկեր էր կիրառում Կարաչինարի եւ Բուզ-

¹ Նույն տեղում, ք. 12ա:

² Բ. Ուլտրաբայան, նւթ. գիրք, էջ 338, նույնի՝ Արցախյան զոյադայաբարի սարեգրություն, էջ 302:

լուխի ուղղություններում, իսկ Շահումյանի շրջանը ԼՂՀ-ից մեկուսացնելու նպատակով՝ վերահսկողության տակ առավ Ինջա գետի հովիտը: Միաժամանակ հրետակոծվեց Թալիշ գյուղը: Աղդամից, Ֆիզուլուց, Միրբաշիրից, Շուշիից ադրբեջանական հրոսակները հարձակումներ էին գործում հարեւան հայկական բնակավայրերի վրա: Կրկժամում պաշտպանական ծանր մարտերը շարունակվում էին: Հակառակորդը տարատեսակ զրահատեխնիկա էր կիրառում: Միաժամանակ, ամեն օր հրետակոծվում էր Ստեփանակերտը: Հրետակոծությունների և մարտական գործողությունների արդյունքում հայկական կողմն ունեցավ մոտ 30 զոհ, բազմաթիվ վիրավորներ: Պատասխան գործողությունների արդյունքում հրի մատմվեցին Կրկժամի՝ ՄՀՆԶ-ային կրակակետերի վերածված բոլոր տները: Այդուհանդերձ, ցանկացած գնով Կրկժամը պաշտպանելու հանձնարարությամբ, դեպի Ստեփանակերտի արվարձան ձգվեցին Ադրբեջանի ազգային բանակի կազմավորումները: Մասնավորապես, Կրկժամի մերձակա Ղայբալիշենում կենտրոնացվեց հակառակորդի շուրջ 200 զինվոր¹: Հակառակորդը, կարծելով, թե հայկական բոլոր կազմավորումները ձգվել են դեպի Կրկժամ, պահը հարմար գտավ Խրամորթի հետ հաշիվները մաքրելու համար: Հունվարի 1-ին, գերակշռող ուժերով և զրահատեխնիկայի աջակցությամբ ադրբեջանցի զինյալները գրոհեցին ու զավթեցին Խրամորթը: Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական ջոկատները, հակահարձակման անցնելով, ոչ միայն հետ շարտեցին հակառակորդին, այլև առգրավեցին երկու ՋՓ, մեկ «ԿՊՎԴ» և մեկ «ԴՇԿ» գնդացիներ: Ադրբեջանցիները նաև կենդանի ուժի մեծ կորուստներ ունեցան:

Հունվարի 1-ին պաշտպանական մարտեր ընթացան նաև Սեյսուլանում: Հունվարի լույս 2-ի գիշերն ադրբեջանցիներին հաջողվեց մտնել գյուղ: Սկսվեց կանանց ու երեխաների դուրսբերումը: Գյուղի պաշտպանների ձեռնարկած միջոցների շնորհիվ, խուճապը կանխվեց: Հունվարի 3-ին բնակիչները գյուղ վերադարձան:

Հունվարի 6-ին մարտական գործողություններ ընթացան Շահումյանի շրջանում: Հայ մարտիկներն ազատագրեցին Բուզլուխի մոտակա բարձունքը և շարժվեցին դեպի Սարըսու: Նույն օրը հայերի կողմից վերահսկողության տակ առնվեց Ինջայի կիրճը,

1. ՊԲԿԱ, Ռադիոկայանի աղյուսային մասյան, ր.18բ:

ինչն ապահովեց Շահումյանի հաղորդակցական կապը Մարտակերտի շրջանի հետ: Հետախուզության տվյալներով այդ օրերին ադրբեջանական բանակը ԼՂՀ-ում և նրա արեւելյան սահմանների երկայնքով կենտրոնացրել էր շուրջ 18 գումարտակ, որոնցից 8-ը՝ գլխավոր հարվածի՝ Ստեփանակերտի, իսկ 4-ը՝ երկրորդ հարվածի՝ Հադրութի շրջանի ուղղությամբ, ինչպես նաև 63 զրահամեքենա, 2 տանկ, ավելի քան 27 հրանոթ¹: ԼՂՀ ինքնապաշտպանության պատասխանատուները վերոհիշյալ երկու ուղղություններում ուժեղացրին պաշտպանական բնագծերը: Հունվարի 9-ին մարտեր ընթացան Հադրութի շրջանի Հախուլլու գյուղում: Հաջորդ օրը մարտերը տեղափոխվեցին Քոչբեկ գյուղի մատույցները: Մեծ Թաղերից և Տողից ժամանած օգնական ուժերի միջոցով թշնամու առաջխաղացումը կասեցվեց: Հայ մարտիկների զինանոցը համալրվեց մարտադաշտից հանված թեթև սպառազինության մեկ ՋՓ-ով, 1 ԿՊՎԴ գնդացրով և զգալի քանակությամբ զինամթերքով:

Հունվարի 11-ին կատաղի մարտեր ընթացան Սեյսուլանի և Կարմիրավանի մատույցներում: Դիրքային մարտեր մղվեցին Ստեփանակերտի ու Կրկժամի՝ մի կողմից, և Ստեփանակերտի ու Մալիբեկլուի միջև՝ մյուս կողմից: Հադրութի շրջանում ավարտին հասցվեց Հախուլլուի վնասագրծումը: Հունվարի 12-ին իրադրությունը լարված էր նաև Մարտունու շրջանում: Ամիրանլարում տեղադրված 4 թնդանոթներից արկակոծվում էր շրջկենտրոնը, որի վրա արձակվեց «Ալազան» տիպի 120 հրթիռ և 30 թնդանոթային արկ: Վիրավորվեց 20 խաղաղ բնակիչ, մեկը սպանվեց: Երեք ժամ տևողությամբ հրթիռակոծությանը լրացնելու եկավ ռազմական ուղղաթիռը: Դրանից հետո հյուսիս-արեւելյան ծայրամասից հակառակորդը մոտեցավ Մարտունուն, միաժամանակ շրջակա բարձունքներից շարունակելով հրթիռահրետակոծությունը: Հունվարի 14-ի երեկոյան հակառակորդի հետեւակը վերստին մոտեցավ Մարտունի քաղաքի մատույցներին: Մարտի ընթացքում ծանր կորուստներ կրելով, հակառակորդը ստիպված նահանջեց: Նա միաժամանակ մարտ հրահրեց նաև Բերդաշենի ֆերմաներում: Հարեւան գյուղերից ժամանած ուժերի օգնությամբ, հայ մարտիկները հետ շարտեցին թշնամուն:

Հունվարի 19-20-ին վերստին հրթիռահրետանային հարձակման ենթարկվեցին Ստեփանակերտ և Մարտունի քաղաքները: Մարտունիում զոհվեց 9, ծանր վիրավորվեց 6 խաղաղ բնակիչ:

¹ Նույն տեղում, ր. 37բ:

Ստեփանակերտում սպանվեց 3, վիրավորվեց 1 խաղաղ բնակիչ: Կրկժանում շարունակվող մարտերը պսակվեցին փայլուն հաջողությամբ. Կրկժանն ազատագրվեց, հայ մարտիկները դիրքեր գրադեցրին տիրապետող բարձունքների վրա:

Մի շարք հեղինակներ Կրկժանի ազատագրման օրը, սխալմամբ, առաջ են տվել: Թերեւս, դա գալիս է Բ. Ուլուբաբյանից, ըստ որի Կրկժանն ազատագրվել է հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը¹: Նրան էլ, ըստ երեւույթին, հետագայում կրկնել են մյուս հեղինակները²: Փաստորեն, Կրկժանի ազատագրման լուրը երեւանում ուշացումով ստացվեց, քանի որ, հենց Բ. Ուլուբաբյանի վկայությամբ, հունվարի 20-ին ու նախորդ մի քանի օրերին «կապ չկար Արցախի հետ»³: Արխիվում պահվող «Ռադիոկայանի ապարատային մատյան»-ում, ուր ժամ առ ժամ եւ թույլ առ թույլ գրանցվում էին տեղի ունեցող իրադարձությունները, արձանագրված է, որ Կրկժանի ազատագրումը սկսվել է 1992 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը եւ ավարտվել հունվարի 20-ին⁴:

Այն ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի լուրջ հաղթանակներից էր, ինչն իր հոգեբանական ու քաղաքական նշանակությամբ գրեթե հավասարագոր էր զուտ ռազմականին: Դրանով Ստեփանակերտն ազատվեց վտանգավոր արվարձանից, որն ադրբեջանական հրամանատարությունը դիտում էր իբրեւ ռազմական հենակետ Արցախի մայրաքաղաք ներխուժելու համար: Մյուս կողմից, ամրապնդվեց ու բազմապատկվեց հայ մարտիկների հաղթանակի հասնելու հավատը, կամքն ու վճռականությունը:

Հունվարի 25-ի լույս 26-ի գիշերն անհանգիստ էր նաեւ Քարին-տակում: Շուշիի սարահարթից հակառակորդը վառվող անվադողեր գլորեց, անկանոն կրակ բացեց եւ, շեղելով գյուղի պաշտպանների ուշադրությունը, հարձակման անցավ գրեթե բոլոր կողմերից: Պահակետերում ուժեղ դիմադրություն ցույց տրվեց հակառակորդի գերակշռող ուժերին: Օրհասական պահին քարինտակցիներին օգնության հասան հարեւան գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները: Մարտադաշտում թողնելով շուրջ 8 տասնյակ դիակ [17], մի

¹ Բ. Ուլուբաբյան, *Արցախի դասնությունը*, էջ 339, նույնի՝ *Արցախյան գոյադպրաբարի սարեգրությունը*, էջ 315:
² Արմեն Տոնոյան, *Արցախեան ազատագրական դպրաբար: ԱՄՆ, 1998*, էջ 43, Մերգեյ Մելիքյան, *Լեռնային Ղարաբաղի Հանրադեմոկրատիկ ապստամբությունը: Երեւան, 1998*, էջ 176, Ս. Հասարաբյան, *Գոյամաս*, էջ 7:
³ Բ. Ուլուբաբյան, *Արցախյան գոյադպրաբարի սարեգրությունը*, էջ 314-315:
⁴ Տես Ա. Տեր-Տադևոսյանի՝ հունվարի 20-ի ժամը 10⁰⁰-ի օպերատիվ իրախճանկի մասին զեկույցը: ՊԲԿԱ, Ռադիոկայանի աղյուսային մասյան, ք. 70ք:

այդքանն էլ քարշ տալով իրենց հետ, մառախուղի քողի տակ հակառակորդը հետ քաշվեց: Ականի վրա պայթեց հակառակորդի ՀԻՄ-ն: Հայկական կողմը գոհեր եւ վիրավոր ունեցավ: Չոհեր եղան նաեւ խաղաղ բնակիչներից, որոնք մինչեւ վերջ օգնում էին կռվողներին՝ ինչով որ կարող էին: Մեծ էր Քարին-տակի հերոսամարտի ռազմաքաղաքական նշանակությունը: Այստեղ ջարդվեցին հակառակորդի հարվածային ուժերը: Դա սարսափով լցրեց Շուշիում բնավորվածների սրտերը: Քարին-տակը մնաց որպես հնարավոր հենակետ Շուշիի թշնամական հենակետին թիկունքից հարվածելու համար: Ժողովուրդն էլ ոգեպնդվեց եւ պատերազմական հետագա դժվարություններին դիմանալու կորով եւ ուժ ձեռք բերեց:

Հունվարի 27-ին հակառակորդը Հադրութի շրջանում զավթեց Ցորի մոտակա հուրիատ բարձունքը: Մի քանի ժամ տեւած մարտերի արդյունքում բարձունքն ազատագրվեց: Հունվարի 28-ին Ղայբալիշենից հարձակման ենթարկվեցին Ստեփանակերտի պաշտպանական դիրքերը: Ինքնապաշտպանական ուժերը հետ շարտեցին հակառակորդին եւ ժամանակավորապես տիրեցին Ղայբալիշենին: Մարտեր ընթացան նաեւ Ջանհասան գյուղի մոտ, ուր զոհվեց 3 ազատամարտիկ: Հետախուզության տվյալներով, հակառակորդը ակտիվ պատրաստություն էր տեսնում եւ նորանոր ուժեր կենտրոնացնում Աղդամում: Հետեւանքն իրեն սպասել չտվեց: Հունվարի 31-ին հրետանի, 8 ՁՓ եւ 2 Տ-72 կիրառելով [18], հակառակորդը հարձակում սկսեց Ասկերանի, Խրամորթի, Խանաբաղի, Սառնաղբյուրի եւ Նախիջեւանիկի ուղղությամբ: Նա մասնակի հաջողության հասավ միայն Խրամորթում, իսկ մյուս ուղղություններում կազմակերպված ու համառ դիմադրության հանդիպեց: Երեկոյան կողմ հակահարձակման անցնելով, հայկական ուժերն ազատագրեցին Խրամորթը: Սպանվեց մեկ, վիրավորվեց 12 զինվոր: Թշնամին կորցրեց ավելի քան 30 սպանված, 1 ՁՓ եւ 15 ավտոմատ¹: Գիշերվա կողմ մարտերը հանդարտվեցին: Հրետակոծությունից հետո, հակառակորդը փորձեց առաջանալ Կարմիրավան, Արծվաշեն (Սեյսուլան), Յարմջա եւ Մարաղա բնակավայրերի ուղղությամբ, սակայն հակահարված ստացավ: Շարունակվեցին Ստեփանակերտի, Մարտունու, Ասկերանի կատաղի հրթիռահրետակոծությունները... Թշնամին միայն հեռահար հրետակոծությամբ փորձեց փոխհատուցել մարտադաշտում կրած պարտությունները, այլ միջոց չգտնելով հայ մարտիկների աննկուն ոգին ընկճելու համար:

¹ ՊԲԿԱ, Ռադիոկայանի աղյուսային մասյան, ք.108ք:

ՎՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԳ

ԹՇՆԱՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՈՒՄԸ 1992 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ

1. ՌԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փետրվարի առաջին եռօրյակում լարված իրավիճակ էր ստեղծվել ԼՂՀ բոլոր շրջաններում: Անխնա հրթիռահրետակոծվում էին խաղաղ բնակավայրերը: Մարտեր էին ընթանում նաև Ասկերանի շրջանի Նախիջեանիկ գյուղում, որտեղից հակառակորդը հետ շարտվեց, կրելով կենդանի ուժի կորուստներ: Փետրվարի 3-ին էլս հետ մղվեցին ռազմաճակատի ամբողջ երկայնքով հակառակորդի ձեռնարկած բոլոր գրոհները: Փետրվարի 4-ին տեղական նշանակության մարտեր ընթացան ռազմաճակատի առանձին հատվածներում: Մասնավորապես, հետ մղվեց Հադրութի շրջանի Ջրակուս գյուղի վրա հակառակորդի հարձակումը: Չախողվեց նաև թշնամու գրոհը Կիչանի վրա, սակայն գյուղի շուրջ լարվածությունը չէր թուլանում նաև հաջորդ օրերին: Ծանր իրավիճակ էր տիրում նաև Սեչսուլանում: Փետրվարի 9-ին հակառակորդը մեծ ուժերով էլ տանկերի ուղեկցությամբ վերստին հարձակվեց Կիչանի վրա:

ԼՂՀ սահմանների ողջ երկայնքով հակառակորդի զինված կազմավորումների չդադարող հարձակումներին ի պատասխան էլ թիկունքն ապահովելու նպատակով, ինքնապաշտպանական ուժերը ձեռնարկեցին ռազմական հենակետի վերածված Մալիբեկլուի ազատագրումը, որը սկսվեց փետրվարի 9-ի ժամը 21-ին:

Հայերը, արյունահեղությունից խուսափելու համար, ադրբեջանական բնակչությանը հեռանալու հնարավորություն տվեցին[19]: Իսկ Մալիբեկլուում հենց դրան էին սպասում: Խաղաղ բնակչությունը հոգնել էր Ադրբեջանի ղեկավարության արկածախնդրությունից էլ ստահող խոստումներից: Գիշերվա ընթացքում գյուղը գրեթե դատարկվեց: Հեռացողներն անցան մոտակա Ղուշչուլար գյուղը:

Նախօրյակին թույլ տրված սխալները շտկելուց էլ ուժերի վերախմբավորում կատարելուց հետո, ինքնապաշտպանական ուժերը փետրվարի 10-ի առավոտյան վերսկսեցին գրոհը, ինչը հաջողու-

թյամբ զարգացավ: Հատկապես փայլուն էին գործում 1-ին վաշտի մարտիկները: Նույն օրվա երեկոյան, կանխելով հակառակորդին, հայ մարտիկները հարված հասցրին Ղուշչուլարում հապճեպ դիրքավորվող ադրբեջանցի զինյալներին: Փետրվարի 11-ին վնասագերծվեցին նաև Ներքին էլ Վերին Ղուշչուլար գյուղերը: Եռօրյա մարտերի արդյունքում հայ ռազմիկների վաստակած հաղթանակն այլևս անշրջելի էր, ինչին անգոր էին խանգարել անգամ Շուշիից էլ Ջանհասանից Ստեփանակերտի վրա արձակված հարյուրավոր հրթիռներն ու արկերը: Մալիբեկլուի ազատագրումը, ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հերթական հաջողությունը լինելով, նաև մի կարևոր քայլ էր դեպի փաստացի անկախության հաստատում: Մայրաքաղաքն ազատվեց շրջափակման շղթայի էլս մի օղակից: Վերաբացվեց Ստեփանակերտի էլ Մարտունու շրջանի բնակավայրերի միջև հաղորդակցության ամենակարճ ճանապարհը: Արցախում բնավորված ադրբեջանական զինված կազմավորումները էլս մի ուժեղ հարված ստացան, ինչը նաև ահեղ զգուշացում էր նշանակում: Եվ, վերջապես ռազմական այդ հաղթանակը լավագույն նվերն էր ազգային զարթոնքի ու վերածննդի օրվա առթիվ, ասել է թե՛ վերականգնվեց որեւէ նշանակալի տարելից նոր հաղթանակով նշելու ավանդույթը...

Մալիբեկլուի էլ Ղուշչուլարի ռազմակայանների կորստից անմիջապես հետո հակառակորդը լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Գիշերը հրետակոծելով Սեչսուլանը, նա փետրվարի 13-ին, 4 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ, Փափրավենդից հարձակվեց գյուղի պաշտպանական դիրքերի վրա: Հայ մարտիկներն արժանի հակահարված հասցրին հակառակորդին: Փետրվարի 14-ին ադրբեջանցիները Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը հրթիռակոծեցին ՄՄ-21 «Գրադ» հրթիռահրետանային կայանքով, որը միջազգային կոնվենցիաներով արգելված է կիրառել խաղաղ բնակչության դեմ: Բայց էլ այնպես այդ զինատեսակի օգտագործումը շուրջ 70 հազարանոց Ստեփանակերտի ու շրջակա հայկական բնակավայրերի դեմ, ընդունեց մշտական ու անխնա բնույթ:

Փետրվարի 16-ին հարձակման ենթարկվեց Տոդի զինեզործարանի դիրքը: Հարձակումը հետ մղվեց: «Գրադ» կայանքից ինտենսիվ հրթիռակոծության ենթարկվեց Ստեփանակերտը: Սպանվեց 7, վիրավորվեց 17 խաղաղ բնակիչ: Ի պատասխան, հաջորդ օրը ինքնապաշտպանական ջոկատները մարտական գործողություններ ծավալեցին Ղարադաղլու գյուղի թշնամական հենակետի ուղղությամբ: Մասնակցելու պատրաստակամություն հանդես բերեցին

շրջակա գրեթե բոլոր գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները: Մարտունու եւ ճարտարի կամավորները, Գիշու, «Կարվինի», Սպիտակաշենի, Հաղորտու, Կաղարծու եւ Ննգու զինված խմբերը գիշերը նախապես հարմար դիրքեր զբաղեցրին: Աշանի եւ Բերդաշենի ջոկատները բռնեցին մերձակա բարձունքները: Մուշկապատի բարձունքից ականանետն ու ինքնաշեն թնդանոթը, իսկ Կաղարծու բարձունքից ՅՄՍ-ն կրակի տակ առան Ղարադաղլուն: «Հրետանային նախապատրաստությունից» հետո ինքնապաշտպանական ջոկատները տարբեր կողմերից առաջանալով, սկսեցին տու՛ն առ տուն ազատագրել այն: Չորսբլուրից տեղացող կրակի տակ հայտնված հակառակորդը խուճապի էր մատնվել: Այն լիակատար դադարով, երբ Աշոտ Ղուլյանի վաշտն ու Մանվել Եղիազարյանի «Արաբո» ջոկատը շեշտակի հարվածով ձեղքեցին թշնամու պաշտպանական գիծը: Դիմադրությունը շարունակվում էր դպրոցի շենքում եւ շտաբում, ուր հավաքվել էին ադրբեջանցի բոլոր զինյալները: Սեղմելով շրջապատման օդակը եւ միաժամանակ մաքրելով ազատագրված ամբողջ տարածքը, ինքնապաշտպանական ջոկատները, վերջին հարվածով ավարտին հասցրին չարյաց բույն դարձած Ղարադաղլուի վնասագերծումը: Մարտական գործողությունների ամենաեռուն պահին Ամիրանլարից գրոհելով Մարտունու ուղղությամբ, հակառակորդը փորձեց շեղել ազատամարտիկների ուշադրությունը, սակայն, ապարդյուն... Ղարադաղլուում առգրավվեց 70 միավոր մարտական զենք ու մեծ քանակությամբ զինամթերք, ոչնչացվեց 15 ասկյար, գերվեց շուրջ 6 տասնյակ մարդ: Հայերից զոհվեցին 2, վիրավորվեցին 8 մարտիկներ¹:

Այդ նույն օրը Արցախի մյուս շրջաններում տեղակա՛ն նշանակության մարտեր էին ընթանում: Մի քանի օր շարունակ պաշտպանական ծանր մարտեր էին մղում Մարադայի պաշտպանները:

Փետրվարի 18-ին հակառակորդի հետեւակը (շուրջ 200 զինվոր), հրետանու, տանկի, 3 ՁՓ-ի եւ 3 քարշակի ուղեկցությամբ, գրոհեց Շահումյանի շրջանի Մանաշիդ եւ Էրքեջ գյուղերը: Հակառակորդին հաջողվեց ներխուժել Մանաշիդ, որտեղ գտնվելու 20 բոպենների ընթացքում հասցրեց հրի մատնել մի քանի տուն: Հակահարձակման անցնելով, Շահումյանի ինքնապաշտպանության ուժերը դուրս քշեցին հակառակորդին, խփելով 3 միավոր զրահատեխնիկա: Մարտի ժամանակ վիրավորվեց 3 եւ զոհվեց 1 հայ մարտիկ: Հակառակորդի կորուստները 3 անգամ շատ էին:

¹ «Մարտիկ», ք.15, 1996թ., «Ազատ Արցախ», ք.19, 1999թ.:

Փետրվարի 19-ին իրադրությունը լարված էր նաեւ Մարտակերտի շրջանում: Հակառակորդը հարձակումներ էր գործում Միր-Բաշիր քաղաքից, օգտագործելով հրետանի, այդ թվում 100 մմ թնդանոթ եւ «Ալազան» տիպի հրթիռներ:

Փետրվարի 20-ին ինտենսիվ մարտեր ընթացան Մարադա, Սեյտուլյան, Կարմիրավան, Քաջավան բնակավայրերի պաշտպանական բնագծերի ողջ երկայնքով: Հակառակորդը, կորուստներ կրելով, հետ շարտվեց: Մարտունու ինքնապաշտպանության ստորաբաժանումներն ախտյան բանակին հակահարված հասցրին՝ նպատակակետ դարձնելով Վերին Վեյսալուի ռազմական հենակետը: Այն, փակելով Մարտունու շրջանի խոշոր բնակավայրերից մեկի՝ ճարտարի հաղորդակցության ճանապարհը շրջկենտրոնի հետ, հարաձու՛ն վտանգ էր ներկայացնում ճարտարցիների համար: Վերին Վեյսալուի ռազմագործողությունն ավելի կազմակերպված անցավ¹: Երեկոյան, 1 ՅՄՍ-2 եւ 1 ՅՄՍ-1 հսկողության տակ առան Ալիբալիի խաչմերուկը, այնտեղով օգնություն հասցնելու հակառակորդի փորձերը խափանելու նպատակով: 2 ՅՄՍ-1 եւ 1 ՅՄՍ-2 առաջանալով ճարտար գյուղի ճանապարհով, դարանակալեցին մի փոքրիկ բարձունքի հետեւում: Լույսը բացվելուն պես ազատամարտիկները գործի դրեցին 120 մմ-ոց ականանետը: Փոխիրաձգությունից անմիջապես հետո վեյսալվեցիները խմբերով կամ միայնակ ճողոպրեցին խաչմերուկի ուղղությամբ: ՄՀՆՋ-այինները հուսահատ կատաղությամբ դիմադրում էին, փորձելով ապահովել մյուսների փախուստը: Ինչպես եւ սպասվում էր, Ֆիզուլու կողմից մեքենաների շարասյուն երեւաց: Խաչմերուկը հսկող ՅՄՍ-ները կրակ բացեցին շարասյան ուղղությամբ եւ ստիպեցին հակառակորդի օգնական ուժերին՝ հետ սողալ: Ստեփանակերտի ջոկատը գրավեց տների առաջին շարքը եւ առաջացավ դեպի գյուղամեջ: Աջից մտան Ղուզե ճարտարի, իսկ ձախից՝ Գիշու ազատամարտիկները: Հակառակորդի 2 հիմնական պահակակետերը գրավվեցին: Հայ մարտիկները Շար-քարի ուղղությամբ «միջանցք» էին թողել խաղաղ բնակչության համար, բայց այդտեղով մեծամասամբ «իզիթները» հեռացան...

Ինքնապաշտպանական ջոկատները, մարտական տեխնիկայի աջակցությամբ, ճնշեցին դիմադրության վերջին կետերը եւ փետրվարի 22-ին ազատագրեցին գյուղը:

Ղարադաղլուի եւ Վերին Վեյսալուի ռազմագործողությունները կարելուր հաղթանակներ էին Մարտունու շրջանում միասնական ճա-

¹ ՊԲԿԱ, ՕՀ ԱՏ, № 140, ք.6:

կատ ու ապահով թիկունք ստեղծելու, ինչպես նաեւ Մարտունին անառիկ դարձնելու եւ Արցախի ԻՊՈՒ այդ ուղղության զորամասում մարտական լավագույն ավանդույթներ արձանագրելու առումով:

Փետրվարի 25-ի առավոտյան ժամը 4³⁰-ից մինչեւ 17⁰⁰-ն կատարի մարտեր ընթացան Մարաղա, Սեյսուլան, Կարմիրավան գյուղերի բնագծում, Մարտակերտ շրջկենտրոնի մատույցներում, ինչպես նաեւ Կիչանում: Հակառակորդը գերակշռող ուժերով փորձեց գրավել այն, սակայն, ցանկացած գնով թշնամուն կանգնեցնելու հրաման ստացած հայ մարտիկները հետ շարտեցին նրան: Սեյսուլանում եւ Մարաղայում զգալի ավերածություններ եղան: Հայկական կողմը 2 զոհ եւ 15 վիրավոր ունեցավ: Հակառակորդն ավելի ծանր կորուստներ կրեց:

2. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն այլ բնույթ ու ծավալ էր ստանում: Հակառակորդի ագրեսիվ պլանների ու ձեռնարկումների վտանգավորությունը հրամայաբար պահանջում էր դիմել վճռական քայլերի եւ հապշտապ կանխել նրան: Այդ խնդիրը լավագույնս լուծած ինքնապաշտպանական ջոկատները պետական ու օրենսդրական աջակցության եւ խրախուսանքի կարիք էին զգում: Ահա թե ինչու, դեռեւս Խոջալուի ազատագրման նախօրյակին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հատուկ որոշում ընդունեց ԼՂՀ ԻՊՈՒ-ի մասին: 1992թ. փետրվարի 24-ին ընդունված այդ որոշման մեջ մասնավորապես արձանագրված էր. «Ելնելով նրանից, որ հայ բնակչության նկատմամբ իրականացվող ցեղասպանության, կոդոպուտի, բռնությունների եւ հայկական գյուղերի բնակիչների բռնատեղահանության հետեւանքով ստեղծվել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատներ, աչքի առաջ ունենալով Ադրբեջանի անթաքույց զավթողական գործողությունները ԼՂՀ-ի դեմ, զորահավաքի միջոցների հաշվառման եւ հանրապետության պաշտպանության ապահովման նպատակով, կազմավորված զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր եւ դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Հանձնարարել շրջգործկոմներին եւ զինկոմիսարիատներին՝ ամսվա ընթացքում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում եւ զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: ԻՊՈՒ-ում ընդգրկված զինապարտներին

համարել զինվորական ծառայության զորակոչվածներ: Հանձնարարել ԼՂՀ զինկոմիսարիատներին՝ ԻՊՈՒ շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ անցկացնել ԼՂՀ շահերի համար պայքարում զոհված, անհայտ կորած եւ հաշված անձանց վերահաշվառում»¹: Ճիշտ ժամանակին ընդունված այս որոշումը կարելուք քայլ էր ԼՂՀ պաշտպանունակության բարձրացման ու ազգային անվտանգության ապահովման ճանապարհին եւ դրականորեն ազդեց հետագա իրադարձությունների վրա: Դա թերեւս առաջինը զգացին ԻՊՈՒ մարտիկները...

Հերթական փայլուն հաջողությունը Խոջալուի կրակակետերի ճնշման ռազմագործողությունն էր, որ սկսվեց փետրվարի 25-ի երեկոյան: Ինքնապաշտպանության ուժերը զբաղեցնելով ռազմավարական կրակադիրքեր, շրջապատեցին այդ կարելուք ռազմական հեռակետը, որտեղից սպասվող վտանգը գնալով ավելի սպառնալի չափեր էր ընդունում:

Ձրահամեքենաներն ուժեղ կրակի տակ առան հակառակորդի դիմադրության կետերը: Տարբեր կողմերից հայ մարտիկները գրոհի էլան: Այս ու այնտեղ բոցավառվեցին կրակակետերի վերածված տները: Խոջալուի զինյալները խուճապի մատնվեցին: Սակայն մինչեւ փետրվարի 26-ի կեսօրը առանձին տներում դեռեւս դիմադրողներ կային: Հատկապես կատարի դիմադրություն ցույց տվեցին հինգհարկանի շենքում ամրացած շուրջ 100 զինյալները²: Սակայն, հայ մարտիկների ճնշմանը չդիմանալով, նրանք եւս հարկադրված էին լքել իրենց դիրքերը եւ ճողոպրել Հացոտ լեռան ուղղությամբ:

Մինչ Խոջալուում մարտեր էին ընթանում, Աղդամի զինյալները փորձեցին օգնության հասնել: Նրանց նույնիսկ հաջողվեց մոտենալ Նախիջեւանի կի մոտակա Սեւ լեռանը, սակայն «առավելագույն առաջխաղացման» այս վայրում կորցնելով 1 տանկ, հետ քաշվեցին:

Անպաշտպան գառների կեցվածք ընդունած ադրբեջանցիները Խոջալուում թողել էին 3 հրթիռային կայանք, 100 մմ թնդանոթ, 3 միավոր զրահատեխնիկա, 100 միավոր մարտական զենք եւ զինամթերքի վիթխարի պաշարներ³: Մեծ էր Խոջալուի ազատագրման ռազմաքաղաքական նշանակությունը: Նախ, վերականգնվեց հաղորդակցությունը Ասկերան ավանի հետ, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք առգրավվեց, հոգեբանական հուսալի նեցուկ եղավ խուլ շրջա-

¹ ԼՂՀ Պետական արխիվ (ՊԱ), Ֆ.1, ց.5, ր.մ.13. կ.1, ք.24:

² Насиман Джаблы, Хочалы гиреыны. Баку, 1992, с.17.

³ «Արխիվ», ք. 9, 1996թ.:

փակման մեջ գտնվող արցախահայության համար, թեկուզեւ ժամանակավոր՝ կապ ստեղծվեց արտաքին աշխարհի հետ, կանխվեց Ասկերանի վրայով Ստեփանակերտ ներխուժելու՝ հակառակորդի վաղեմի ծրագիրը, ծանր հարված հասցվեց Ադրբեջանի ռազմական մեքենային, էլ ավելի սրվեցին Բաքվի իշխանությունների և ընդդիմության ներհակությունները:

6 միավոր զրահատեխնիկայի և 3 թնդանոթի աջակցությամբ՝ փետրվարի 26-ին հակառակորդը վերստին գրոհեց Սեյսուլանը: Գյուղը պաշտպանող մարտիկները շրջապատման մեջ հայտնվեցին: Հակատանկային միջոցների և զրահատեխնիկայի բացակայությունը դժվարացնում, գրեթե անհնարին էր դարձնում հայ մարտիկների դիմադրությունը...

Փետրվարի 27-ին, փամփուշտների պակասի պատճառով, հայ մարտիկները դուրս եկան Սեյսուլանից¹: Նույն օրը ԼՂՀ ԻՊՈՒ-ի կողմից ձեռք բերվեց անդրանիկ ՄՍ-21 ռեակտիվ կայանքը՝ իր 80 հրթիռներով, ինչին այնքան սպասում էր արցախահայությունը:

2-ին դադարում նաեւ Ասկերան-Ստեփանակերտ ռազմավարական գծով ԼՂՀ տարածք ներխուժելու թշնամու համառ փորձերը: Երկու ռազմական ուղղաթիռների կրակի աջակցությամբ, նա հարձակողական գործողություններ էր վարում Ասկերանի 2-րդ և 3-րդ պահակակետերի ուղղությամբ: Եվս 2 ուղղաթիռներ հետեւակայիններ ու ռազմամթերք էին փոխադրում և անընդհատ համալրում հարձակվողների շարքերը: Այդուհանդերձ, բոլոր գրոհները հետ մղվեցին:

Փետրվարի 28-ի լույս 29-ի գիշերը մարտական գործողությունները շարունակվեցին Մարտակերտում, Կարմիրավանում և Քաջավանում: Հաջորդ օրը մարտեր մղվեցին ոչ միայն այս գյուղերում, այլև Կիչանում ու Չափարում: Երկարատեւ ու համառ պայքարի արդյունքում ադրբեջանական ռազմակայաններից մեկի հարցը լուծվեց առանց արյունահեղության. ժամը 16-ին ուղղաթիռներով տեղահանվեց Մարտակերտի շրջանի Ումուլբուլու գյուղը, որն անցավ հայ մարտիկների վերահսկողության տակ: Իսկ հակառակորդը հրի մատուցեց նույն շրջանի հայկական Յարմջա գյուղը...

ՉԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՂԱՅՆՈՒՄՆ ՈՒ ՇԵՏԱԳԱ ՍԱՍԿԱՅՈՒՄԸ

1992 թ. մարտ ամիսը նշանավորվեց Ադրբեջանի զինված կազմավորումների կողմից ԼՂՀ խաղաղ բնակավայրերի մշտական հրթիռահրետակոծություններով և զրահատեխնիկայի ու ռազմական ուղղաթիռների կիրառմամբ լայնածավալ հարձակումներով: Միաժամանակ չէին դադարում նաեւ օտարերկրյա միջնորդական առաքելությունները, իսկ որոշ տերությունների կողմից՝ նույնիսկ բացահայտ սպառնալիքներն ու հոխորտանքները: Ի պատիվ հայ նորօրյա ռազմական գործիչների, այդ ամենը, սակայն, արգելք կամ խոչընդոտ չդիտվեցին Արցախն ադրբեջանական զինյալներից ու ռազմական հենակետերից ազատելու պատմական առաքելությունն իրագործելու ճանապարհին...

Ամսվա առաջին օրերին հակառակորդին հաջողվեց ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելու միջոցով ռազմաճակատի առանձին տեղամասերում ժամանակավոր հաջողության հասնել: Միայն մարտի 3-ին հակառակորդը Սրխավենդ մտցրեց 2 տանկ, 6 ՀՄՄ, 2 ՁՓ, 2 քարշակ, 1 ավտոբուս, 3 «ՈՒԱՁ», 4 «ԳԱՁ-66», 2 «Ուրալ», 3 թնդանոթ, իսկ հաջորդ օրը 6 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակվեց Ղազանչիի վրա: Գյուղը պաշտպանող վաշտից 27 զինվոր դիրքավորվել էին Խաչին-յալ, Ետե-խամ, Կըրըվերեն-խութ և Խաչին-խութ բարձունքների վրա: Նախօրոք ակնապատվել էր Ալիադալու-Ղազանչի ճանապարհը: Սակայն թշնամուն հաջողվեց մոտենալ գյուղին, զավթել Ետե-խամ և Կըրըվերեն-խութ բարձունքները: Հայ ռազմիկները մարտն ընդունեցին վաշտի շտաբի մատուցներում: 3 ժամ կատաղի փոխ հրաձգություն տեղի ունեցավ: Գյուղը հրետակոծվում էր Սրխավենդից, Բաշ Գյունեփայայից, Մանիքլուից, Ալիադալուից: Այդուհանդերձ, ազատամարտիկներին հաջողվեց ամուր պահել Խաչին-խութը... Ղազանչիի ուղղությամբ հաջողությունը զարգացնելու մտադրությամբ, հակառակորդը ժամը 13-ին հարձակվեց նաեւ Կիչանի վրա, ներգրավելով 5 թնդանոթ, 3 տանկ, 5 ՀՄՄ, 2 ՁՓ, 2 ՀԻՄՄ¹: Երկու ճակատներում էլ հայ մարտիկները դիմադրեցին

¹ ՊԲԿԱ, ՕՀ ԱՏ, № 140, ք. 21:

մինչև ժամը 20-ը: Վաղ առավոտյան անգամ վերադարձվեցին Ղազանչիի բարձունքները, բացի Կըրըվերեն-խութից, ուր հակառակորդը մեծ ուժեր էր կուտակել: Կանգ չառնելով մեծաթիվ կորուստների առաջ (միայն ետե-խամի ուղղությունում թշնամին 75 զինվոր կորցրեց), ադրբեջանցիները շարունակում էին հարձակումները: Գյուղի պաշտպանները, նոր զոհերից խուսափելու համար, կազմակերպված նահանջեցին¹: Դրանից ոգեւորված հակառակորդը Փափրավենդից, 4 ՁՓ-ի աջակցությամբ, հարձակվեց Մարտակերտի ուղղությամբ, շարունակելով Կիչան, Քաջավան, Կարմիրավան, Մարաղա բնակավայրերի հրետակոծությունը:

Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ԻՊՈՒ կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաև կառավարման համակարգը: Վաղուց հասունացել էր ԻՊՈՒ փորձառու հրամանատար ունենալու պահը: Այդ բարձր ու պատասխանատու պաշտոնը ստանձնելու պատրաստակամություն կարող էին հանդես բերել շատերը: Բայց Ա. Տեր-Թադեոսյանի թեկնածությունը առարկության ենթակա չէր, քանզի նա մի շարք փայլուն ռազմագործողություններ իրականացնելով, բավական հեղինակություն ու վստահություն էր վաստակել, արժանացել համընդհանուր ճանաչման: Մյուս կողմից, կադրային սպայի ու աֆղանական պատերազմի փորձը նրան թույլ պետք է տային լավագույնս կատարել ԻՊՈՒ հրամանատարի պարտականությունները: ԼԴՀ ԳԽ նախագահության 1992թ. մարտի 4-ի որոշմամբ գնդապետ Ա. Ի. Տեր-Թադեոսյանը նշանակվեց Արցախի ԻՊՈՒ հրամանատար²: Նույն օրը հաստատվեց նաև ԼԴՀ պաշտպանության խորհրդի կազմը, որը ներկայացրել էր ԼԴՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը: Պաշտպանության խորհրդում ընդգրկվեցին Ա. Մկրտչյանը (նախագահ), Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Ս. Սարգսյանը, Ա. Տեր-Թադեոսյանը, Ռ. Քոչարյանը և Ա. Կարապետյանը³:

Մարտի 6-ին ծանր պաշտպանական մարտեր էին մղվում Ասկերանի մատույցներում և Կիչանում: Ասկերանի վրա հակառակորդը շարժեց 1 Տ-72 և 1 ՂՄՍ, «Գրադ» կայանքից հրթիռակոծելով բնակելի թաղամասերը: Սակայն, ԻՊՈՒ դիմադրությունը հաղթահարելու հակառակորդի բոլոր փորձերը խափանվեցին: Հա-

¹ «Մարտիկ», № 5, 1994թ.:

² ԼԴՀ ՊԱ, ֆ.1, ց.5, դ.մ.13, կ.1, ք.26:

³ Նույն տղում, ք.29:

ջորդ օրը, ժամը 5³⁰-ին Ասկերանի մատույցներում մարտերը վերակազմեցին: Հայ ռազմիկները կասեցրին բոլոր գրոհները և հետ շարտեցին հակառակորդին[20]:

Մարտի 11-ին Ասկերանի ԻՊՈՒ-ը ռազմագործողություն ձեռնարկեցին հանձնված դիրքերը վերադարձնելու նպատակով: Ծավալված մարտերի արդյունքում հակառակորդի խմբավորումը գլխովին ջախջախվեց: Ոչնչացվեցին կամ առգրավվեցին 1 Տ-72, 3 ՂՄՍ-2, 2 ՁՓ, 1 թնդանոթ: Նույն օրը ԻՊՈՒ-ը ռազմագործողություն սկսեցին նաև Սրխավենդի կրակակետերի վնասագերծման նպատակով: Ազատամարտիկների հարվածային ուժերը տարբեր կողմերից առաջ էին շարժվում: Ադրբեջանցի զինյալները նրանց դիմավորեցին փոթորկալի կրակով: Իսկ երբ հայ մարտիկները մոտեցան Սրխավենդի առաջին տներին, ադրբեջանցիները խառնի-խուռն կրակելով, փորձեցին նահանջել: «Շիլկա» կայանքից կրակի տակ առնվեցին հակառակորդի առաջավոր դիրքերը: Ազատամարտիկներն արիաբար առաջանում էին, արհամարհելով տների պատուհաններից տեղացող գնդացրային ու ավտոմատային կրակահերթերը: Հակառակորդը, չդիմանալով հայ մարտիկների անկասելի գրոհին, սկսեց փախչել: Նրան խուճապի էր մատնել հատկապես Սրխավենդի խորքի տներում բռնկված հրդեհը: Դեռևս գիշերը գրոհային ջոկատը սրընթաց մտել էր գյուղ և հրդեհի օջախներ ստեղծելու միջոցով հոգեբանորեն ներգործել հակառակորդի վրա: Երեկոյան կողմ գյուղն ազատագրվեց, ճնշվեցին բոլոր կրակակետերը: Պահակակետեր կարգվեցին, իսկ ազատամարտիկների շրջիկ խմբերը «սանրեցին» գյուղի տարածքը: Առգրավվեց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք¹:

Դժբախտաբար հնարավոր չեղավ խուսափել կորուստներից: Մարտի 12-ին Բաշ-Գյունեփայա գյուղի համար մղված մարտում, գերիշխող բարձունքին տիրած 1-ին վաշտի 9 մարտիկները՝ ուղեցույցի հետ հայտնվեցին շրջապատման մեջ, և անհավասար մարտում ընկան հերոսի մահով: Այդ օրերին ազատագրվեցին նաև Մանիբլու, Խաթունբեյլու, Բաշ-Գյունեփայա, Օրթափայա բնակավայրերը: Սրխավենդի ու շրջակա գյուղերի կրակակետերի ոչնչացման ժամանակ Աղդամի շրջանից փորձեցին օգնության հասնել, նույնիսկ, ձեղքել ռազմաճակատի մի այլ տեղամաս և մխրձվել Ինքնապաշտպանության ուժերի դասավորության խորքը, դրանով, իբր, հարկադրելով ուժեր հանել Սրխավենդի ճակատից: Այդ իսկ նպատակով, Աղդամի շրջանից 40 ասկյար զավթեցին

¹ «Մարտիկ», ք. 8, 1998թ.:

Խրամորթ գյուղի վրա իշխող բարձունքը: Ջրահամեքենայից ու գնդացիներից կրակ տեղալով զավթիչների ուղղությամբ, ազատամարտիկները գրոհեցին բարձունքը: Թշնամին հանկարծակիի եկավ, քանզի հայ հետեւակայինները գրոհել էին հակառակ թեւից: Խուճապն այնքան մեծ էր, որ հակառակորդն իսկույն ճողոպրեց: Ասկյարները նետում էին զենքն ու զինամթերքը, վերնահագուստները եւ ուղղակի գլորվում զառիթափով¹... Աղղամի շրջանից թշնամին կրկնեց հարձակումը, սակայն, մարտադաշտում թողնելով 12 դիակ, նահանջեց:

Մարտի 20-ին, թեւ 7 օրվա տեսողությամբ մարտական գործողությունները դադարեցնելու պայմանավորվածություն էր ձեռք բերվել, սակայն հակառակորդը շարունակում էր հրետակոծել ու հարձակման ենթարկել խաղաղ բնակավայրերը: Մարտի 21-ին թշնամին փորձեց զավթել Մարտունու մոտակա բարձունքը, սակայն հետ շարվեց: Նույն օրը, պատասխանելով հակառակորդի տեւական հրետակոծություններին, Շահումյանի ԻՊՈՒ հրետանավորները պատասխան կրակ բացեցին եւ Շաֆազ գյուղում ոչնչացրին 2 հրետանային կայանք ու 4 այլ կրակակետ: Մարտի 22-ին 2 ռազմական ուղղաթիռների աջակցությամբ, հակառակորդը հարձակվեց Շահումյանի շրջանի Կարաչինար ու Երբեջ բնակավայրերի ուղղությամբ: Ծավալված մարտերի արդյունքում, պայթեցվեցին հակառակորդի 2 թնդանոթ, 1 «Ուրալ» եւ ռազմամթերքի մի պահեստ: Այդ օրվանից հակառակորդի օդային հարձակումները, որոնք ակնհայտորեն իրականացնում էին 4-րդ բանակի ոչ ադրբեջանցի զինժառայողները, մշտական բնույթ ստացան:

Երեք օր շարունակ մարտեր էին մղվում Մարտունու մոտակա Ղուրուչուխ բարձունքի վրա: Հայ մարտիկները, Մոնթե Մելքոնյանի ղեկավարությամբ, հետ շարվեցին թշնամուն:

Մարտի 25-ին հակառակորդի 2 ՄԻ-24 ուղղաթիռներ վերստին օդային հարձակման ենթարկեցին Կարաչինար եւ Բուզլուխ գյուղերի պաշտպանական բնագծերը: Նույն օրը, հակառակորդը գրահատեխնիկայի աջակցությամբ հարձակվեց Տողի պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Միաժամանակ, 4 թնդանոթից հրետակոծվեց գյուղը: Հարձակումը կասեցվեց, հակառակորդը հետ շարվեց:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից եւ ղեկավարվելով ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին ԼՂՀ օ-

րենքի 24-րդ հոդվածով, Հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության կոմիտե: Պաշտպանության կոմիտեի նախագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել Պաշտպանության կոմիտեի կառուցվածքի, կանոնադրության եւ անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի, հետագայում՝ ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ կարելուր ու անհետաձգելի միջոցառումներ իրագործվեցին ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական հիմքի, սպառազինության ու տեխնիկայի հայթայթման ու մատակարարման, ԻՊՈՒ վարչության ձեւավորման ուղղությամբ¹:

Մարտի 27-ին հակառակորդը «Գրադ» կայանքից հրթիռակոծեց Շահումյան ավանը: Պատասխան կրակով ոչնչացվեց հակառակորդի 2 կրակակետ: Մարտերը շարունակվեցին նաեւ Կարաչինարում: Մարտի 28-ին հակառակորդը հրի մատնեց Դուլանլար գյուղը: Մարտի 29-ին հարձակման ենթարկվեց Չափարը: 8 ժամ տեւած մարտերի արդյունքում հակառակորդը հետ շարվեց: Թշնամին փորձ ձեռնարկեց գրավել Ասկերանի շրջանի պաշտպանական դիրքերը, իսկ Ջանհասանի կողմից՝ Ստեփանակերտին հարակից պաշտպանական բնագծերը: Մինչ այդ էլ, Ջանհասանից բազմիցս փորձել էին կտրել ԼՂՀ-ն արտաքին աշխարհի հետ կապող միակ օդային ճանապարհը: Հակառակորդն, օգտագործելով հրետանի, գրոհեց ու փորձեց տիրել Կրկժամից արեւմուտք ընկած գերիշխող բարձունքներին: Մեկ օր տեւած կատաղի մարտերի արդյունքում, հակառակորդը մեծ կորուստներ կրելով, ստիպված հետ քաշվեց: Ռազմավարական բարձունքները վերստին հայ մարտիկների վերահսկողության տակ անցան:

Ամսվա վերջին, թշնամին ակտիվացրեց իր գործողությունները, ստեղծելով կենդանի ուժի եւ տեխնիկայի հոծխումբ կուտակումներ: Չափարում ջարդ կրելով, հակառակորդը կատաղության


1. ԼՂՀ ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, № 3, ք. 2:

1. «Խաչեն», ք. 9, 1993թ.:

մաղձը թափում էր շրջանի խաղաղ բնակավայրերի վրա, հրետակոծելով Մարաղա, Կարմիրավան, Քաջավան, Մարտակերտ բնակավայրերը: Հայ մարտիկների գործողությունների շնորհիվ, մարտի 29-ին ազատագրվեց Ղազանչին: Մարտակերտի շրջանում խփվեց նաեւ հակառակորդի ուղղաթիռներից մեկը:

Մարտի 30-ին հակառակորդը փորձեց ճեղքել ու մտնել Մարտունի: 3 կողմից ձեռնարկված հարձակումը հետ մղվեց: Հաջորդ օրը եւս շրջկենտրոնի մատույցներում զինված ընդհարումները շարունակվեցին: Մարտի դուրս բերելով 1 տանկ ու 1 ՌՄՍ, թշնամին, այնուամենայնիվ, հաջողություն չունեցավ եւ ստիպված նահանջեց: Մարտի 31-ին Հաղրութի շրջանում ծավալված մարտերի արդյունքում հակահարձակման անցած ԻՊ ուժերն ազատագրեցին Հողեր գյուղը, առգրավելով հակառակորդի 1 Դ-30 հատիքի¹:


Այսպիսով, Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը նոր թափ ու ծավալներ էր ընդունում: Հակառակորդն առաջինը կիրառեց ծանր տեխնիկա, այդ թվում՝ S-72 տանկեր, զանգվածային ոչնչացման զենք՝ «Գրադ» հրթիռահրետանային համազարկային կայանքներ: Խորհրդային բանակի ռազմական պահեստներին տիրացած ադրբեջանցիները, համապատասխան «փորձ» ձեռք բերելով Շահումյանի շրջանում (1992 թ. հունվարի 13-ին առաջին անգամ «Գրադից» հրթիռակոծվեց Շահումյան ավանը), թիրախ էին դարձրել խաղաղ բնակավայրերը, մանավանդ՝ Ստեփանակերտը եւ ձգտում էին անխնա բնաջնջել Արցախի հայ բնակչությունը: Արցախի ԻՊ ուժերը թվապես ու սպառազինությամբ գերակշռող թշնամուն արժանի հակահարված էին հասցնում, ոչ միայն պաշտպանելով ԼՂՀ -ի սահմանները, այլ նաեւ վնասագերծելով հանրապետության ներսում գտնվող թշնամական ռազմահանգրվանները: Գարնանային պատերազմաշրջանի կեսերին Արցախում թշնամու ռազմական գլխավոր պլանդարմը շարունակում էր մնալ Շուշին, որի հետ ռազմավարական գիծ էին կազմում Քյոսալար, Ջանհասան, Կարազյավ գյուղերը: Առանց հիշյալ հենակայանների վնասագերծման ոչ միայն անհնար էր բարձրացնել ԼՂՀ պաշտպանունակությունը, այլ նաեւ ապահովել շատ թե քիչ բնականոց ներհանրապետական կյանք: Հասունանում էր Շուշիի ազատագրման պատմական պահը:



ԲԱԺԻՆ Բ

ՀՈՒՇԻԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԸՆԹԱՑՔԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

¹ ՊԲ ԿԱ, ՕՀ ՄՏ № 140, էջ 85:



«Երկիր», քիվ 88 (177), 12 մայիսի, 1992 թ.

ՎՈՒՄ ԱՄԱՅԻՆ

ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇԻ ԸՍՏՈՒՆԱՅՈՒՄԸ

1992 թ. ապրիլին առավել ցայտուն կերպով արտահայտվեցին Ադրբեջանի որդեգրած «բնաջնջողական պատերազմի» բաղադրականության տարրերը, ինչպիսիք խաղաղ բնակավայրերի դաժան հրթիռահրետակոծություններն էին, շրջափակումը, ուժերի ու միջոցների ակտիվ տեղաշարժերը եւ դրանց սպառնալից կուտակումները, որոնք չհասցրին սեղմված զսպանակի սկզբունքով բացազատվել սուկ ԼՂՀ ԻՊՈՒ կանխարգելիչ հարվածների շնորհիվ: Ամսվա առաջին օրերին հակառակորդը նկատելիորեն աշխուժացրեց իր գործողությունները ԼՂՀ բոլոր ռազմաճակատներում: Ծանր իրավիճակում հայտնվեց Շահումյանի շրջանը: Պաշտպանական մարտեր ընթացան Մարտակերտ շրջկենտրոնի, Ջանյաթաղի եւ Չափարի ուղղություններում, Ասկերանի շրջանի Սառնաղբյուր գյուղի մատույցներում: Հաղորթի շրջանում մարտերը ժավալվեցին Դուդուկչիից մինչեւ Քոչքեկ: Հայ մարտիկները, չերկնչելով հակառակորդի 5 ռազմական ուղղաթիռների եւ բազմաքանակ հետեւակի հարձակումներից, արիաբար պաշտպանեցին իրենց դիրքերը ու ստիպեցին նրան՝ հետ քաշվել:

Ապրիլի 2-ին մարտեր ընթացան Հաղորթի շրջանի Հողեր գյուղի մոտակայքում: Հակառակորդի հետեւակին աջակցում էին ռազմական ուղղաթիռները եւ մի քանի միավոր զրահատեխնիկա: Այդուհանդերձ, ԻՊՈՒ մարտիկներին հաջողվեց առանց կորուստների հետ շարտել թշնամուն: Ապրիլի 4-ին Հաղորթի շրջանում միջոցներ ձեռնարկվեցին Չիմանի թշնամական կրակակետերը լռեցնելու ուղղությամբ: Իսկ Շահումյանի շրջանում հակառակորդի գրոհային խումբը փորձեց դիրքեր զբաղեցնել Քյափազի սարավանջին եւ մշտական սպառնալիքի տակ պահել Բուզլուխ, Մանաշիղ եւ Վերին-շեն գյուղերը: Ապրիլի 5-ին, թերեւս կապված Ռուսաստանի արտոգործնախարար Ա. Կոզիրեւի՝ Ստեփանակերտ կատարվելիք այցի հետ, ի դեպ, որը նախատեսված ժամկետում այդպես էլ չկայացավ (արտոգործնախարարն Արցախ ժամանեց միայն ապրիլի 9-ին), ռազմաճակատներում հարաբերական անդորր էր տիրում:

Ապրիլի 7-ին Շուշիից եւ Ջանհասանից հրթիռահրետակոծության ենթարկվեցին Ստեփանակերտը, Քարին-տակ գյուղը: Հայտնի դարձավ, որ առաջիկա օրերին հակառակորդը լայնածավալ հարձակման է անցնելու: Գլխավոր հարվածը ծրագրվում էր հասցնել Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ, իսկ օժանդակը՝ Մարտակերտի եւ Հադրութի ուղղություններով: ԻՊՈՒ հրամանատարությունն արեւելյան սահմաններում տեղակայված ստորաբաժանումները մարտական լրիվ պատրաստության բերեց եւ լրացուցիչ միջոցներ ձեռնարկեց թշնամու հարձակումը կասեցնելու համար¹:

Ապրիլի 8-ի երեկոյան պաշտպանական ծանր մարտեր ծավալվեցին Հադրութի շրջանի Ծամձոր գյուղում: ԻՊՈՒ կազմակերպված գործողությունների արդյունքում թշնամին հետ շարտվեց: Մարտակերտի շրջանում հայ մարտիկները ռազմագործողություն ծավալեցին Աղդաբանի թշնամական կրակակետերը ճնշելու նպատակով: Մարտական խնդիրը կատարվեց, սակայն հայ ազատամարտիկները գյուղում չմնացին: Այս եւ Ծամձորի ճակատամարտերի հաջող ելքը դեռեւս չէր նշանակում, թե հաղթանակի լծակը թեքվում է ԻՊՈՒ կողմը, որովհետեւ պատահեց Մարաղայի ողբերգությունը...

Ապրիլի 9-ի երեկոյան արդեն Միր-Քաշիրի(Թարթառի) կողմից սկսվեց Մարաղա բնակավայրի հրետակոծությունը, իսկ հաջորդ օրվա վաղ առավոտյան, ընդլայնելով հրետակոծության աշխարհագրությունը (Մարգուշավան, Մարտակերտ, Լեւոնարխ, Հայկաջուր, Կարմիրավան, Թալիշ, Քաջավան), հակառակորդը Աղդամի, Միր-Քաշիրի եւ Գերանբոյի շրջաններից արձակեց հարյուրավոր հրթիռներ ու արկեր: «Հայտուրի» ծանուցմամբ, հակառակորդի շուրջ 1000 զինվոր, 20 միավոր զրահատեխնիկայի, այդ թվում՝ 3 S-72 տանկի աջակցությամբ, Միր-Քաշիրից փորձեց ներխուժել Մարաղա: Սոսկ հրազենով զինված հայ մարտիկները դիմադրում էին, սակայն ուժերը խիստ անհավասար էին: Մարաղեցիները հանկարծակիի եկան, շատերը չհասցրին հեռանալ թաքստոցներից, ուր եւ կնքեցին իրենց մահկանացուն: Օգնությունը ստացվեց ուշացումով: ԻՊՈՒ մարտիկները, շարքից հանելով 6 զրահամեքենա, խլելով 2 հրանոթ եւ գերելով 18 ասկյար, ժամը 22-ին թշնամուն հետ շարտեցին²:

Ապրիլի 25-ին հակառակորդի խմբավորումը Քյափազի լեռնալանջը գրոհելու հերթական փորձը ձեռնարկեց, սակայն Շահումյանի ԻՊՈՒ պատասխան գործողություններով խափանվեց նրա զավթողական ծրագրի իրագործումը³:

¹ «Մարտիկ», ք. 14, 1999թ.:

² «Արցախ», հանդես, № 1-2, 1993թ., էջ 8-10:

³ ՊԲ ԿԱ, ՕՀ ԱՏ № 142, էջ 14: Վ.Ք. Հարությունյան, նեվ. գիրք, էջ 133

Այդ օրերին, ուժեր ու միջոցներ կենտրոնացնելով ԼՂՀ սահմանագծի ողջ երկայնքով, առանձին տեղամասերում հակառակորդը փորձում էր շոշափել եւ հայտնաբերել ԻՊՈՒ պաշտպանության համեմատաբար թույլ հատվածները, մշտական հրետակոծությունների միջոցով ձգտում էր ավերել խաղաղ բնակավայրերը եւ հոգեբանորեն ընկճել բնակչությանը, այսինքն՝ մարտնչող ռազմիկներին զրկել անհրաժեշտ նեցուկից, ինչպես նաեւ, բոլոր ռազմագործողություններում սկսեց օգտագործել ԱՊՀ ՁՈՒ՝ Ադրբեջանում տեղակայված զորամասերի սպաներին: Հակառակորդին հաջողվեց իմանալ, որ հայ մարտիկները ռազմամթերքի պակաս են զգում, ուստի գործում էր բացահայտ ու անպատիժ: Առկա մյուս տվյալները եւս խոսում էին սպասվող լայնածավալ հարձակման օգտին...

Ապրիլի 28-ին հարձակման ենթարկվեց Վաղուհասի գերիշխող բարձունքը: Համառ մարտում ոչնչացնելով 7 ասկյար, հայ մարտիկները ստիպեցին հակառակորդին՝ նահանջել: Ապրիլի 29-ին հարձակումը կրկնվեց: Ութամյա կատաղի փոխհրաձգությունից հետո, թշնամին հետ շարտվեց:

Իսկ Շուշիի ռազմագործողությանն անմիջապես նախորդեց 1992թ. ապրիլի 29-ին Ստեփանակերտի մատույցներում տեղի ունեցած ճակատամարտը: ԼՂՀ ԻՊՈՒ-ի ակտիվ գործողություններին սպասող հակառակորդը, հոգեբանական լարված մթնոլորտում կորցրեց հավասարակշռությունը, եւ նախահարձակ եղավ, թույլ տալով մարտավարական ու ճակատագրական սխալ¹: Շուշիում եւ Ջանհասանի ենթաշրջանում տեղակայված ադրբեջանական զորամասերը, նախօրեին ստանալով նշանակալի համալրում, հրետանային նախապատրաստությունից հետո, զրահատեխնիկայի աջակցությամբ գրոհեցին Ստեփանակերտի հարավ-արեւմտյան դիրքերը²: Արիաբար կասեցնելով հակառակորդի առաջխաղացումը եւ կենդանի ուժի կորուստներ պատճառելով նրան, հայ մարտիկները հաջողությամբ հետ մղեցին բոլոր գրոհները²: Դա Շուշիից ու Ջանհասանից ձեռնարկված ցամաքային վերջին հարձակումն էր:

Նախօրեին կենդանի ուժ եւ տեխնիկա (շուրջ 100 զինվոր, 1 տանկ, 3 ՀՄՍ) կուտակելով Թոդան, Սարըսու եւ Ջեյվա գյուղերում, մայիսի 2-ի վաղ առավոտյան հակառակորդը հարձակման անցավ Շահումյանի շրջանի էրբեջ գյուղի ուղղությամբ: Կասեցնելով հարձակումը, ԻՊ ուժերը հակագրոհով տիրեցին հակառակորդի դիրքե-

¹ «Հայ զինվոր», ք. 18, 1999թ.:

² Վ. Ք. Հարությունյան, նեվ. գիրք, էջ 133

րին, առգրավեցին ԿՍ-19 տիպի թնդանոթ, չկառավարվող հրթիռային արկեր արձակող կայանքով քարշակ, 14 միավոր ԱԿՄ ավտոմատ, շարքից հանեցին մոտ 30.ասկյար: ԻՊՈՒ կողմից գոհվեց 3, վիրավորվեց եւս 3 ազատամարտիկ, մարտում վնասվեց հայերի ՅՄՍ-2-ը¹: Մայիսի 4-ին հարձակման ենթարկվեց Թալիշը: Կատաղի մարտերը չէին դադարում նաեւ գիշերը եւ ավարտվեցին միայն մայիսի 6-ի կեսօրին: Մարտում գոհվեց 7 ազատամարտիկ: Մարտադաշտում թողնելով 22 դիակ, իսկ մյուս սպանվածներին ու վիրավորներին քարշ տալով, հակառակորդը նահանջեց դեպի Թափկարակոյունլու, շարունակելով հրետակոծել Թալիշը:

Մայիսի 6-ին Տոդի գինեգործարանի հատվածում հարձակման ենթարկվեցին հայկական պաշտպանական դիրքերը: Կորուստներ պատճառելով եւ գերելով 1 զինվոր, ազատամարտիկները ստիպեցին հակառակորդին՝ նահանջել:

Չետախուզության՝ մայիսի 6-ի տվյալներով, հակառակորդը Մարտակերտի շրջանի Նարեշտար գյուղում տեղադրել էր ՄՍ-21 կայանք: Երկուական զումարտակներից բաղկացած խմբավորումներ էին կենտրոնացվել շրջանի սահմանագծում՝ Միր-Քաշիրի, Փափրավենդի, Շոթլանլուի, Թափկարակոյունլուի ռազմակայաններում: Շուշի էին բերվել լրացուցիչ 15-20 բեռնատար մեքենա, 4 ՅՄՍ, 4 ՉՓ: Բաշքենդ-Քյոսալար-Ջանհասան հատվածում կային 1 տանկ, 2 ՅՄՍ, ՄՍ-21-ի կրակադիրք, զենքի ու զինամթերքի խոշոր կուտակումներ²: Մայիսի լույս 7-ի գիշերը հակառակորդը հարձակվեց Թալիշի վրա եւ գրավեց Ինջայի կիրճը: Հակահարձակման անցնելով, հայ մարտիկները վաղ առավոտյան ազատագրեցին այն:

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն ապրիլի վերջերին ու մայիսի սկզբներին հասունացել էր Արցախում ադրբեջանցիների ամենախոշոր ու վտանգավոր ռազմահանգրվանի վերածված Շուշի բերդաքաղաքի ազատագրման պատմական պահը: Իր գազաթնակետին հասած ռազմաքաղաքական իրադրությունը սպառնում էր դուրս գալ վերահսկողությունից եւ զարգանալ արցախահայության համար վտանգավոր ձեւով, եթե, իհարկե, ժամանակին չվնասազերծվեին Շուշիի եւ Ստեփանակերտի հարակից գյուղերի կրակակետերը:

ՎՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՆՇՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Անմիջականորեն Ստեփանակերտի մատույցներում ծավալված մարտերի ու ներխուժման սպառնալիքի, չդադարող հրթիռահրետակոծությունների պայմաններում օրհասական կացություն էր ստեղծվել ԼՂՀ մայրաքաղաքում:

Կապված բնակավայրերի չդադարող հրետակոծությունների եւ Ադրբեջանի կողմից ԼՂՀ շրջափակման սաստկացման, հանրապետությունում եւ, առանձնապես, նրա մայրաքաղաքում՝ շուրջ 70 հազարանոց Ստեփանակերտում տնտեսական իրադրության կտրուկ վատթարացման հետ, ԼՂՀ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնը տարածել էր աշխարհի բոլոր երկրներին, ՄԱԿ-ին հասցեագրված դիմում՝ կոչ անելով «Անհետաձգելի մարդասիրական օգնություն ցուցաբերել կործանման եզրին հասած Լեռնային Ղարաբաղի բնակչությանը»: Դիմումում, մասնավորապես, ասված էր. «... Ստեփանակերտի օդանավակայանի հոծխումբ հրետակոծությունների արդյունքում դժվարացել է մարդասիրական բեռների անգամ նվազագույն քանակության տեղափոխումը: Ավելի ու ավելի սրությամբ է զգացվում սննդամթերքների պակասը, Ստեփանակերտում սով է սկսվել: Քաղաքում բացակայում են էլեկտրաէներգիան ու ջրամատակարարումը:

Ապրիլի 29-ին դադարեցվել է գազի մատակարարումը, բնակչության, առանձնապես երեխաների շրջանում, աժել են հիվանդանալու եւ մահացության դեպքերը: Ստեփանակերտի բնակչության համար արդեն պատասպարվելու տեղ չի մնացել Շուշիի եւ մայրաքաղաքը շրջապատող ադրբեջանական մյուս բնակավայրերի կողմից ձեռնարկվող ամենօրյա հոծխումբ հրետակոծություններից:

Միայն 1992 թ. սկզբից քաղաքը հրետակոծության է ենթարկվել 170, իսկ Շուշիի կողմից ցամաքային հարձակման՝ 11 անգամ:

ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվել է տարբեր տիպի 4253 արկ ու հրթիռ, այդ թվում՝ ՄՍ-21 «Գրադ»-ի 2437 ռեակտիվ արկ

¹ ՊՐ ԿԱ, ՕՀ US № 142, էջ 23

² Аппаратный журнал радиостанции. Начат 24 апреля, 1992г. окончено 12 мая 1992г. передача от 06.05.92г. в 11³⁵ч.

(բեկորա-ֆուգասային), «Ալազան»-ի 527 հրթիռ, 100 մմ տրամաչափի 593 արկ եւ այլն:

Ավերվել է 188 եւ վնասվել 223 բնակելի շենք կամ մոտ 2000 բնակարան: Լրիվությամբ ավերվել է 54 եւ վնասվել 147 սոցիալ-մշակութային, կենցաղային եւ վարչական նշանակության օբյեկտ:

Սպանվել է 90, վիրավորվել 268 քաղաքացի: Ստեփանակերտի բնակիչներից մոտ 10000 հոգի անօթեւան է մնացել: Դեղորայքի սուր պակասի պատճառով վիրավորների մեծամասնությունը մահանում է¹»:

Որ իրականում Լեռնային Ղարաբաղում սովում էին, 1992 թ. մայիսի 3-ին հաղորդել է նաեւ ռուսական հեռուստատեսության «Վեստի» ծրագիրը: Փաստերն, ավելի քան, խոսում են. վերջին վեց ամիսների ընթացքում Ստեփանակերտի բնակիչները մեկ շնչի համար ստացել էին 2 կգ ալյուր եւ 0,5 կգ շաքարավազ, այսինքն՝ բնակչության մեկ շնչի հաշվով օրվա համար՝ 11 գրամ ալյուր եւ 2,5 գրամ շաքարավազ: Դա հետեւանքն էր այն բանի, որ ադրբեջանցիների մեղքով արդեն 3 տարի է, ինչ դաշտերից ցորենի բերքի փոխարեն արցախցիները հավաքում են հրետանային արկերի պարկուճներ ու բեկորներ²:

Տեղացիներին համար սովորական դարձած ժանր իրավիճակը չի վրիպել լրագրող Տ. Դեյրիկյանի աչքից, որը մանրամասն նկարագրությամբ տվել է այն դժնդակ օրերի իրական պատկերը:

ԼՂՀ շրջանների համար ներքին վտանգ ներկայացնող աղըր-բեջանական բնակավայրերի կրակակետերը վնասագերծելուց հետո շատ ընտանիքներ Ստեփանակերտից փոխադրվեցին ռազմաճակատից համեմատաբար հեռու գյուղերի իրենց հայրական տները, կամ էլ պատսպարվեցին բարեկամների տներում, որ ազատվեն Շուշիից տեղացող դժոխային կրակից: Ստեփանակերտից շրջաններ տեղափոխվելու մյուս գլխավոր դրդապատճառները երեխաների ուսման ապահովումն ու աշխատանքի հայթայթումն էին: 1991 թ. աշնանը՝ նոր ուսումնական տարվա սկզբից փաստորեն կազմալուծվել էին դպրոցական պարապմունքները: Նորանոր զինատեսակների կիրարկման արդյունքում խոցելի թիրախների վերածված ԼՂՀ մայրաքաղաքի դպրոցներում անհնար դարձավ պարապմունքների անցկացումը: Իսկ շրջաններում որոշ գյուղական դպրոցներ դեռեւս գործում էին:

¹ ԼՂՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի «Տամադրած նյութերից»

² Վ. Բ. Հարությունյան, նւթ. գիրք, էջ 135

Դաժան շրջափակման եւ ապա պատերազմի հետեւանքով Ստեփանակերտում դադարել էին աշխատել գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, բացի կենսապահովման կարեւորագույն օղակներից: Այդ կացությունը մարդկանց ստիպեց իբրեւ ապրուստի եւ աշխատանքի միջոց ընտրել ավանդական հողագործությունը, որի համար լայն ասպարեզ ու հնարավորություն էր ընձեռում արցախյան գյուղը:

Պատերազմից շատ չտուժած շրջանների տնտեսական գլխավոր խնդիրներից մեկն ամբարված ցորենը հաց դարձնելն ու Ստեփանակերտ հասցնելն էր: Սակայն հեղուկ վառելիքի սուր պակասը ոչ միայն խոչընդոտում, այլեւ անհնարին էր դարձնում ցորենն աղալու, ինչպես նաեւ ցորենը կամ ալյուրը մայրաքաղաք տեղափոխելու խնդրի լուծումը: Էլեկտրականության բացակայության պայմաններում էլեկտրաղացները կարող էին աշխատել մագուրի շարժիչներով, իսկ մեկ տոննա հացահատիկ աղալու համար անհրաժեշտ էր մոտ 80 լիտր վառելանյութ, ինչն այն ժամանակ ձեռք բերելը գործնականում անհնար էր: Արցախի այն ժամանակվա ներքին պաշարների սակավությունը եւ ալյուրի արագ սպառումը հասցրեց նրան, որ հացաթխումը փոխարինվեց ալյուրի մատակարարումով: Երբ դրսից ներկրվող ալյուրի պաշարներն էլ սպառվեցին, իսկ ալրաղացներն իրենց արտադրական կարողությամբ անզոր էին բավարարել բնակչության պահանջարկը, ինչպես նաեւ վառելիքի սակավության պատճառով շատ քիչ էին աշխատում, ալյուրի փոխարեն բաշխվում էր հացահատիկ:

Շուշիի ազատագրման նախօրեին, մոտ մեկ տարի, նման դժվարին պայմաններում էր ապրում արցախահայությունը, յուրաքանչյուր շինություն ու կենսապահովման կետ վերածելով պաշտպանական ամրության: Դիրքեր էին փորվում անգամ գյուղերի շրջակայքում գտնվող անասնապահական ֆերմաների շուրջ, որ դրանք անակնկալ հարձակման, կողոպուտի ու ավերումների չենթարկվեն:

Պատերազմական այս պայմաններում գործում եւ կենսունակ էր սոսկ արտադրության կենտրոնացված համակարգը, ինչը ենթադրում էր ազարակագործների կողմից զորանոցներին՝ մսի, իսկ երեխաներին՝ կաթի մատակարարում: Օրվա վերջին ինքնապաշտպանական ջոկատների մարտիկները աշխատավորներին հասցնում էին իրենց գյուղերը եւ հաջորդ առավոտյան վերստին ուղեկցում մինչեւ ֆերմաները:

Երբ շրջափակմանը գումարվեցին ռազմական գործողությունները, կյանքը վերածվեց հավաքական մի հոգսի, իսկ աշխատելն էլ հավասարազոր էր մարտական առաջադրանք կատարելուն: Խորհրդանշական է, որ դաշտ մեկնելուց առաջ հնձվորները նախքան գերանդիներ սրելը զենքերն էին յուղում: Դաշտային աշխատանքների օրերին առավելս ուժեղացվում էր հերթապահությունը դիրքերում, որ հանկարծ թշնամին չանցնի թիկունք եւ չխափանի բերքահավաքը կամ վար ու ցանքը:

Առավել ծանր էր Ստեփանակերտի վիճակը: 1991 թ. աշնանը սկսվեց նրա զանգվածային հրետակոծությունը Շուշիի կրակակետերից: Եթե անգամ տեղացող արկերը որեւէ շինության չէին դիպչում, միեւնույն է, պայթյունի օդահարվածային ալիքից կամ բեկորներից փշրվում էին ապակիները, ինչը հատկապես ծնեռվա ցրտերի պայմաններում գրեթե անհնար էր դարձնում բնակարանում մնալը:

Քանի որ բնակչությանը միայն ցորեն կամ ալյուր էին տալիս, իսկ հաց հասցնում էին թխել միայն բանակի համար, ուստի զինվորներից շատերը հավաքում էին մի քանի օրվա իրենց հասանելիքը, տուն տանելու եւ երեխաներին կերակրելու համար: Հրամանատարները ստիպված էին հետեւել ու վերահսկել զինվորների սնվելու ընթացքը, քանզի ուժասպառ զինվորն ի վիճակի չէր հավուր պատշաճի պաշտպանել հայրենիքն ու ընտանիքը...

Սննդի պակասից առաջ եկած հյուծվածությունը էլ ավելի էր ծանրացնում շենքերի նկուղներում պատսպարված կանանց ու երեխաների վիճակը: Ցուրտն ու սառնամանիքն էլ մյուս կողմից էին նեղում: Նկուղային այդ կյանքն աղետալի էր հատկապես երեխաների համար: Ցրտից ու թերսնումից տարածում գտան թոքերի հիվանդություններն ու շնչարգելման բռնկումները, որոնք երբեմն սկսվում էին ռեպրոդուկցիայի պահերին, անելանելի վիճակի մեջ դնելով տազնապահար ծնողներին:

Խմելու ջուրը նույնպես հայթայթվում էր անասելի մեծ դժվարությամբ: Ստեփանակերտի ծայրամասերից եւ անգամ մոտակա գյուղերից ջուրը փոխադրվում էր ինքնաշեն սալակների ու մանկասալակների միջոցով:

Ձինադադարի հազվագյուտ օրերին «խաղաղությունը» վայելելու, ազատ շունչ քաշելու ժամանակ չէր մնում, որովհետեւ մի քանի կիլոմետր հեռու գտնվող անտառից ձեռնասալակներով վառելափայտ պետք է բերվեր, հոգ տարվեր առաջիկա շաբաթներ-

րի համար գյուղերից մի պարկ հացահատիկ ճարելու եւ այն աղալու մասին եւ այլն¹:

Անտանելի ծանր պայմանների ակնհասեւ են դարձել նաեւ օտարերկրացիները: Անվանի գրող ու հրապարակախոս Չ. Բալայանը վերհիշում է Շուշիի ազատագրմանը նախորդած ժամանակը, երբ բարերար Վարդգես Նաջարյանի հետ Ստեփանակերտ էր ժամանել ամերիկացի նշանավոր բժիշկ Ռոբերտ Գեյլը, ծանուցելով, որ ամենուրեք իր ակնքները խլացրել են Շուշիի մասին խոսելով: Բայց Ստեփանակերտում երկու օր մնալուց հետո Գեյլը խոստովանեց. «Շուշին վտանգավոր է: Առաջին անգամն եմ տեսնում, որ գիշեր-ցերեկ անպատիժ կերպով հրետակոծեն կենդանի քաղաքը, ուր երեխաներ են վազվզում փողոցներում²»:

Իր տեսածից խորապես ազդված բժիշկը հանդես եկավ նաեւ հայտարարությամբ, որում եւս արտացոլված է Ստեփանակերտի ծանր վիճակը: Ներկայացնենք միայն մի հատված.

«Անվերջանալի շուրջօրյա հրետակոծումներն, ըստ էության, ամբողջովին քանդել են բնակֆոնդը, այլեւս չկան հիվանդանոցներ, այլ բժշկական հիմնարկություններ եւ կենսապահովման օբյեկտներ: Մարդիկ ծվարել են խոնավ նկուղներում՝ առանց էլեկտրականության ու խմելու ջրի: Հինգ ամիս է՝ հանրապետությունը չի ստանում հաց եւ այլ սննդամթերք: Արդեն կան սովամահության դեպքեր: ...Վիրավորներին հարկադրաբար օգնություն է ցուցաբերվում նկուղներում, հակասանիտարական պայմաններում:

Ծննդաբերությունը նույնպես կատարվում է նկուղներում, ուր գործնականում անհնար է պայքարել վարակի դեմ: Իմ աչքի առաջ հրթիռի պայթյունի հարվածային ալիքից եւ բեկորներից հերթական անգամ վնասվեցին ծննդատան նկուղային շինությունները, ինչի արդյունքում տուժեցին նորածիններն ու ծննդաբերողները³»:

Մայիսի 1-ին հայտարարություն է տարածել նաեւ ԼԴՀ Ինքնապաշտպանության կոմիտեն, ուր, մասնավորապես, ասված էր. «Միայն անցած շաբաթվա ընթացքում ԼԴՀ մայրաքաղաքի վրա հակամարտության գոտում Ադրբեջանի գլխավոր ռազմական հեճակետ Շուշիից արձակվել է շուրջ 1000 արկ, այդ թվում՝ 800-ը՝ ռեակտիվ: Չոհվել է 20 խաղաղ բնակիչ, փլատակների են վերած-

¹ Ավելի մանրամասն տես «Ազգակ» բացառիկ, 20 փետրուար, 1998, էջ 24-29:

² Չորի Բալայան, նույն գիրք, էջ 403

³ «Երկիր», ք. 81, 1992 թ.:

վել հարյուրավոր բնակելի տներ, ավերվել կամ հրդեհվել են կենսապահովման բոլոր ձեռնարկությունները: Հազարավոր կանայք ու երեխաներ մնացել են առանց տանիքի ու ապրուստի միջոցի: .

Հատկապես տագնապահարույց է այն հանգամանքը, որ շարունակ զենք ու զինամթերք է բերվում Շուշի (ի դեպ՝ որտեղից դուրս է բերվել ողջ բնակչությունը) : Նկատվում են զինված կազմավորումների եւ զրահատեխնիկայի նորանոր կուտակումներ¹»:

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հետեւյալ կերպ էր բնորոշում իրավիճակը. «Կրկեմ, Մալիբեկլուի նման անառիկ տարածքները ժամանակին վերցնելն ուղղակի հրաշք էր, անձնագոհություն: Արցախը պաշտպանում էր իրեն, բայց կար անավարտության զգացում: Իսկ քանի Շուշին կար, Արցախում ապրելն անհնար էր: Ամեն օր տասնյակ խաղաղ բնակիչներ էին սպանվում: Հեքիաթի աղբյուրի գլխին կախված հրեշ էր Շուշին: Կամ պիտի Արցախը կուլ գնար կամ ոչնչացներ նրան: Նույնը Ջանհասանը եւ Նաբիլարը: Այս փոքրիկ գյուղերում վիթխարի քանակով զենք էր կուտակված: Գիտեինք՝ Արցախում ադրբեջանցիներն անսահմանափակ քանակությամբ զենք ունեն: Այդ զենքն այսօր ուղղված է ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի վրա: Վերջին ամսում Շուշիում եւս մեծաքանակ զենք էր կենտրոնացվել: Ծրագրված էր եւ վերջին օրերին իրականացվում էր Ստեփանակերտը գրավելու գործողությունը: Մյուս կողմից Ադդամն էր միանալու: Հակահարվածն անհրաժեշտություն էր, եւ նախորդ գիշեր այն սկսվեց²»:

ԼՂՀ ԳԽ պաշտոնաթերթ «Արցախ»-ի առաջնորդող հոդվածում լավ է ներկայացված Շուշիի ազատագրման անհրաժեշտությունը. «Մենք չէինք կարող թույլ տալ, որ ազերիները, Շուշին վերածելով ռազմական ամրոցի, հետեւողականորեն ավերեն Ստեփանակերտը, ահաբեկչության ու մահվան սպառնալիքի տակ պահեն նրա 70 հազարանոց բնակչությանը: Կամ արցախյան շարժումը պետք է սպառվեր Շուշիի մատույցներում, կամ պետք է թշնամին վտարվեր այնտեղից: Այս ռազմավարությունը գիտակցում էր յուրաքանչյուր արցախցի, եւ բոլորս պատրաստվում էինք գնալ ի մարտ:

Ռազմականացված Շուշին հրետակոծում էր ոչ միայն Ստեփանակերտը, այլեւ օգտագործելով բնական նպաստավոր դիր-

¹ «Երկիր», p. 82, 1992 p.:

² «Երկիր», p. 87, 1992 p.:

քը, կրակի տակ էր պահում ծանապարհները, շրջակա հայկական բնակավայրերը, օդանավակայանը:

Շուշին գորդյան հանգույց էր, որի լուծումը գերմարդկային լարում էր պահանջում: Պատմությունը մեր ձեռքին դրեց սուր, որ լուծենք այն, որ կարողանանք ապացուցել (*եւ նվաճել - Մ.Հ.*) մեր գոյատեւման իրավունքը¹»:

Այսպիսով, խուլ ու համապարփակ շրջափակումը, էլեկտրաէներգիայի, բնական գազի ու խմելու ջրի բացակայությունը, շուրջօրյա հրթիռահրետակոծությունները ոչ միայն անտանելի կենսապայմաններ էին ստեղծել, այլ նաեւ կաթվածահար էին արել հանրապետության տնտեսությունը: Հրետակոծություններից ավերվել ու հրի էին մատնվել արտադրական գրեթե բոլոր ձեռնարկությունները, անմշակ էին մնացել տասնյակ հեկտարներով վարելահողեր: Հեղուկ վառելիքի սուր պակասի հետեւանքով շրջաններից դժվար էր ցորեն տեղափոխել մայրաքաղաք, ինչպես նաեւ՝ ցորենը հաց դարձնել²: Բնակչությանը սպառնում էր սովը: Ահա թե ինչու անհրաժեշտ էր դիմել վճռական միջոցների: Ինչպես ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանն է ընդգծել. «Վիճակն անտանելի է: Մենք ապրելու այլ տարբերակ չունենք, քան խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովելու համար վճռական գործողությունների դիմելը: Մենք ամեն ինչ պետք է անենք, որպեսզի Շուշին դադարի ԼՂՀ հանդեպ ագրեսիայի օջախ լինելուց³»:

2. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐ

Զինված բախումների ծավալների աճի հետ, ավելի ու ավելի էին բարդանում մարտական գործողությունները՝ տեխնիկական ու կազմակերպական առումներով: Իսկ դա պահանջում էր ստեղծել միասնական հրամանատարություն, մարտունակ բնակչության գորահավաքի համակարգեր, զինվորական ստորաբաժանումների մատակարարման կառույցներ, բանակային կադրերի նախապատրաստման, մասնագետների ընդգրկման ուսումնական բազաներ եւ այլն: Սակայն, կենսականորեն կարելու արյ-

¹ «Արցախ», № 1, 1992 p.:

² «Ազդակ» բացառիկ, 20 փետրուար, 1998, էջ 25:

³ «Երկիր» p. 87, 1992p.:

հարցերի լուծումը եւ հենց Ղարաբաղի գոյատևումը, առանց խեղդիչ համապարփակ շրջափակման ճեղքման, անհնար էր¹:

ԼՂՀ մայրաքաղաքը գրոհով առնելու հերթական անհաջող փորձից հենտ Ադրբեջանի զինված կազմավորումները մարտական գործողությունները տեղափոխեցին սահմանային գոտի՝ նպատակ ունենալով արցախյան հրամանատարության ուշադրությունը շեղել Շուշիում ուժերի վերախմբավորումից եւ վճռական հարձակման անցնելու նախապատրաստություններից²: Հակառակորդի հավակնությունների մասին են վկայում նաեւ հետախուզական տվյալները, ըստ որոնց, ապրիլի 27-ի դրությամբ՝ Շուշիում կենտրոնացված էր 11 միավոր տանկ, 9 ՀՄՄ, 10 ՋՓ, 2 ՀԻՄՄ-2, 100 մմ-ոց 3 թնդանոթ, 2 ՄՄ-21 հրթիռահրետանային կայանք, «ՌԻԱՋ»-ների վրա խարսխված 3 ԿՊՎԴ գնդացի, մոտ 1500 զինվոր³: Իսկ մայիսի 6-ին Լաչինից Շուշի բերվեցին լրացուցիչ 15-20 մեքենա, 4 ՀՄՄ, 4 ՋՓ⁴: Ակներեւաբար, այս վիթխարի ուժից պաշտպանվելու լավագույն միջոցը նախահարձակ լինելն էր, հակառակորդին՝ ուժերը բացազատելու եւ հարձակման անցնելու հնարավորությունից զրկելը: Դա նաեւ այն պատճառով, որ թեեւ Ադրբեջանական զինված կազմավորումների գրոհները կասեցվում էին, սակայն «Ով՛ ում» խնդրի լուծումը դեռեւս առկա էր մնում: Իսկ ժամանակն աշխատում էր ի վնաս հայկական կողմի: Պատմության ընձեռած բացառիկ հնարավորության բացթողումը կնշանակեր անխուսափելի ինքնադատապարտում⁵:

¹ *Слу Фонд общественно - политической информации, НКР: история и современность. Степанакерт, 1998, с.24*

² «Երկիր», p. 86, 1992թ.:

³ ՊԲ ԿԱ, ռադիոկայանի ադաբազային մասյան (ռու.), հարողում ժամը 16⁰⁰ առ 27.04.92թ.:

⁴ Նույն տեղում, հարողում ժամը 11³⁵ առ 06.05.92թ.:

⁵ Տես «Մարտիկ» p.17, 1997թ., «Ազատ Արցախ», p.53, 1999թ.

ՊԼՈՒՏ ԵՐՐՈՐԴ

ՈՒՋՏԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՉԱՆԲԵՐ

Ռազմագործողությունը նախապատրաստելուն զուգընթաց՝ անհրաժեշտ էր նաեւ դիվանագիտական համապատասխան աշխատանք: ԼՂՀ ԳԽ նախագահության հայտարարությունները, դիմումները, դեռեւս 1992թ. փետրվար ամսից համաշխարհային հասարակայնության, տերությունների ղեկավարների ու միջազգային կազմակերպությունների ուշադրությունն էին հրավիրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի բացահայտ ագրեսիայի, խաղաղ բնակչության բնաջնջման հետեւողականորեն իրագործվող քաղաքականության վրա, խնդրելով համապատասխան օգնություն կամ միջամտություն: Փետրվարի 19-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Դալիին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինին, ԱՄՆ նախագահ Ջ. Բուշին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջ. Մեյջերին, Պերմանիայի կանցլեր Յ. Կոլին, Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանին հասցեագրված ԼՂՀ ԳԽ դիմումում ուղղակի նշվում էր Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպանության քաղաքականության մասին¹: Առանձնաճանաչում էր նաեւ Մարտակերտի շրջանի Մարաղա բնակավայրի իրադարձությունների մասին ԼՂՀ ԳԽ նախագահության ապրիլի 14-ի հայտարարությունը, որը եզրափակվում է հետեւյալ բազմիմաստ նախադասությամբ. «Մարաղա գյուղի խաղաղ բնակչության բարբարոսական ոչնչացումը, ինչը թելադրված չէր ռազմական անհրաժեշտությունից, չպետք է անպատիժ մնա եւ հետեւանքների համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության վրա²:

1992թ. մարտ-ապրիլ ամիսներին ԼՂՀ մայրաքաղաք էին ժամանում տարբեր երկրների ներկայացուցիչներ, քաղաքական ու

¹ ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.5, դ.մ. 13, կ.1, էջ 18, 19-20:

² Նույն տեղում, էջ 60-61:

պետական գործիչներ, միջազգային կազմակերպությունների բանագնացներ: Մարտի 20-ին Ստեփանակերտ ժամանեցին ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ս. Վենսը, ԵԱՀԽ լիազորված պատասխանատու Յա. Կուբիչը: Նույն օրը Ստեփանակերտ ժամանեց նաև Իրանի ԱԳ նախարարի տեղակալ Մ. Վալազին՝ մեկշաբաթյա զինադադարի առաջարկությամբ: Մարտի 21-ին Ստեփանակերտ ժամանեց Ֆրանսիայի սոցիալական եւ մարդասիրական օգնության հարցերով պետնախարար Բ. Կուշնիրը: Ապրիլի 1-ին ԼՂՀ ղեկավարությունն ընդունեց ԵԱՀԽ ներկայացուցիչ, Չեխոսլովակիայի ԱԳ նախարար Ի. Դինսբերին: Ապրիլի 4-ին նորից Ստեփանակերտում էր Մ. Վալազին: Իսկ ապրիլի 9-ին Ստեփանակերտ ժամանեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ա. Կոզիրեւը¹:

Ընթացող բանակցությունների մասնակից Չ. Բալայանի վկայությամբ, «...այդ տարբեր մարդկանց միավորում էր այն հանգամանքը, որ Խոջալուի մասին խոսելուց հետո, հարմար պահ ընտրելով, նրանք անցնում էին Շուշիի թեմային: Ոմանք պարզապես չէին թաքցնում, որ Բաբվում գրեթե ուրիշ ոչ մի բանի մասին չեն խոսում, բացի Շուշիից: Խնդրում էին չգրավել Շուշին, դրանով հանդերձ, երաշխիք չտալով, որ կրակակետը կդադարի Ստեփանակերտը «Գրադով» հրթիռակոծել²»: ԼՂՀ ղեկավարությունն անհրաժեշտ պարզաբանումներ էր տալիս, հիմնավորում Շուշիի կրակակետերի վնասազերծման անհրաժեշտությունը, որ բխում էր նաև Ստեփանակերտի եւ ամբողջ ԼՂՀ բնակչության անվտանգության շահերից:

Դիվանագիտական աշխատանքի մյուս ուղղվածությունը բանակցային գործընթացին ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության ապահովումն էր: Այս տեսակետից ուշագրավ է ԼՂՀ ԳԽ նախագահության 1992թ. մարտի 17-ի հայտարարությունը, ուր ասված էր. «...ողջունելով շատ երկրների եւ միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունը մարտական գործողությունների դադարեցման գործում, ԼՂՀ ԳԽ նախագահությունը հայտարարում է, որ ստեղծված իրավիճակից ելքի որոնումներն առանց ԼՂՀ լիազորված ներկայացուցիչների մասնակցության, չեն կարող տարածաշրջանում բերել դրական փոփոխություններ: ԼՂՀ-ն հանդիսանում է ռազմական ագրեսիայի օբյեկտ եւ նրա ներ-

¹ Վ. Բ. Հարությունյանի նւյ. գիրքը, էջ 124-133.

² Չորի Բալայան, Դժոխք եւ դրախտ, էջ 125:

կայությունը պարտադիր է իր շահերը շոշափող ցանկացած խաղաղարար գործընթացում¹»:

1992թ. մայիսի 4-ին «Մայակ» ռադիոկայանը հաղորդեց Ռուսաստանի ԱԳԽ հայտարարությունն այն մասին, որ Ռուսաստանն անհանգստացած է նախկին ԽՍՀՄ գործերին Իրանի միջամտության առթիվ եւ պնդում է Իրանի կողմից կազմակերպված եւ անցած շաբաթվա վերջին Թեհրանում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով բանակցություններին իր մասնակցության վրա: Նույն օրը «Ռուսական լուրեր»-ը հաղորդեցին, որ ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանը Մոսկվայում հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղը դեմ է Ա. Կոզիրեւի առաջարկին, քանի որ խոսք է գնում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովում Ղարաբաղի հայ եւ ադրբեջանական համայնքների մասնակցության մասին, ինչն անընդունելի է ԼՂՀ-ի համար: Սենք կարող ենք մասնակցել միայն այն դեպքում, եթե խորհրդաժողովում ներկայացվեն ԼՂՀ օրինականորեն ընտրված ղեկավարները, որոնց պատվիրակության կազմում կարող են լինել նաև ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները, հայտարարել է ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը²:

Սակայն դիվանագիտական ամենակարեւոր իրադարձությունը, թերեւս, Իրանի մայրաքաղաքում տեղի ունեցած եռակողմ բանակցություններն էին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յա. Մամեդովի եւ Իրանի նախագահ Հ. Ռաֆսանջանիի միջեւ³: Այդ բանակցությունների օրերին էլ հենց սկսվեց Շուշիի ռազմագործողությունը, ընդհատելով դրանք: Փաստորեն, ԼՂՀ-ն բանակցություններին իր մասնակցության մասին հայտարարություններին արձագանք չտալով, ստիպված էր այս ձեւով հասկացնել, որ ամեն մի բանակցություն, առանց ԼՂՀ-ի, դատապարտված է անհաջողության: Անհավանական է, որ Թեհրանում ընթացող բանակցությունները, թեկուզե՛լ ականա, նպաստած չլինեին սկսված ռազմագործողության հաջողությանը:

¹ ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 5, դ.մ. 13, կ. 1, էջ 42:

² Վ. Բ. Հարությունյան, նւյ. գիրքը, էջ 135-136

³ «Երկիր», ք. 86, 1992 թ., *Грайр Вальян, Нагорный Карабах. Ереван, 1994, с.54*

2. ԼՐԱՏՎԱՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներկայումս դժվար է պատկերացնել ժամանակակից որեւէ ռազմական հակամարտություն առանց լրատվաքարոզչական ճակատի: Շուշիի ռազմագործողությունը եւս բացառություն չկազմեց, հետեւաբար՝ նրա նախապատրաստման կարեւոր ասպարեզներից էին լրատվաքարոզչական բուռն աշխատանքները: Այդ ընթացքում հրատարակվող գրեթե բոլոր հայկ. պարբերականները տազնապահարույց հաղորդագրություններ էին տպագրում Շուշիից եւ Ջանհասանից հարձակված ադրբեջանական հրոսակների՝ Ստեփանակերտի արվարձաններում մարտեր մղելու, օրհասական վիճակի, տասնյակ զոհերի մասին¹: Անշուշտ, վիճակն ինքնին ծանր էր, հարձակումների փաստերն առկա էին մինչեւ ապրիլի վերջը, սակայն մայիսի 6-ին կամ 7-ին հարձակման հնարավորություն հակառակորդին չի տրվել: Հանուն պատմական ճշմարտության պետք է արձանագրել այս փաստը, եւ արժանվոյնս գնահատել հայկական լրատվամիջոցների արդյունավետ աշխատանքը՝ 1992թ. մայիսի սկզբներին:

Մամուլի միջոցով տարածվել, իսկ հետագայում Շուշիի ազատագրմանն անդրադարձած հեղինակների գրքերում² շրջանառություն է ստացել նաեւ մայիսի 7-ի ուշ երեկոյան ԼՂՀ ԳԽ նախագահության, Պաշտպանության խորհրդի արտահերթ նիստերի մասին հաղորդագրությունը: Ահա այն. «Մայիսի 7-ի ուշ երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության արտահերթ նիստը, որտեղ քննարկվեց հանրապետության ռազմատնտեսական ծանր կացությունը, որը ստեղծվել է Ստեփանակերտի անընդհատ հրետակոծության, ԼՂՀ-ի տնտեսական շրջափակման պատճառով, ինչն առանձնապես բացասաբար է անդրադարձել մայրաքաղաքի վրա: Քաղաքում ստեղծվել են անտանելի կենսապայմաններ, իրական է դարձել զանգվածային համաճարակների վտանգը՝ կապված էլեկտրաէներգիայի, դեղորայքի եւ վառելիքի բացակայության հետ: Փաստորեն սով է սկսվել: Ուստի՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը պահանջեց հրավիրել հանրապետության Պաշտպանության խորհրդի նիստ եւ

¹ «ԵՄԿԻՐ», ք.թ. 82, 83, 84, 85, 1992թ., «Республика Армения» №№ 59, 61, 65, 71, 83, 86, 88 от 1992 года եւ այլն:

² Տես Ս. Հասարայան, նւյ. գրք., էջ 9, Բ. Ուլուքարյան, նւյ. գիրքը էջ 415, Վ. Բ. Հատրոյունյան նւյ. գիրքը, էջ 136-138:

անհապաղ միջոցներ ձեռնարկել ադրբեջանական զինյալ կազմավորումների կրակակետերը լռեցնելու, ԼՂՀ բնակչության անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովման համար: Նախագահությունը անհամաձայնություն հայտնեց արտաքին ազդեցիկային դիմակայելու պաշտպանական մեթոդին, որն ընտրել էր հանրապետության Պաշտպանության խորհուրդը: Կեսգիշերին սկսվեց ԼՂՀ պաշտպանության խորհրդի արտահերթ նիստը, որտեղ ընդունվեց որոշում Ստեփանակերտի շրջակայքում գտնվող այն բոլոր կրակակետերի վնասագրծման մասին, որտեղից ամիսներ շարունակ ծրագրավորված ավերվում էր քաղաքը եւ ոչնչացվում խաղաղ բնակչությունը¹»:

Այս հաղորդման մեջ միայն կասկած է հարուցում ԼՂՀ ԳԽ նախագահության եւ նրա հանձնարարությամբ ԼՂՀ պաշտպանության խորհրդի ընդունած որոշման հանգամանքը[22]: Այն հաստատող որեւէ փաստաթուղթ չհաջողվեց գտնել ոչ ԼՂՀ պետական արխիվում եւ ոչ էլ Գերագույն խորհրդի ընթացիկ արխիվում: Մի խումբ պատգամավորներ պնդում են, որ այն եղել է, իսկ մի շարք ռազմական գործիչներ պնդում են հակառակը: Սակայն, վերոհիշյալ տեքստի քննությունը ցույց է տալիս, որ ռազմական տեսակետից անհնար է մի քանի ժամում որոշում կայացնել հարձակման մասին, տասնյակ կիլոմետրերի ձգվածություն ունեցող ճակատագծում ուժերի վերախմբավորումներ ու համալրումներ կատարել, ռազմագործողություն սկսել ու հասնել հաջողության: Մանավանդ, որ Շուշիի ազատագրման ռազմագործողության պլանավորումը, հակառակորդի ուժերի ու միջոցների դասավորության հետախուզումը սկսվել է 1992թ. մարտ-ապրիլ ամիսներին²:

3. ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՔԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ռազմաճակատներից նախօրոք ուժեր ձգվեցին դեպի Շուշի: Ապրիլ-մայիս ամիսներին առավել արդյունավետ ու հաճախակի դարձան հետախուզական աշխատանքները: Սղմախ գյուղի մոտակա բարձունքից (Չախմախ յալ) ոչ միայն դիտվում էր Լաչին-Շուշի ճանապարհով կատարվող երթեւեկությունը, այլեւ՝ վերահսկվում: 2-րդ վաշտի զրահատեխնիկայի կողմից այդ ճանա-

¹ «ԵՄԿԻՐ», ք. 87, 1992թ., «Արցախ», քիվ 1, 1992թ.:

² «Հայ զինվոր», ք. 18, 1999թ.: Այդ մասին են վկայում նաեւ ռազմագործողության մասնակիցները:

պարհին խփվել էին տասնյակ փոխադրամիջոցներ: Օդանավակայանի ազատագրումով հնարավոր դարձավ ՅԱԿ-40 ինքնաթիռներով ու ՄԻ-8 ուղղաթիռներով Ստեփանակերտ հասցնել բեռների այն նվազագույն քանակությունը, որն անհրաժեշտ էր Շուշին ազատագրելու համար¹:

Ըստ «Շուշիի ազատագրման մարտական հրաման»-ի, հակառակորդի ուժերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. մոտ 1200 զինվոր շրջանաձեռն պաշտպանություն էր բռնել Շուշի քաղաքի շրջակա բարձունքներում՝ 1006,6-1360-1529-1329-1006,6 (տես՝ ներդիր-քարտեզ №1): Չամխատ գյուղում՝ մոտ 100 մարդ, Լիսագորում՝ մոտ 300-350 մարդ, Քյոսալարի ուղղությունում մոտ 300 մարդ [23]: ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումների առաջ խնդիր էր դրվել ջախջախել հակառակորդին Լիսագոր, Չամխատ, Չանհասան, Կարազյավ բնակավայրերում եւ Շուշի քաղաքի մատույցներում, տիրել Շուշի քաղաքին, ազատագրել այն ադրբեջանական սպառազեն կազմավորումներից: Այնուհետեւ, հարձակման անցնելով Բերդաձորի ուղղությամբ, Բերդաձորի ենթաշրջանը եւս ազատագրել ադրբեջանցի զավթիչներից²: Հակառակորդի հիմնական ուժերը եւ միջոցները կենտրոնացվել էին Քյոսալարում, Լիսագորում, Չամխատում, Շուշիի մատույցներում եւ Շուշի քաղաքի շրջագծով մեկ: Հակառակորդի ջախջախման միջոցներից էին գրավել 2214,8 բարձունքը (Քիրս լեռան վրա) եւ ամրանալ այնտեղ: Ուժերի վերախմբավորումից հետո, նախատեսվում էր միաժամանակ հարձակում սկսել Լիսագորի եւ Չամխատի վրա: Չուգահեռաբար հարձակում էր սկսվելու չորս ուղղություններով. 1. «26»-ի (հյուսիսային) ուղղություն - *հրամանատար Վ. Չիթչյան*, 2. Շուշի (արեւելյան) ուղղություն - *հրամանատար Ա. Կարապետյան*, 3. Լաչինի (հարավային) ուղղություն - *հրամանատար Ս. Բաբայան*, 4. Քյոսալարի (հյուսիս-արեւմտյան) ուղղություն - *հրամանատար Ս. Օհանյան*, խնդիր ունենալով ջախջախել հակառակորդին բարձունքների վրա՝ Ստեփանակերտի կողմից, ամրանալ Շուշի քաղաքի ծայրամասերում (3 կողմից) եւ հետագայում ոչնչացնել հակառակորդին ու ազատագրել Շուշի քաղաքը³: Պլանավորմանն ակտիվորեն մասնակցել եւ ռազմագործողությունը ղեկավարում էր *գնդապետ Արկադի Տեր-Թադեւոսյանը*:

¹ Չորի Բալայան, նւյ. զիրք, էջ 30:

² ՊԲԿԱ, Շուշիի ազատագրման մարտական հրաման, էջ 1:

³ Նույն տեղում, էջ 2-3

Ըստ հրամանի, մարտական կարգը հետևյալն էր. 1. *Հարավային ուղղությունում* գործելու էին ԼՂՀ ԻՊՈՒ 2-րդ, 3-րդ վաշտերը, Բերդաձորի, Ավետարանցի, Սղնախի, Ակնաղբյուրի, Քարին-տակի ինքնապաշտպանական ջոկատները, ՀՀՎ վաշտի ստորաբաժանումները եւ «Քիրս» խումբը: 2. *Հյուսիսային ուղղությունում* գործելու էին ԼՂՀ ԻՊՈՒ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերը, Հետախուզական վաշտը եւ այլ ստորաբաժանումներ: 3. *Արեւելյան ուղղությունը* բաժին էր ընկել ԼՂՀ ԻՊՈՒ 1-ին վաշտին, Շուշի, Քարաշենի, Քռասնու ինքնապաշտպանական ջոկատներին, Ա. Կարապետյանի, Ռ. Իսրայելյանի, Վ. Ստեփանյանի եւ այլոց մարտական ջոկատներին: 4. *Քյոսալարի ուղղությունում* գործելու էին Բաղարայի, Բալուջայի, Կումայրիի ինքնապաշտպանական ջոկատները, «Հրանտ», «Վաչո» եւ դիվերսիոն-հետախուզական խմբերը: Այնուհետեւ հրամայվում է. 1. Շուշի ուղղությունում զարգացնել հարձակումը Մխիթարաշենի մոտակա ելման բնագծից, քաղաքի ծայրամասերում ադրբեջանցի զինյալներին ոչնչացնելու եւ բանտի ու հիվանդանոցի գծում ամրանալու նպատակով: 2. «26»-ի ուղղությունում գրավել 1006,6, 1200, 1298,3 բարձունքները եւ ամրանալ ճանապարհների խաչմերուկի բնագծում, հետագայում ռեզերվի ներգրավումով՝ գրավել Շուշի քաղաքի հյուսիսային ծայրամասը: 3. Լաչինի ուղղությունում զարգացնելով հարձակումը Չամխատի եւ Լիսագորի ուղղությամբ, միաժամանակ հարվածել «Չաստավ»-ին եւ գրավել Շուշի քաղաքի հարավ-արեւմտյան ծայրամասը: 4. Քյոսալարի ուղղությունում հարձակում կազմակերպել երկու ուղղություններով, հիմնական խնդիր ունենալով շեղել հակառակորդի ուշադրությունը, եւ հարձակման հաջող զարգացման դեպքում, վճարագրծել Կարազյավն ու Չանհասանը¹:

Նախատեսվում էր նաեւ դարաններ պատրաստել Ղայբալի-շեն-Բաշքենդ, Քյոսալար-Չանհասան, Չանհասան-Կարազյավ, Շուշի-Լաչին ճանապարհներին: Այնուհետեւ, առաջադրվում էին հրետանային ստորաբաժանումների, զրահատեխնիկայի, հակաօդային պաշտպանության միջոցների, ռազմամթերքի սպառման ու պաշարների շարժական կետերի ստեղծման խնդիրները²:

Խնդիրների լուծման պատրաստության ժամը սահմանված էր մայիսի 8-ի ժամը 2.30-ին: Հրամանը ստորագրել էին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, գնդապետ Արկադի Տեր-Թադեւոսյանը եւ նրա տեղակալ Ֆելիքս Գզոդյանը:

¹ Նույն տեղում, էջ 4-5:

² Նույն տեղում, էջ 6-8:

4. ՇՈՒՇԻԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ռազմագործողությանը նախորդած ամիսներին(մարտ, ապրիլ) հրետանի, որպես այդպիսին, դեռ չկար: ԻՊՈՒ տրամադրության տակ կային 2 ՄՄ-21 «Գրադ» կայանք, որոնցից մեկը ստացվել էր ռազմագործողության նախօրեին եւ հենց այդ նպատակով, 3 հաուբից, իսկ վաշտերում՝ 120 մմ-ոց եւ 82 մմ-ոց ականանետներ:

Ըստ Շուշիի ազատագրման մարտական հրամանի, ՄՄ-21-ի ստորաբաժանումը խնդիր ուներ հրետանային նախապատրաստության ընթացքում ծնել հակառակորդի կրակային միջոցները եւ կենդանի ուժը Շուշիի արեւմտյան մասում (նշանակետեր 106, 107, 108, 110, 111), միաժամանակ, պատրաստ լինելով խոցել 109, 204, 205 նշանակետերը:

Դ-30 հաուբիցների ստորաբաժանումը հրետանային նախապատրաստության ընթացքում պետք է ծնէր 201, 202, 203 նշանակետերը:

Ականանետային ստորաբաժանումը հրետանային նախապատրաստության ընթացքում պետք է ծնէր 102 նշանակետը, միաժամանակ պատրաստ լինէր խոցելու 110, 201, 202 նշանակետերը:

Նախատեսվում էր ծախսել ռազմամթերքի հետեւյալ քանակությունը. հրետանային նախապատրաստության համար՝ 60, հրետանային աջակցության համար՝ 25 արկ, պահեստում ունենալով արկերի ընդհանուր քանակի 10 տոկոսը:

ԿՍ-19 հաշվարկին հանձնարարվում էր կրակադիրք զբաղեցնել Շոշի շրջակայքում՝ ուղիղ նշանառությամբ աշխատելու համար, նպատակ ունենալով խփել ամրակետերի վերածված բանտի ու հիվանդանոցի շենքերին¹: 1992 թ. ապրիլի 15-ի թվակիր մի քարտեզի տվյալներով, նախատեսվում էր օգտագործել ձեռքի 2000 նոնակ, 400 125 մմ-ոց, 450 122 մմ-ոց, 200 120 մմ-ոց, 800 82 մմ-ոց, 250 «Գրադ»-ի, 120 ՅՄՄ-1-ի եւ 6000 ՅՄՄ-2-ի արկեր, հրթիռներ ու ականանետներ²: Իհարկե, Շուշիի ազատագրումն իրականացավ ծախսված ռազմամթերքի քանակության աննշան տատանումներով, սակայն, քարտեզի վերոբերյալ տվյալները հուշում են, որ

¹ ՊԲԿԱ, Շուշիի ազատագրման մարտական հրաման, էջ 6-8:
² ՊԲԿԱ, «Հրազդան» ռազմագործողության ղյանը, 1973 թ. հրատ. փաթեթ, Մ1:100000:

ռազմագործողությունը նախապատրաստվել է հիմնովին, լրջորեն եւ բնավ չի թերագնահատվել հակառակորդը: Մի ուշագրավ փաստ եւս. ձեռքի 2000 նոնակի հատկացումը բնավ պատահական չէր, այլ հաշվի առնելով Շուշիի եւ ծրագրվող ռազմագործողության առանձնահատկությունները, ԻՊՈՒ շտաբը մեծ դեր է վերապահել, այսպես կոչված, «գրպանային հրետանուն», այսինքն՝ ձեռքի նոնակներին, ինչը միանգամայն ճիշտ էր թե հանկարծակիությունն ապահովելու, թե հակառակորդին ավելի դիպուկ խոցելու եւ թե անվտանգության նկատառումներով... Ըստ երեւույթին, դեռեւս նոր-նոր կազմավորվող հրետանին լիակատար վստահություն չէր ներշնչում, հետեւաբար՝ բացը լրացնելուն կոչված էր «գրպանային հրետանին» ...

Նախապես, 20 օր տեւողությամբ տեղազննում էր կատարվել, հետախուզվել ու ճշտվել էին նշանակետերը, հարվածի գլխավոր ուղղությունները: «Հայտնաբերվել» էին 20-ից ավելի նշանակետեր: Ստովի Շուշի քաղաքի տարածքը բաժանվել էր 3 մասի, որոնցից յուրաքանչյուրի վրա հրետանին աշխատելու էր փուլ առ փուլ (3 փուլով): Հայ հրետանավորները ձգտում էին չվնասել Ղազանչեցոց եկեղեցին, որպես պատմամարտաբանական հուշարձան ու բերդաքաղաքի հայկականության խորհրդանիշ, այնինչ այն վաղուց վերածվել էր հակառակորդի զինապահեստի, ուր պահվում էին «Գրադ»-ի հարյուրավոր արկեր:

Հրետանային ապահովման նախապատրաստական աշխատանքներին ակտիվորեն մասնակցել եւ հրետանային պլանավորումը ղեկավարում էր գնդապետ (այժմ՝ գեներալ-մայոր) Լեոնիդ Մարտիրոսյանը:

ՄՄ-21 հրթիռահրետանային մարտկոցի աշխատանքը ղեկավարում էին դասակի հրամանատարներ Սերգեյ Հարությունյանը, Վալերի Կարապետյանը, հետախուզությունում էր եւ կրակն ուղղորդում էր Անուշավան Հարությունյանը: Ռեակտիվ հրետանու ղեկավարումը ստանձնել էր ժորա Գասպարյանը:

Մայիսի 8-ի գիշերվա ժամը 22⁰-ին ՄՄ-21 մարտկոցը կրակ բացելու հրաման ստացավ: Դեպի Շուշի սլացող առաջին երեք հրթիռներն ազդարարեցին գրոհի սկսման մասին: «Գրադ»-ի հաշվարկը հրաշքներ էր գործում. ընդամենը 30 րոպեում 2 ՄՄ-21 կայանքից արձակվեց շուրջ 120 հրթիռ, դա այն դեպքում, երբ մեկ մեքենան միայն լիցքավորելու համար պահանջվում էր 15 րոպե: «Գրադ» կայանքների համար նախատեսված էին 3 կրակադիրքեր: 1012,5 եւ 1011,0 միչերով (Պուլլուր-բլուր) բարձունքների

հետեւից ու Խանածախի մոտակայքից խփող ՄՄ-21 կայանքները ռազմագործողության ընթացքում արձակեցին շուրջ 300 հրթիռ: Հարկ է նշել, որ առաջին համազարկը տրվեց հակառակորդից խլված հրկիզող կամ տերմիտային (*բարձր ջերմություն առաջացնող փոշեխառնուրդ*) 40 ռեակտիվ արկերով, որոնք հրդեհի օջախներ առաջացրին Շուշիում, խուճապի մատնելով այնտեղ գտնվողներին: Ժ. Գասպարյանի վկայությամբ՝ 40 հրթիռ արձակվեց Աղդամի վրա, այնտեղ թշնամական ուժերի կուտակումներին խանգարելու, հակառակորդի ուշադրությունը հարձակման գլխավոր ուղղությունից շեղելու նպատակով:

Երբ ՄՄ-21-ի մարտկոցը տեղափոխվել էր 2-րդ կրակադիրք, հակառակորդն ապարդյուն «Գրադ»-ի 20 հրթիռ բաց թողեց արդեն լքված դիրքի ուղղությամբ: Իսկ 2-րդից 3-րդ կրակադիրք տեղափոխվելուց հետո, ընդամենը 1 ժամ անց, լքված դիրքի վրա կախվեցին հակառակորդի ռազմական ուղղաթիռները եւ չկառավարվող հրթիռներ արձակեցին, սակայն, ի հեճուկս թշնամու, դարձյալ անարդյունք:

Դ-30 հաուբիցների ու ականանետների դիվիզիոնի հրամանատարը Ալեքսանդր Դամպերն էր, որը 366-րդ ՄՀ գնդի տեղափոխությունից հետո կամավոր մնացել էր Արցախում եւ ղեկավարման դասակի հրամանատարի ու դիվիզիոնի հետախուզության պետի իր գիտելիքները ծառայեցնում էր ի նպաստ արցախահայության ազատագրական պայքարի:

Շուշիի վրա գործում էր 3 հաուբից: Սովորաբար, հակառակորդն ամեն մի կրակոցի պատասխանում էր համազարկներով, իսկ մայիսի 8-ին գլուխը կորցրել էր... Առիթից օգտվելով, հայ հրետանավորները թնդանոթները դուրս բերեցին կիսաուղիղ նշանառության համար պիտանի դիրքեր, ինչը պայմանավորված էր նշանակետերը դիտարկելու, հետեւաբար՝ դիպուկ կրակելու, ինչպես նաեւ ռազմամթերքը խնայելու անհրաժեշտությամբ: Սերգեյ Ոսկանյանի հաշվարկը 1 հաուբիցով գործում էր Ստեփանակերտ-Շուշի մայրուղու վրա, «26»-ի ուղղությունում, եւ առաջանում ԻՊ ուժերի հետեւից՝ հարկ եղած դեպքում կրակային աջակցություն ցույց տալով գրոհող մարտիկներին: Դավիթ Սաֆարյանի հաշվարկը Ֆելիքս Գզողյանի կանչով տեղափոխվեց Սղնախի մերձակայքը, Լաչինի ուղղությամբ գործող հայկական ստորաբաժանումներին կրակային աջակցություն ցույց տալու համար: Հաուբիցները խփեցին շուրջ 150, մեծամասամբ՝ Շ-1 արկ: Համապատասխան աղյուսակների գրքի բացակայությամբ հանդերձ, հայ

հրետանավորները չվնասեցին յուրայիններին, թեեւ գրոհի ելածներն ամենեւին էլ ապահովված չէին այդ վտանգից: Իսկ երբ լույսը բացվեց, հայ հրետանավորները սկսեցին գործել ավելի ինքնավատահ ու դիպուկ: Անշուշտ, կռահել կարելի է, թե ինչ առավելություն ունեին նետածել ասեղներ պարունակող Շ-1 արկերը, որոնց կիրառումը թույլ կտար խուսափել Շուշիի ավելորդ ավերումից...

Մեկ 120 մմ-ոց եւ հինգ 82 մմ-ոց ականանետների ստորաբաժանումը ղեկավարում էր Մամիկոն Միրզաբեկյանը: Ականածիգները եւս ճնշեցին նախանշված նշանակետերը, նպաստելով հայ ազատամարտիկների առաջխաղացմանը:

Հրետանու ղեկավարումն ու ընդհանուր հրամանատարությունն, ի պաշտոնե, իրականացնում էր Ռազմիկ Մելքունյանը:

Աննշան վերապահումներով հանդերձ, հրետանին, ընդհանուր առմամբ, կատարեց իր առաջ դրված խնդիրը եւ իր նշանակալի ավանդն ունեցավ Շուշիի ազատագրման գործում... Պատահական չէ, որ Շուշիի մարտից հետո, փոխգնդապետ Ժ. Գասպարյանը ստացավ գնդապետի զինվորական կոչում, ինչը, հանձին նրա, հրետանու խաղացած դերի գնահատման արտահայտություններից էր...

Շուշիի ռազմագործողությանը ներգրավված մյուս ստորաբաժանումներից հարկ է նշել նաեւ կապավորներին: Ա. Տեր-Թադեվոսյանի հետ Արցախ ժամանած Արթուր Փափազյանը լավագույնս լուծեց տեղում, ձեռքի տակ եղած սովորական հեռախոսագծերի, տաքսիների ու «Շտապ օգնության» մեքենաների սակավուժ ռադիոկայանքների եւ այլ միջոցներով Ինքնապաշտպանության ուժերի կապի համակարգը կազմակերպելու, ռադիո եւ ռադիոռելեային կայանքների կապավորի մասնագետներ պատրաստելու խնդիրը: Հաջողվեց ստեղծել անխափան գործող կապի լրիվ ձեւավորված համակարգ, ինչը պարզորոշ երեւաց խոշոր մարտական գործողությունների ընթացքում: Իսկ գազաթնակետը Շուշիի ազատագրման գործողությունն էր, երբ կապն ապահովվում էր միաժամանակ տասն ուղղություններով ու զուգահեռաբար, իրականացվում կապի հակազդեցություն՝ ռադիոէլեկտրոնային պայքար: Խլացնելով ու խափանելով հակառակորդի կապը ու կաթվածահար անելով քաղաքը պաշտպանող գորքի ղեկավարման համակարգը, կապավորները Ա. Փափազյանի գլխավորությամբ, մոտեցրին հաղթանակը¹:

¹ Տես «Հայ զինվոր», քիվ 19, 1999 թ., «Մարտիկ», № 24, 1994 թ.:

Շուշիի ազատագրման գործին իրենց ծանրակշիռ ավանդն ունեցան նաեւ բուժաշխատողները: Միայն մեկ՝ հարավային ուղղությունում նրանց գործունեության եւ դաշտային հոսպիտալի ստեղծման մասին գրել է անվանի վիրաբույժ Վալերի Մարությանը¹: Երբ վերջապես մշակվեց քիչ կորուստներով Շուշին ազատագրելու ռազմագործողության պլանը, Ա. Տեր-Թադևոսյանը խնդիր դրեց Վալերի Մարությանի առաջ ստեղծել դաշտային հոսպիտալ: Նրա իսկ առաջարկությամբ այն պետք է տեղադրվեր Սղնախ գյուղում: Ընտրվեց Սղնախի եւ Քարին-տակի միջեւ ընկած տարածքի անտառակը, որը առաջին գծից հեռու էր ընդամենը երկու կիլոմետրով: Սակայն, հոսպիտալն իրենց կողքին տեսնելով, ազատամարտիկները ոգեշնչվեցին ու համոզվեցին, որ առանց բուժօգնության չեն մնա: 1992 թ. ապրիլի 27-ին 13 բժիշկների խումբը մեկնեց տեղակայման վայր: Որոշվեց բուժօգնություն հասցնել մարտի դաշտում ու դաշտային հիվանդանոցում: Երեւանից հրավիրվել եւ բժշկական ծառայության ղեկավարումն իրականացնում էր գինվորական բժիշկ Մարատ Բոյաջյանը: Երեւանյան բրիգադների վրա էր դրված վերականգնողական միջոցառումների կոմպլեքսով առաջին բուժօգնությունը եւ տեղափոխումը Ստեփանակերտ: Երբ մայիսի 5-ին տեղացած ծյունից հետո եղանակը կարգավորվեց, արդեն հոսպիտալը պատրաստ էր վիրավորներ ընդունել: Հարավային ուղղությունից 17 վիրավորների բուժօգնություն ցուցաբերվեց²:

Անգնահատելի ծառայություններ են մատուցել ՅԱԿ-40 ինքնաթիռի եւ ՄԻ-8 ուղղաթիռների հերոս օդաչուները, որոնք բազմիցս իրենց կյանքը վտանգելով շրջափակված Արցախի համար առաջին անհրաժեշտության բեռներ են հասցրել: Միայն ուղղաթիռներով անհնար էր ապահովել Շուշիի ազատագրման հաջողությունը: Խոջալուի կրակակետերի ճնշումից հետո բացվեց նաեւ Ստեփանակերտի օդանավակայանը եւ հնարավորություն առաջացավ վերականգնել ՅԱԿ-40 ինքնաթիռների թռիչքները: Սակայն դրված էր նոր երթուղու բացման խնդիրը: Այդ եզակի ու նույնիսկ աննախադեպ երթուղին բացեց փորձարկող օդաչու Վալենտին Նազարյանը³, ինչը թույլ տվեց առանց Աղդամի օդային տարածք մտնելու, ուղղաձիգ պտուտակածեւ վայրէջք կատարել

Ստեփանակերտի օդանավակայանում: Օդաչուների սխրանքը գնահատվել է ըստ արժանվույն: ԼՂՀ նախագահի հրամանագրով «Շուշիի ազատագրման համար» մեդալով պարգևատրվել են «Արարատ Ավիա» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Վ. Վանցյանը, ուղղաթիռի հրամանատարներ Ս. Մանվելյանը, Վ. Մնացականյանը, ՄԻ-8 ուղղաթիռի բորտմեխանիկ Ս. Վիրաբյանը, ՅԱԿ-40 օդանավի հրամանատար Ա. Չիլինգարյանը եւ ուրիշներ:

¹ Валерий Марутян, У войны долгий след. Ереван, 1996, стр. 34-42

² Նույն տեղում, նաև՝ 2. Բայալյան, Բժիշկ Մարտիանը ու նրա... գիրքը, էջ 280-285

³ 2. Բայալյան, Դժոխք եւ դրսիս, էջ 30:

ՉՈՒՅԻ ԶՈՐՐՈՐԴ

ՈԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲՆ ՈՒ ԸՆԹԱՅՔԸ

Տարբեր պատճառներով ռազմագործողությունը մի քանի անգամ հետաձգվել է: Մայիսի 8-ի ժամը 2.30-ին ԼՂՀ ԻՊՈՒ 1200 մարտիկներից [24] կազմված չորս հարձակողական խմբերը ձեռնամուխ եղան ուժերով ու միջոցներով գերազանցող հակառակորդի ջախջախմանը՝ Շուշիի անառիկ ամրոցի եւ շրջակա բնակավայրերի հենակետերում:

Ա. «26»-ի (ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

«26»-ի (հյուսիսային) ճակատը Շուշիի ազատագրման ռազմագործողության հիմնական ուղղություններից էր: 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, հետախուզական վաշտերը եւ այլ ստորաբաժանումներ, Վալերի Չիթչյանի ընդհանուր հրամանատարությամբ, խնդիր ունեին գրավել 1006,6, 1200, 1298,3 միշերով բարձունքները եւ ամրանալ ճանապարհների խաչմերուկի բնագծում, իսկ հետագայում, պահեստազորի ներգրավմամբ, վերահսկողության տակ առնել Շուշի քաղաքի ծայրամասը:

Մարտական գործողությունները սկսվեցին մայիսի 8-ի վաղ առավոտյան: Կենտրոնական ուղղությամբ՝ Ստեփանակերտ-Շուշի մայրուղով, հարձակման անցավ 4-րդ վաշտի շուրջ 85 հետեւակային՝ 1 տանկի ու 2 ՅՄՍ-1-ի աջակցությամբ: Ալիկ Յայրապետյանի ՅՄՍ-2-ը կրակադիրք էր զբաղեցրել Կրկժանի բարձունքում եւ կրակի տակ առել երեք աշտարակների բարձունքը: Չախ թեւում գրոհի ելան Արթուր Պողոսյանի եւ Սամվել Կարապետյանի, իսկ աջում՝ Կարեն Մարտիրոսյանի եւ Վահան Ղարիբյանի դասակները: 4-րդ վաշտի հրամանատարը Գագիկ Սարգսյանն էր: Հրետանային նախապատրաստությունից հետո, երեք աշտարակների սարաբլուրը 20 րոպեում գրավվեց¹: Խփվեցին հակառակորդի մեկական ՁՓ եւ ՅՄՍ-1: Հակառակորդի օգնական ուժերը ճանապարհի վրա դեմ առան սարաբլրում հաստատված հայ մարտիկների տե-

¹ «Աւրշիկ», p. 18-19, 1996թ.:

ղատարակի կրակին ու ստիպված հետ դարձան: Այդ բնագծին տիրելը կարելուր նշանակություն ունեցավ ռազմագործողության հաջող ելքի համար: Այնուհետեւ, միանալով գրոհող մյուս ստորաբաժանումներին, 4-րդ վաշտը շարունակեց առաջխաղացումը, ինչին խոչընդոտում էին հակառակորդի ռազմական ուղղաթիռները եւ մայրուղու ոլորաններում ազատ մաներող 2 տանկերը: Տանկային մեռածարտում թեւեւ առաջինը կրակեց Գագիկ Ավարյանի, Աշոտ Ավանեսյանի եւ Շահեն Սարգսյանի տանկը, սակայն զրահահար արկի բացակայությունը ճակատագրական եղավ նրանց համար ու տխուր վախճան ունեցավ... Այլեւայլ պատճառներով ԻՊՈՒ մարտական տեխնիկայի շարքից դուրս գալը մի պահ թուլացրեց հարձակման թափը: Սակայն մինչ այդ պահը գրավված ռազմավարական նշանակության բնագծերում ամրանալը, ինչպես նաեւ այլ ուղղություններում գործող հայ մարտիկների շոշափելի հաջողությունները, մանավանդ Շուշի-Լաչին ուղեհատվածի փակման անմիջական սպառնալիքը եւ բաց թողնված «միջանցքով» հակառակորդի ուժերի հապշտապ փախուստը կանխորոշեցին մարտի ելքը. մայիսի 9-ին հայ ազատամարտիկները հաղթականորեն մտան Շուշի...

Հաղթանակի կոման գործում մեծ էր նաեւ 6-րդ ու հետախուզական վաշտերի ավանդը: Հետախուզական վաշտի գրոհային երկու խմբերը՝ Սեմյոն Աբրահամյանի եւ Վալերի Յայրիյանի հրամանատարությամբ, գրավեցին ճանապարհամերձ երկու բարձունք եւ կրակային աջակցություն ցույց տվեցին ձախ թեւով գրոհող 4-րդ վաշտին: Միաժամանակ, հետախուզական վաշտը խնդիր ուներ փակել ճանապարհը: Այնուհետեւ, շարունակելով առաջխաղացումը շրջարդմիավորման պահեստների եւ երաժշտական գործիքների գործարանի ուղղությամբ, հետախույզները դիրքավորվեցին վերջինիս դիմացի բարձունքներում: Մայիսի 9-ին, ճնշելով դիմադրության առանձին կետերը, վաշտի մարտիկները մտան Շուշի...

6-րդ վաշտը եւս, բաժանվելով գրոհային 2 խմբի, խնդիր ուներ հակառակորդից մաքրել շրջարդմիավորման պահեստների տարածքը եւ գրավել երաժշտական գործիքների գործարանի ուղղությամբ ձգվող բարձունքը, որտեղից կրակային ներգործությամբ հնարավոր էր վերահսկել նաեւ բանտի շրջակայքը: Վաշտի գործողությունները ղեկավարում էր Կարեն Ներսիսյանը: Հիշյալ բարձունքի գրավումը կարելուր նշանակություն ունեցավ Շուշիից

օգնության շտապող հակառակորդին հետ շարտելու տեսակետից, ինչը դուրացրեց երեք աշտարակների բարձունքի եւ շրջարդմիավորման պահեստների նկատմամբ վերահսկողություն հաստատելը: Արիաբար դիմանալով տանկի արկակոծությանն ու հակառակորդի չդադարող գնդակոծությանը, հայ մարտիկները մինչեւ վերջ մնացին գրեթե լերկ բլրագագաթին եւ կատարեցին իրենց առաջ դրված խնդիրը, նպաստելով ընդհանուր հաջողությանը:

6-րդ վաշտի 1-ին գրոհային խումբը, Սերգեյ Թովմասյանի գլխավորությամբ, մարտերով առաջանում էր նախանշված ուղեգծով: Ս. Թովմասյանն անձամբ նռնականետով շարքից հանեց հակառակորդի 2 ավտոմեքենա եւ 1 գրահամեքենա, իսկ նրա զինակիցները՝ նաեւ տասնյակ զինյալներ: Վիրավորվելուց հետո, վիրակապով Ս. Թովմասյանը շարք վերադարձավ եւ շարունակեց ղեկավարել մարտը...

Խիզախումի, անձնվիրության, հաղթանակի հասնելու վճռականության եւ կամային այլ որակների մարմնացում էին հայ ազատամարտիկներից շատերը, հատկություններ, որոնք օգնեցին մերօրյա հերոսներին՝ անհնարինը դարձնել հնարավոր եւ հրաշքներ գործել...

Մարտի մասնակիցների վկայությամբ, 5-րդ վաշտը պետք է առաջանար երաժշտական գործիքների գործարանի եւ Շուշի քաղաքի «բանալու» ուղղությամբ, սակայն մարտական առաջադրանքը, ինչ-ինչ պատճառներով, չհաջողվեց կատարել...

7-րդ, 8-րդ եւ 9-րդ վաշտերը «26»-ի ամրակետում խնդիր ունեին փակել Շուշիից Ջանհասան ձգվող ուժերի հետդարձի ծանապարհը, իրարից մեկուսացնել դիմադրության այդ երկու օջախները...

Այսպիսով, ԼԳՅ ԻՊՈՒ ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունները, գրագետ պլանավորման ու ղեկավարման, ինչպես նաեւ հայ ազատամարտիկների համընդհանուր խիզախության շնորհիվ, պսակվեցին փայլուն հաջողությամբ:

Բ. ՇՈՇԻ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Բերդաքաղաքի արեւելյան կողմից հակառակորդի դիմադրությունը հաղթահարելու եւ բնականից անառիկ բնագծերում նրա պաշտպանությունը ճեղքելու խնդիրն առավել դժվար լուծե-

լի էր, ինչն ազատամարտիկներից պահանջում էր ուժերի գերազույն լարում, անձնվիրություն ու հնարամտություն, կամքի ու վճռականության դրսևորում: Հարկ է նշել, որ այդ ամենը համընդհանուր խանդավառության, հաղթանակի հանդեպ հավատի, բարոյականային որակների հետ զուգորդած՝ հայ ռազմիկները հասան իրենց նպատակին ու փայլուն կերպով լուծեցին առաջադրված խնդիրները: Ըստ երեւույթին, հակառակորդը հենց այս ճակատից էլ սպասում էր հարձակման, ահա թե ինչու համառ ու երկարատեւ մարտերը ծավալվեցին հենց այստեղ: Նախօրոք մեծ քանակությամբ կենդանի ուժ կենտրոնացնելով, թշնամին կատարի դիմադրություն ցույց տվեց, ջանալով ամեն գնով պաշտպանել զբաղեցրած բնագծերը:

Հարվածային ուժերի առաջխաղացումը սկսվեց մայիսի 8-ի գիշերը երեք հիմնական ենթաուղղություններով: Ձախ թելում Շոշ գյուղի ինքնապաշտպանական ջոկատն էր՝ Արզամ Հարությունյանի հրամանատարությամբ: Նրա ենթակայության տակ էին դրված նաեւ Արկադի Կարապետյանի դասակից 11 զինվոր՝ առաջին գիշերն անպայման Շուշի մտնելու հանձնարարությամբ: Կենտրոնում՝ տխրահոջակ բանտի ուղղությունում, Աշոտ Ղուլյանի հրամանատարությամբ 1-ին վաշտն էր, իսկ աջ թելում Ռուսլան Իսրայելյանի ընդհանուր հրամանատարությամբ գործում էին հատուկ հետախուզական խումբը, Քոասնու (հրամանատար՝ Վալերի Բաղրյան), Քարաշենի (հրամանատար՝ Վիլեն Սաֆարյան) ինքնապաշտպանական ջոկատներից ընտրված 15-ական մարտիկներ: ՀՀԳ վաշտի՝ ջուղայեցի Հրանտ Մինասյանի դասակը եւ «Մոստ» խումբը (հրամանատար՝ Վիլեն Ջաքարյան) գտնվում էին պահեստագործում: ՀՀԳ վաշտի՝ Գրիգոր Գրիգորյանի հրամանատարությամբ գործող դասակը ուղղության հրամանատարի պահեստագործ էր: Հրամանատարական կետում էին Արկադի Կարապետյանը եւ Վարդան Ստեփանյանը՝ հինգ անփորձ մարտիկներով:

Շոշի կամրջից ոչ շատ հեռու հակառակորդի դիրքերն էին, որտեղից ականանետ էր գործում: Լեւոն Մնացականյանի ականանետային հաշվարկը պատասխան կրակ բացեց, փախուստի մատնելով հակառակորդի ականաձիգներին: Նրանց պահակակետերը լավ չէին ամրացված, ըստ երեւույթին, նրանք վստահ էին, որ իրենց վրա հարձակում չի լինելու: Հակառակորդի անհասցե կրակոցները լուրջ խոչընդոտ լինել չէին կարող: Ականաղաշտերի բացակայությունը եւ հակառակորդի զինվորների խուճապը դյու-

րացրին առաջին բարձունքների գրավումը: Չախ թելում հակառակորդը չէր սպասում, որ այդ դժվարանց ժայռերով մարդ կարող էր բարձրանալ: Սակայն նրանց շփոթմունքը երկար չտեւեց: Օգնական ուժեր ստանալով, սկսեցին կատաղի դիմադրություն ցույց տալ: Հայ մարտիկների դիրքը խիստ աննպաստ էր: 12 հայ ազատամարտիկներից 8-ը վիրավորվել էր: Այդուհանդերձ, տղաներն ուժ գտան եւ չհուսահատվեցին ու դաշույններով խրամատանման փոսեր կտրելով, քողարկեցին վիրավորներին: Վիտալի Վերդյանի ու Արմեն Պետրոսյանի կարկտահար թնդանոթի, Վալերի Հարությունյանի գնդացրի, ինչպես նաեւ Շոշի ֆերմայի մոտից ՀՄՄ-ով գործող Գառնիկ Ավանեսյանի կրակային աջակցությամբ հայ մարտիկներին հաջողվեց մարտադաշտից հանել վիրավորներին:

Հակառակորդի դիմադրությունը կատաղի էր հատկապես պարսպապատերի շրջակայքում: Նռնակածիգ Սերգեյ Դանիելյանը 3 արկ մտցրեց պատի ճեղքով, այնտեղ հրդեհ բռնկվեց, թուրքերը ստիպված թողեցին դիրքը, սակայն մոտիկ մի տեղից շարունակեցին կրակել:

Ղարմետաքսկոմբինատի Շուշիի մասնաճյուղի շենքի ուղղությամբ բավական խորացած հայ մարտիկների խումբը թնամու խոշոր պահեստային ուժերի հակահարձակմանը երկար դիմագրավելու հնարավորություն չունեցավ՝ թե թվաքանակով քիչ լինելու եւ թե ռազմամթերքը սպառվելու պատճառով: Այդուհանդերձ, հաղթահարելով խուճապային տրամադրությունները, նրանք կազմակերպված նահանջեցին ավելի հարմար բնագծեր, շարունակ լարվածության ու տագնապի մեջ պահելով հակառակորդին:

Շոշ գյուղից մեծ թվով տղամարդիկ առանց զենքի մասնակցում էին գրոհին եւ պատրաստ էին անմիջապես փոխարինել զոհված կամ վիրավորված համագյուղացիներին: Բարեբախտաբար, զոհեր քիչ եղան, բացելայնպես, այդ անձնվեր մարդիկ պարապ չմնացին: Վիրավորներին էին հանում, փամփուշտներ էին հասցնում կոփողներին, եւ, վերջապես, նրանց կողքին գտնվելով, ոգեշնչում ու նեցուկ էին կանգնում...

Հարձակումը սկսելու պահին բանտի մոտերքից «Գրադ» կայանք էր աշխատում Ստեփանակերտի վրա: Մի տանկ էլ խփում էր Շոշին: 1-ին վաշտը կիսվեց: Հայ մարտիկներն ուզում էին շրջանցել եւ լռեցնել «Գրադ»-ը: Սակայն բանտի պարիսպների տակ կատաղի մարտ ծավալվեց: Աշոտ Ղուլյանի գլխավորու-

թյամբ հայ մարտիկները հասան պարսպապատերին: Նռնակներ նետվեցին: Հակառակորդը պատասխանեց նույն ձեւով: Աշոտ Ղուլյանը վիրավորվեց թեւից: Մի քանի հոգու հաջողվեց բարձրանալ պատը եւ դիմահար կրակով վանել թնամուն: Թերեւս այս պահին է արձանագրել ժամանակակիցը, գրելով. «Մայիսի 8-ի առավոտյան ժամը 6³⁰ –ին Աշոտը հեռակապով կապվում է Արկադի Տեր-Թադեոսյանի հետ՝ կենտրոնական շտաբ եւ հաղորդում բառացիորեն հետեւյալը... նստած եմ Շուշիի բերդի [իմա՝ բանտի – Մ.Չ.] պատին եւ սպասում եմ տղաների բարձրանալուն, մինչեւ մի քանի րոպե մտնում եմ քաղաք¹»:

Վաշտի դասակներից մեկը՝ Միշիկ Միրզոյանի հրամանատարությամբ, հասավ Շահ-Ղաջարների գերեզմանոցին: Հակառակորդի ՀՄՄ-1-ի շարժի հռնդյունը գրավեց դասակի հրամանատարի, Ռաֆայել Գալստյանի եւ Յաշա Խաչիյանի ուշադրությունը, որոնք կարճատեւ մարտում ոչնչացրին անձնակազմի անդամներին ու առգրավեցին բոլորովին նոր զրահամեքենան:

Աջ թեւի ստորաբաժանումներն առաջադրանք էին ստացել անցնել ձորը, ապա ֆիննական տնակների շարքը, ելնել դեպի երեք աշտարակների բարձունքը եւ այնտեղ միանալ 4-րդ վաշտի զինվորներին, եթե իհարկե, նրանք եւս կարողանային անփորձանք հասնել նշված բնագծին: Այնուհետեւ, փոխհամագործակցելով միմյանց հետ, համատեղ պիտի մտնեին Շուշի: Իսկ եթե 4-րդ վաշտի առաջխաղացումը դժվարանար կամ էլ հակառակորդն օգնական ուժեր ստանար Շուշիից, ապա Ռ. Իսրայելյանի հրամանատարությամբ գործող զորաջոկատները պիտի դուրս գային ավտոբազայի վերելը, փակեին խճուղին եւ ապահովեին 4-րդ վաշտի առաջխաղացումը²:

Մարտական կարգը հետեւյալն էր. կենտրոնում Քռասնու ինքնապաշտպանական ջոկատի 15 մարտիկները եւ ենթաուղղության հրամանատար Ռ. Իսրայելյանն էին: Նրանց ձախ կողմում Քարաշենի ջոկատի 15 ընտրյալներն էին, իսկ աջում՝ Ռ. Իսրայելյանի հետախուզական խումբն էր՝ Գագիկ Օսիպովի հրամանատարությամբ:

Անողորմ մարտեր մղելով, հայ ռազմիկները հաղթահարեցին ձորակի բնական արգելքը եւ ապա ֆիննական տնակների շրջա-

¹ «Ազգայնական», №. 120, 1999 թ., Դանիելյան Արմեն, Բեկորը ինչոպիսին որ կար (հուշատպասում): Ստեփանակերտ, 2000, էջ 34

² «Մարտիկ», p. 18, 1999թ.:

նում ընկճեցին հակառակորդի դիմադրությունը: Գրոհող ստորաբաժանումների ու պահեստազորի միացյալ ուժերը սկսեցին ելնել ավտոբազայի ուղղությամբ: Երբ հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, հայ մարտիկները դուրս եկան խճուղի, սպառնալով թշնամու թիկունքին, Բակո Սահակյանը, Օլեգ Փիրումյանը եւ մյուսները քարհանքի մոտակայքից կրակային ներգործությամբ սկսեցին շեղել երեք աշտարակների բարձունքում դիրքավորված թշնամու ուշադրությունը, նպաստելով հակառակ կողմից հայ մարտիկների առաջխաղացմանը: Հակառակորդի զինվորները սկսեցին ճողոպրել 3 աշտարակների բարձունքից, որից հետո փաստորեն բացվեց 4-րդ վաշտի ծանապարհը եւ ԻՊՈՒ գրահատեխնիկան սկսեց ելնել խճուղով: Փախչողների մի մասը մտավ ֆերման եւ շրջապատման մեջ հուսահատ կատաղությամբ դիմադրություն ցույց տվեց: Այդ մարտում սպանվեցին Գ. Օսիպովը, Օ. Փիրումյանը, 2 մարտիկ վիրավորվեց: Քարաշենի ջոկատը, նրա աջ ու ձախ թեւերով առաջացող ստորաբաժանումները մի պահ գամված մնացին տեղում, միակ էլքը, թերեւս, ֆերմաները շրջանցելն էր: Այն դյուրացնելու համար գործի դրվեցին 1 ՅՍՍ եւ ԿՊՎԴ գնդացի: Ֆերմաների եւ տնակների արանքով իջնող նեղ ծանապարհի մայթեզրի քարերի հետեւով շրջանցեցին Աշոտ Հովսեփյանը, Վազգեն Վելիցյանը ու Գոռ Բաղդասարյանը եւ նռնակներ նետեցին ֆերմայի վրա: Այնինչ, բետոնե առաստաղը հուսալիորեն պաշտպանում էր հակառակորդին: Շրջանցողներին օգնեց նաեւ նռնակածիգ Մխիթար Տոնյանը, որը մի քանի արկ անցկացրեց ֆերմայի պատուհանի շրջանակից ներս: Գնդացորդ Լեւոն Ֆարաջանյանը ԿՊՎԴ-ով անընդհատ խփում էր, նեղելով թշնամուն: Սակայն, քանի որ երկարում էր ֆերմայի դիմադրությունը եւ խճուղով առաջացող 4-րդ վաշտի մարտիկներին հասնել էր պետք, տղաները ֆերմայից թեքվեցին ձախ եւ շարժվեցին ավտոբազայի վրա: Այդ պահին Քարաշենի ջոկատի 4 մարտիկներ եւս հայտնվեցին կրակի տակ: Կարձատեւ մարտում զոհվեց Հովիկ Հովսեփյանը, առեղծվածային պայմաններում անհայտ կորավ Ռազմիկ Թավրիզյանը, վիրավորվեցին Աշոտ Թեւանյանը եւ հայաստանցի կամավորական Արմեն Կարապետյանը: Հայ մարտիկները դիրքավորվեցին ավտոբազայից մի քիչ ներքեւ: Դիմադրություն այլեւս չկար, կրակոցներն անկանոն էին, սակայն առաջխաղացումն էլ էր դադարեցվել, թերեւս թշնամուն ճողոպրելու հնարավորություն ընձեռելու համար: Ավտոբազայի ուղղությամբ ելնելու պահին սպան-

վեց Քռասնու ջոկատից Կիմ Մարտիրոսյանը: Մագլցելով ավտոբազայի ցանկապատը, հայ մարտիկներն առաջացան խանութների շարքի ուղղությամբ: Այդ պահին էլ ԻՊՈՒ 1 տանկ եւ 3 ՅՍՍ հասան այդտեղ: Հակառակորդի տանկը կեռմանի հետեւից անակնկալ դուրս եկավ կրակադիրք եւ հաղթեց տանկային մեծամարտում: Անհաջողության պատճառը զրահահար(կուսուլյատիվ) արկերի բացակայությունն էր, իսկ բեկորային արկերով անհնար է զրահը ձեղքել: Ուստի, Գ. Ավշարյանի, Շ. Սարգսյանի եւ Ա. Ավանեսյանի անձնակազմը, վճռականություն ու կամք դրսևորելով հանդերձ, չկարողացավ իր տանկին ամրացված եռագույն դրոշը հաղթականորեն հասցնել Շուշի: Անձնակազմից երջանիկ պատահականությամբ փրկվեց միայն Գագիկ Ավշարյանը, իսկ Շահեն Սարգսյանն ու Աշոտ Ավանեսյանն իրենց արյան զնով մոտեցրին հաղթանակը¹: Սակայն ԻՊՈՒ գրահատեխնիկայի շարքից դուրս գալը սառը ցնցուղի ազդեցություն գործեց գրոհող մարտիկների վրա: Հոգնած ազատամարտիկները գրավված բնագծերում հանգստանում էին, երբ Կարմիր գյուղի (Տրնավազի) կողմերից ռազմական 3 ուղղաթիռներ հայտնվեցին եւ չկառավարվող հրթիռներ արձակեցին նոր դիրքերի ու մարտիկների կուտակման վայրերի վրա: Չոհեր ու վիրավորներ եղան: Ռազմական ուղղաթիռների օդային հարձակմանը հետեւեց հարաբերական անդորրը: Արդեն պարզ էր, որ դադար է տրվել ու Շուշիի գրոհը հետաձգվել է վաղվան:

Վերախմբավորելով ուժերը եւ ներգրավելով պահեստազոր, ԻՊՈՒ հրամանատարությունը ձեռնարկեց Շուշի բերդաքաղաքի երկրորդ գրոհը, որը պսակվեց փայլուն հաջողությամբ: Հրետանային նախապատրաստությունից հետո, ձախից՝ բանտի կողմով, մտավ 1-ին վաշտը՝ Աշոտ Ղուլյանի գլխավորությամբ, բանտի դիմացի բլրալանջով՝ ԼԴՀ ԳԽ-ին կից հատուկ վաշտը՝ Վալերի Դանիելյանի գլխավորությամբ, իսկ աջով՝ հատուկ նշանակության ստորաբաժանումը: Բանտը գրավելուց հետո, հայ մարտիկները բարձրացան Շուշի եւ «սանրելով» տները, հասան Ղազանչեցոց եկեղեցուն...

Գ. ԼԱՉԻՆԻ (ՀԱՐԱՎԱՅԻՆ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

ԻՊՈՒ հարվածային խմբերը հարձակման անցան Փոքր Քիրս Լեռան, Նաբիլար-Չառխստ եւ Լիսագոր ենթաուղղություններով:

¹ Ավելի մանրամասն տե՛ս «Շուշի». քիվ 1, 1994 թ.:

Առաջին ենթաուղղությունում գործում էին 2-րդ վաշտից 40 մարտիկ՝ Ջրանտ Ծատրյանի, 3-րդ վաշտից 45 հոգի՝ Աշոտ Խաչատրյանի, Ավետարանոց գյուղի ինքնապաշտպանական ջոկատից 38 հոգի՝ Համլետ Ստեփանյանի, ՀՀԳ Էջմիածնի դասակը՝ 30 հոգի՝ Հայկ Կարապետյանի հրամանատարությամբ: Շուրջ 110 մարտիկներից կազմված խմբավորման երթուղին Ավետարանոցից ձգվում էր Սղնախի մարտական դիրքերով (ուր երկու պահակակետ կար), իսկ այնտեղից էլ դեպի Քիրս լեռը: Խնդիր էր դրված վնասագերծել Քիրսի ստորոտի ադրբեջանական ռազմական հենակետը, որտեղից «Գրադ» հրթիռահրետանային կայանք էր աշխատում Ստեփանակերտի ու շրջակա հայկական բնակավայրերի վրա: Մյուս կողմից, քանի որ Քիրսից Շուշին լրիվությամբ տեսանելի էր, անհրաժեշտ էր հակառակորդին զրկել այնտեղից կրակի ուղղորդում տալու, հայկական ստորաբաժանումների տեղաշարժերին հետեւելու, ուստի եւ՝ ռազմագործողությանը խանգարելու հնարավորությունից: Ահա թե ինչու Քիրսի գրավումից հետո միայն պետք է սկսվեր Շուշիի գրոհը:

Աջ թեւով Քիրսը շրջանցեցին 2-րդ, իսկ ձախ թեւով՝ 3-րդ վաշտերի մարտիկները: Երկարատեւ ու դժվարանցանելի ճանապարհը հաղթահարելուց հետո, հայ մարտիկները հասան հակառակորդի ռազմական բազայի դիմացի պահակակետին: Դեռեւս ճանապարհին մի քանի ադրբեջանցի զինվոր էին պատահել, նշանաբառ հարցրել: Ծայր առած փոխհրաձգության ժամանակ հակառակորդի զնդացրորդը թավալզւոր էր եղել ձյուների մեջ:

Տեղանքի վրա իշխող բլրին հաստատված հակառակորդի դիրքերը նպաստավոր էին: Սակայն, թիկունքից հասցված հանկարծակի հարվածից, գնդացրային ու նռնականետային հոծ կրակից թշնամին խուճապի մատնվեց եւ դիմեց փախուստի: Լուսաբացին (մոտավորապես ժամը 5-ին) սկսված գրոհը 1,5 ժամ անց պսակվեց հաջողությամբ: 2-րդ վաշտի մարտիկները կատարեցին առաջադրված խնդիրը, գրավելով նախանշված բարձունքը:

3-րդ վաշտի մարտիկները, որոնք զինված էին խոշոր տրամաչափի 2 գնդացրով, 3 նռնականետով եւ ինքնաշեն 1 ՀԱՆ-ով, խնդիր ունեին հարվածել Փոքր Քիրսի ստորոտում տեղակայված թշնամու ռազմական բազային, իսկ այնուհետեւ դուրս գալ Լիսագորի վրա, գրավելով 2214 միշով բարձունքը: 2-րդ վաշտը 2142 միշով բարձունքը գրավելով, նպաստեց 3-րդ վաշտի առաջադրանքի կատարմանը, իսկ այնուհետեւ պետք է գործեր Լիսագորի ուղղությամբ՝ 2214 միշով բարձունքից հարավ:

3-րդ վաշտի, Ավետարանոցի ջոկատի մարտիկները ճանապարհին՝ Մեծ Քիրսում թողնելով ՀՀԳ Էջմիածնի դասակը (քանի որ նրա զինվորները բավականին հոգնել էին, բայցեւ այնպես ստանձնեցին 3-րդ վաշտի թիկունքը պաշտպանելու գործը), մոտեցան թշնամու ռազմական հենակետին:

Գրոհող հիմնական ուժերի թեւը՝ Փ. Քիրսից դեպի հարավ-արեւմուտք պաշտպանում էր Ավետարանոցի ջոկատը: Հարձակումը սկսեցին նախ 15 հոգի՝ Աշոտ Խաչատրյանի գլխավորությամբ, որոնց, կրակային աջակցությունից հետո, միացան նաեւ հիմնական ուժերը: 2-րդ վաշտը, օգնության հասնելով նրանց, դուրս եկավ հակառակորդի թիկունքը, բազմապատկելով նրա խուճապը: Թշնամին շրջանցող մասնավոր փորձեց դուրս գալ 3-րդ վաշտի մարտիկների թիկունքը, բայց Ավետարանոցի ջոկատի զինվորները հետ շարտեցին նրան: Մինչեւ մութն ընկնելը տեսած մարտերի արդյունքում ջախջախված հակառակորդի ուժերը մազապուրծ նահանջեցին դեպի Լիսագոր, իսկ այնտեղից՝ դեպի Լաչին: 3-րդ վաշտից զոհվեց 3, վիրավորվեց 6 մարտիկ: Մեկ զոհ ունեցավ Ավետարանոցի ջոկատը: Հակառակորդի կորուստներն անհամեմատ շատ էին. ավելի քան 3 տասնյակ սպանված (այդ թվում՝ 9 սպա): Թշնամուց առգրավվեցին 1 «Գրադ» կայանք*, 1 տանկ, 4 ՀՄՄ-1, 1 քարշակ¹, մեծ քանակությամբ ՄՄ-21-ի հրթիռներ, 3 «Իզլա» տիպի հրթիռ, մեծ քանակությամբ նռնականետային արկեր, ձեռքի նռնակներ, ավտոմատի ու գնդացրի փամփուշտներ, 9 ատրճանակ, զգալի քանակությամբ պարենամթերք, ծխախոտ եւ այլն:

Թշնամու մի խումբ փորձեց հետ գրավել Մեծ Քիրսը, բայց այնտեղ թողնված դասակը հետ մղեց հարձակումը:

Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը 2-րդ, 3-րդ վաշտերի ու Ավետարանոցի ջոկատի մարտիկները դիրքեր զբաղեցրին Փ. Քիրսի շրջակայքում: Նոր առաջադրանք ստանալով, 3-րդ վաշտը վերադարձավ Ստեփանակերտ եւ մեկնեց Մյուրիշեն՝ մասնակցելու Ավդալ-Գյուլափլու գյուղախմբի ուղղությամբ ձեռնարկվելիք ռազմագործողությանը, որ նպատակ ուներ Ասկերանի ռազմավարական ուղղությունից շեղել հակառակորդի ուշադրությունը:

* Համագործակցության հաստատված պայմաններում, մասնական մեքենան չէր վնասվել:
¹ Կիմ Գարիբեյան, Վոլոդյա Մեֆիանյան, Անտոնյան Կենսագրություն: Մեֆիանյաններ, 1996, էջ 7-8: (Այստեղ նշված է ընդամենը 1 գրահամեմատ, իսկ ԱՇՆ Խաչատրյանի վկայությամբ՝ 4):

Տումի գյուղի ինքնապաշտպանական ջոկատը եւ «Քիրս» խումբը հարձակման ու կրակային ներգործության ենթարկեցին Մուսուլմանլար գյուղը, կանխելով Քիրսի ճակատում օգնություն հասցնելու հակառակորդի փորձերը:

Քիրսի ենթաուղղությունում առաջադրված խնդիրների լուծումը նշանակալի ավանդ էր Շուշիի ռազմագործողության հաջողության գործում եւ հարստացրեց ԻՊՈՒ մարտավարական փորձը՝ հատկապես բարձր լեռնային շրջաններում:

Քարին-տակը հարավային ուղղության կարեւոր ճակատներից մեկն էր: Այստեղ կենտրոնացված ստորաբաժանումները խնդիր ունեին դուրս գալ Շուշի-Լաչին մայրուղին ոչ միայն ադրբեջանական կայազորի թիկունքին անմիջական սպառնալիք ստեղծելու, այլ նաեւ Լիսազորից (կամ Լաչինից) օգնություն հասցնելը բացառելու նպատակով:

Քարին-տակից հարձակման հիմնական ուղղությունը Կարմիր-քար կոչվող սարաբլուրն էր: Այն գրավելու համար հայ մարտիկները հարձակման անցան անմիջապես բաղնիքի* ավերակների ուղղությամբ, իսկ մի այլ խումբ, շրջանցելով այն, հարվածեց թիկունքից: Թշնամու դիրքերն այս բարձունքում բավական նպաստավոր էին, ինչը հնարավորություն էր ընձեռում նրան՝ խոչընդոտել հայ ազատամարտիկների առաջխաղացմանը: Քարին-տակի ջոկատի մի այլ խումբ շարժվեց Տիզկանց-քերծ բլրի ուղղությամբ: Ալեքսանա-դուզ կոչվող բարձունքում տեղադրված ինքնաշեն թնդանոթով Ա. Աբրահամյանը ճնշում էր հակառակորդի գնդացրային կրակակետերը, որոնք գտնվում էին Շուշիի սարահարթից գյուղ տանող արահետի վրա:

Կարմիր-քարի ենթաուղղությունում մարտը սկսվեց հակառակորդի վրանի ոչնչացմամբ: Սակայն, այն դատարկ էր, քանի որ այնտեղ գտնվողները վաղօրոք հեռացել էին ու դիրքավորվել իրենց պահակակետերում: Փոխիրաձգության ժամանակ հայ մարտիկները կարողացան արագ կողմնորոշվել եւ վերջնական արդյունքում հաղթահարել թշնամու կատաղի դիմադրությունը: 2-րդ վաշտի զրահաջոկատի կրակային աջակցությամբ գրոհող երկու խմբերը միացան Կարմիր-քարի վրա եւ համատեղ ելան Շուշի-Լաչին ճանապարհի՝ Նաբիլարից վերեւ ընկած հատվածը, փակելով այն: Մայիսի 9-ի առավոտյան Տիզկանց-քերծը ազատագրված էր, որտեղից եւս հայ մարտիկները դուրս եկան մայրուղի:

* Յարակրսն բանակի Շուշիի կայազորի նախկին բաղնիք:

ճանապարհը փակ գտնելով, Շուշիից ճողոպրող ադրբեջանցիները շրջանցեցին այն ու շարունակեցին հեռանալ պահեստային ճանապարհով՝ Սահակի-աղբյուր կոչվող տեղամասով, որը կառուցվել էր այն բանից հետո, երբ մի քանի անգամ խճուղու վրա զենք փոխադրող մեքենաներ էին ոչնչացվել:

Քարին-տակից ուղեցույց առնելով, Սզնեքի ջոկատը (15 մարտիկ)՝ Սամվել Ավանեսյանի առաջնորդությամբ, շրջանցումով դուրս եկավ Կարմիր-քարի հետեւը, իսկ այնտեղից իջավ Նաբիլար, ուր եւ միացավ ներքեւի մասով հարձակված Վաչագան Իշխանյանի խմբի հետ: Գիշերելով այստեղ, հայ մարտիկները մայիսի 9-ի առավոտյան շարունակեցին առաջխաղացումը դեպի Շուշի: Ուղեկալին չհասած, էլեկտրահաղորդիչ ենթակայանի վերեւի բլրի վրա հակառակորդի զինվորներ հանդիպեցին, որոնք փորձում էին դիմադրել, սակայն նռնականետից արձակված մի քանի արկն էլ բավական էր նրանց փախուստի մատնելու համար: Նաբիլարում եւ նրա մոտակայքում հակառակորդը 10-15 դիակ էր թողել, գյուղում խփվել էր նաեւ հետեւակ տեղափոխող «ԳԱՉ-66» մակնիշի 1 բեռնատար:

Նշանակալի դեր խաղաց 2-րդ վաշտի զրահատեխնիկան: Դեռեւս ապրիլին հիմնավորվելով Սղմախում, նրա մոտակա բարձունքից վերահսկողության տակ էին պահում Շուշի-Լաչին մայրուղին: Խփում էին հատկապես ռազմական տեխնիկայի կամ ռազմական նշանակության բեռներ փոխադրող բեռնատարների վրա: Մայիսի 8-ի առավոտյան 7 միավոր տեխնիկա(2-րդ վաշտի 6 ՅՄՄ-2 եւ Ավետարանոցի 1 ՅՄՄ-1)՝ շարասյուն կազմած՝ իջան Քարին-տակ: Ջրահամեքենաների կրակի աջակցությամբ հաջողվեց ազատագրել Կարմիր-քարը: Այնուհետեւ զրահամեքենաները դուրս եկան Շուշի-Լաչին ճանապարհը: Սակայն, հրաման ստանալով բացել ճանապարհը, զրահամեքենաները հետ քաշվեցին, վերստին ճանապարհ ելնելով մի քանի ժամ անց:

Ձառիստ բնակավայրի ուղղությամբ գործող Ակնաղբյուրի վաշտը՝ Արշավիր Ղարամյանի հրամանատարությամբ, առաջադրանք էր ստացել հարվածել Շուշիի թիկունքին, Ձառիստ գյուղի կողմից: 69 զինվոր ունեցող վաշտը բաղկացած էր երեք՝ Սարուշենի(հրամանատար՝ Կարմեն Ավետիսյան), Ակնաղբյուրի 1-ին(հրամանատար՝ Մխիթար Բաղդասարյան) եւ 2-րդ(հրամանատար՝ Վլադիմիր Մկրտչյան) դասակներից: Այդ ենթաուղղությունում հարձակմանը ներգրավված էին «աֆղանցիների» դասակը (60

հոգի)՝ Գեւորգ Յարությունյանի, Մերգեյլյան գիտահետազոտական ինստիտուտի դասակը (32 հոգի)՝ Արմեն Յարությունյանի, «Բյուրեղավանի» դասակը (38 հոգի)՝ Վրեժ Ղարսոյանի հրամանատարությամբ: 130 մարտիկներից բաղկացած այդ խմբավորումը գլխավորում էր կապիտան Նվեր Չախոյանը: Յարկ է նշել, որ դա պատկառելի ուժ էր, մանավանդ՝ սպառազինության առումով: Նրանք զինված էին ավտոմատներով, գնդացիներով, այդ թվում՝ 2 խոշոր տրամաչափի, 4 նռնակներով և դրանց համար նախատեսված բավարար զինամթերքով:

Մայիսի 6-ին Սղնախ գյուղում հրավիրված վերջին խորհրդակցությունում գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանից ու Ֆ. Գոդյանից ստանալով բանավոր հրաման Չառիստ գյուղին ազատագրելու մասին, վերոհիշյալ զորախումբը Սղնախ - Փ. Քիրս - Չառիստ երթուղով ճանապարհվեց դեպի նախանշված շրջանը: Դժվարանցանելի անտառները, սարերից սկիզբ առնող ձնախառն ու հորդառատ գետակները, թափանցող սառը քամին, զենքով ու զինամթերքով ծանրաբեռնվածությունը խոչընդոտում էին առաջխաղացմանը: Այդուհանդերձ, հայ մարտիկները առավոտյան ժամը 4-ի կողմերը հասան նշանակված վայր և դիրքավորվեցին Չառիստից 400-500 մ հեռավորության վրա գտնվող ամենահարմար բլրի վրա: Շուշիի անկասելի գրոհը, հայ ազատամարտիկների ու հրետանավորների արդյունավետ «աշխատանքը» խուճապ էին մատնել հակառակորդին: ճողոպրողները, ժամը 4⁵⁰-ի սահմաններում լքելով քաղաքը, շարժվում էին Չառիստի ուղղությամբ: Ա. Տեր-Թադևոսյանի հրամանով, գյուղի մերձակայքում դիրքավորված ազատամարտիկները սկսեցին գնդակոծել ռազմական տեխնիկայի և զինյալներ տեղափոխող ավտոմեքենաների շարասյունը, քանի որ Չառիստում ուժերի նոր կուտակումները բնավ ձեռնտու չէին: Նահանջող թշնամու շարասյունը գնդակոծվում էր նաև ՅՅԴ դասակների կողմից: Կրակի տակ առնվեցին նաև Չառիստ գյուղի պահակակետերը, ինչպես նաև կենդանի ուժի և տեխնիկայի կուտակման վայրերը: Յակառակորդը տանկերից, զրահամեքենաներից ու «Գրադ» կայանքից պատասխան կրակ բացեց ճանապարհի երկայնքով ձգվող բլուրներին հաստատված հայ մարտիկների ուղղությամբ, ջանալով Շուշիի կայագործի մնացորդները փրկել վերջնական ջախջախումից: Մի քանի անգամ գերակշռող հակառակորդի զորաջոկատները փորձեցին շրջանցել բլուրներից մեկը և անտառի ծածկի տակ մոտենալով, շրջապա-

տել հայ մարտիկներին: Մարտը գնալով բորբոքվում էր: Կրիտիկական պահին ԻՊՈՒ հրամանատարից ստացվեց հետ քաշվելու հրաման: Ընդհուպ մոտենալով Չառիստ գյուղին, հայկական ջոկատները խաբուսիկ մանևրներով դուրս գալով շրջապատումից, վերադարձան ելման դիրքեր: Ճանապարհին, երկնքում հայտնված հակառակորդի ռազմական ինքնաթիռը ռումբ նետեց Քարինտակի ուղղությամբ, իսկ այնուհետև գնդացրային կրակ բացեց հայ մարտիկների զորասյան վրա: Օդից գնդակոծվեցին նաև Սղնախի պաշտպանական դիրքերը 1553 միշով բարձունքի վրա, ուր «Շիլկա» հակաօդային կայանքն էր տեղադրված:

Երբ 2-րդ վաշտի զրահաջոկատը դուրս եկավ Շուշի-Լաչին մայրուղին, Ա. Ղարամյանին հրամայվեց լրիվ բացել Չառիստի ուղեհատվածը: Այն վերահսկողության տակ պահելն այլևս իմաստ չուներ, քանի որ հակառակորդը արդեն տեղի էր տվել և նրա շարասյունները հապշտապ լքում էին քաղաքը: Նրանց առաջ խոչընդոտ ստեղծելը կարող էր հակառակ ազդեցությունն ունենալ և փչացնել գործը:

ՅՅԴ 3 դասակներ (յուրաքանչյուրում շուրջ 30-ական մարտիկ)՝ Ժիրայր Սեֆիրյանի հրամանատարությամբ, Վալերի Բալայանի խումբը և Բերդաձորի ջոկատը առաջադրանք էին ստացել շրջանցել Չառիստը, զրավել Լիսագորի ռազմավարական բարձունքը, փակելով Լաչին-Շուշի ճանապարհը: Մարտերն արդեն ընթանում էին բերդաքաղաքի մատույցներում, սակայն շրջանցող խմբերը հասել էին ընդամենը Չառիստի բարձունքներին: Թեև առաջադրված խնդիրն իրականացնել չհաջողվեց, սակայն հայկական սպառազեն ջոկատների երեւալը կատարյալ դարձրեց հակառակորդի խուճապը¹:

Այսպիսով, հարավային (Լաչինի) ուղղությունում ծավալված մարտերի արդյունքում հաջողվեց շեղել հակառակորդի ուշադրությունը գլխավոր՝ Շուշիի ճակատից, հակառակորդի նահանջի ճանապարհը փակելու սպառնալիքով բազմապատկել նրա խուճապը, զրկել ադրբեջանական հրամանատարությանը Չառիստում ուժերի վերախմբավորում կատարելու և հակահարձակման անցնելու հնարավորությունից:

¹ «Ազգային Արցախ», ք. 53, 1999 թ., «Արտուր. արծվի բռնիք էր նա», կազմեց Գ. Ղարիբյան: Երևան, 1999, էջ 130:

Դ. ՋԱՆՀԱՍԱՆ-ՔՅՈՍԱԼԱՐԻ (ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Շուշիի ազատագրման ռազմագործողության ուշագրավ մտահղացումներից մեկը Ջանհասան-Քյոսալար (պայմանականորեն՝ հյուսիս-արեւմտյան) ուղղությունում հակառակորդին մոլորեցնելն էր: Արցախի ինքնապաշտպանության ուժերը հարկադրված էին վճռական հակահարձակման անցնել այդ ուղղությամբ ինչպես Շուշիի ազատագրմանը նպաստելու, ինչու չէ՝ նաեւ այն հնարավոր դարձնելու, այնպես էլ ռազմական հեճակետերի վերածված ու մայրաքաղաքը մշտապես հրետակոծությունների եւ հարձակումների ենթարկող գյուղերը վնասագերծելու առումով:

Յարկ է նշել, որ հեշտ չէր լուծել նման մի խնդիր. բնական բարդ պայմանները, մեծաքանակ սպառազինության ու մեծաթիվ կենդանի ուժի առկայությունը հակառակորդին դիրքային ու ռազմական առավելություն էր տալիս: Նկատի առնելով այս ամենը, ԻՊՈՒ շտաբը հյուսիս-արեւմտյան ուղղությունում կենտրոնացրեց մարտունակ, ինչպես նաեւ շարժունակ ստորաբաժանումներ, քանի որ սրընթաց գրոհից, հակառակորդի ուժերն այստեղ գամելուց հետո, հարկ էր լինելու արագ հետ քաշվել, մանավանդ, եթե մարտական գործողությունների հիմնական՝ հյուսիսային («26»-ի) եւ արեւելյան (Շոշի) ուղղություններում թշնամուց կխլվի ռազմական նախաձեռնությունը: Շուշիին տիրելուց հետո, բնականաբար, հյուսիս-արեւմտյան ուղղությունում արյուն հեղելու անհրաժեշտություն այլեւս չէր զգացվի...

Ըստ Շուշիի ազատագրման մարտական հրամանի, հյուսիս-արեւմտյան հատվածում հարձակումը պետք է կազմակերպվեր երկու ենթաուղղություններով՝ խնդիր ունենալով շեղել հակառակորդի ուշադրությունը, իսկ հարձակման հաջող զարգացման դեպքում ճնշել նաեւ Կարագյավ ու Ջանհասան գյուղերի կրակակետերը:

Այդ խնդրի լուծումը հանձնարարվում էր Բադարա, Այգեստան (Բալուջա) գյուղերի ինքնապաշտպանական ստորաբաժանումներին, «Կումայրի», «Յրանտ», «Վաչո» եւ դիվերսիոն հետախուզական խմբերին՝ Սեյրան Օհանյանի ընդհանուր հրամանատարությամբ:

Կումայրիի ջոկատը(Միքայել Վարդանյանի հրամանատարությամբ) դարանամուտ եղավ Ջանհասանից-Քյոսալար տանող

ճանապարհին: Այնտեղ էին նաեւ «Արամո» ջոկատի 10 մարտիկները եւ 2 սակրավոր, ընդհանուր առմամբ 47 հոգի: Այգեստանի վաշտը՝ հետեւյալ կազմով. 1-ին դասակը Արթուր Գաբրիելյանի, 2-րդ դասակը՝ Էդիկ Խաչատրյանի եւ 3-րդ (Խանածախի) դասակը՝ Մանվել Յովակիմյանի հրամանատարությամբ, Լուսաձորի (Մեհտիշենի) ջոկը՝ Գուրգեն Յարությունյանի, Ստեփանակերտի գինեգործարանում տեղակայված Վլադիմիր Աֆյանի դասակի ջոկերից մեկը՝ Վազգեն Իսախանյանի հրամանատարությամբ, ԻՊՈՒ շտաբի ԴՅԽ-ից 8 հոգի մայիսի 7-ի լույս 8-ի գիշերն անցան Ջանհասանի թիկունքը, խնդիր ունենալով Ջանհասան-Քյոսալար հատվածից դուրս մղել հակառակորդի ուժերը, ինչն առանձնապես անհնարին չէր թվում, մանավանդ Շուշիի նախանշվող ազատագրման համայնապատկերի վրա: Ենթաուղղության հրամանատարն էր Սամվել Յակոբյանը, իսկ նրա տեղակալը Կամո Բարսեղյանն էր:

Մարտական գործողությունների ընթացքը կարելի է բաժանել երկու փուլի.

ա) հայ մարտիկների սրընթաց ու հանկարծահաս գրոհը, ինչին հետեւեց հակառակորդի խուճապահար նահանջը, եւ նպաստավոր բնագծերում հաստատվելը.

բ) հակառակորդի հակահարձակման կասեցումը եւ կազմակերպված նահանջը:

Մարտական գործողությունները սկսվեցին նախատեսվածից 1,5 ժամ ավելի վաղ: Առավոտյան, մոտավորապես ժամը 5³⁰-ին Բալուջայի վաշտի 2-րդ դասակի եւ 1-ին դասակի մեկ ջոկի զինվորները պատահաբար հանդիպեցին հակառակորդին եւ դիմահար կրակով շարքից հանեցին հակառակորդի 5 զինվորի, այդ թվում եւ հրամանատարին: Անվրեպ կրակեցին Վ.Սարգսյանն ու Վ.Խաչատրյանը: Դիպվածի մասին անմիջապես ժամուցվեց Ս. Օհանյանին, որը չառարկեց վաղաժամ հարձակման անցնելու տղաների մտադրությանը: Նախանշված կողմնորոշիչների ուղղությամբ գրոհի ելած հայ մարտիկների հայտնվելն այնքան հանկարծակի էր, որ հակառակորդը խուճապի մատնվեց... ժամը 10-ի կողմերը գրավված էին թշնամական բոլոր կրակակետերը (առգրավվել էր նաեւ 3 թնդանոթ): Կատաղի մարտեր բորբոքվեցին ականանետային կրակադիրքի եւ «Գրադ»-ի հրթիռ արձակող մեկփողանի կայանքի մոտակայքում:

Երբ վերահսկողություն հաստատվեց Ջանհասանի մարտական դիրքերի վրա, գյուղում դեռ բնակիչներ ու զինվորներ կային: Բալուջայի վաշտի 2-րդ դասակը, 1-ին դասակի մի մասը, Լուսաձորի ջոկը եւ ԴՅԽ-ի մարտիկները մտան Ջանհասան ու «սանրելով» ելան Կումայրիի ջոկատի պաշտպանության գոտին՝ օգնության հասնելով անհավասար մարտն ընդունած հայ կամավորականներին... Այս հատվածում, հիրավի, իրադարձություններն այլ ընթացք ստացան, հնարավոր չեղավ կանխել աղետը: Ճանապարհին դարանակալած մարտիկները, ըստ երեւոյթին սեփական նախաձեռնությամբ, գրավեցին 2 թնդանոթի կրակադիրքեր եւ մի պահ առանց վերահսկողության մնացած ճանապարհով Ջանհասանից փախչողներն անցան Քյոսալար: Մարտի մասնակիցները կարծիք են հայտնում, որ հենց այդ վրիպումը եղավ ողբերգության պատճառը: Քյոսալարից տանկով, զրահամեքենաներով կատաղի կրակ բացելով «Կումայրի» ջոկատի դիրքերի վրա, թշնամու մեծաթիվ հետեւակը հարձակման անցավ: Հայ մարտիկները, շրջապատման մեջ անգամ, աննկուն դիմադրություն էին ցույց տալիս: Բանը հասավ նույնիսկ ձեռնամարտի: Չոհեր ու վիրավորներ եղան... Սակայն, համատեղ ուժերով հաջողվեց փախուստի մատնել թշնամուն...

Այսպիսով, մարտական գործողությունների Ա փուլը, կորուստներով հանդերձ, հաջող էր: Մինչեւ կեսօր նվաճված բնագծերը դեռ հայ մարտիկների վերահսկողության տակ էին:

Վերադասավորելով ուժերը եւ համալրումներ ստանալով Շուշիից, հակառակորդը մեծ ուժերով կրկնեց հարձակումը Ջանհասանի ուղղությամբ: Սպասվում էին նոր ու արյունահեղ մարտեր, ինչին հայ մարտիկները նախապատրաստվել էին: Սակայն անհրաժեշտ էր խուսափել նոր զոհերից, մանավանդ, որ Շուշիի ուղղությամբ հարձակումը հաջող էր ընթանում: Ուստի, Ս. Օհանյանը նահանջի հրաման տվեց: Ստեղծված պայմաններում շատ ավելի դժվար էր նահանջը կազմակերպել. բարդ տեղանքը եւ թշնամու թվական ու զինական գերակշռությունը զգացնել էր տալիս: Այն տեղում կազմակերպելու, վիրավորներին մարտադաշտից հանելու համար մնացած Բալուջայի վաշտի 2-րդ դասակի մի խումբ մարտիկներ, ապահովելով զինակիցների նահանջը, միաժամանակ խափանեցին նաեւ հայ մարտիկներին շրջապատելու հակառակորդի փորձերը: Բայց եւ այնպես նրանց չհաջողվեց խուսափել շրջապատվելուց: Շրջանաձեւ պաշտպա-

նություն բռնելով, հայ մարտիկները շուրջ 2 ժամ դիմադրեցին: Չոհվեցին Վ. Սարգսյանը, Ա. Պետրոսյանը, մահացու վիրավորվեց Վ. Բարսեղյանը: Հակառակորդի շղթան հաջողվեց ճեղքել: Դժվարին պահին օգնության ուղարկվեցին Ալբերտ Եղիազարյանի զինվորները: Ելման դիրքեր վերադառնալով, հայ մարտիկները սպասում էին Շուշիի ազատագրման լուրին...

Այսպիսով, մարտական գործողությունների երկրորդ փուլը եւս հաջող էր նահանջը կազմակերպելու, ինչպես նաեւ հակառակորդի մեծաթիվ ուժերը այս ուղղությունում գամած պահելու առումով: Հակառակորդն ուշ հասկացավ, որ Արցախի ԻՊՈՒ-ի հիմնական նպատակակետը Շուշին էր... Սակայն, հուսալիորեն փակված էր նաեւ հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի Շուշի... 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերը եւ այլ ստորաբաժանումներ՝ «26-ի» ամրակետում եւ նրա շրջակայքում դիրքավորվելով, մեկուսացրել էին ինչպես Շուշին Ջանհասան-Քյոսալարից, այնպես էլ վերջիններիս՝ Շուշիից:

Ուշադրություն շեղող հարված էր նախատեսված նաեւ Ջանհասանի դիմացից:

Յրեստանային նախապատրաստությունից հետո հայ մարտիկները գրոհի անցան:

Ջանհասանի ուղղությամբ, «Ալազան»-ի 6 փողանի կայանքի եւ խրամատների վրա ճակատային գրոհ ձեռնարկեց Հրանտ Սարգսյանի հետախուզական դասակը, իսկ նրանցից աջ՝ նախկին Խորհրդային բանակի՝ հիմնականում հայ ենթասպաներից կազմված համահավաք խումբը (ավելի քան 10 մարդ):

Հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս, հատկապես՝ ֆերմայում: Կտրելով ադրբեջանցիների դիմադրությունը, հայ մարտիկները մտան Ջանհասան, ինչը եւս նպաստեց հակառակորդի խուճապի մեծացմանը, հետեւաբար, նաեւ մեծաթիվ ուժեր ձգելուն...

Կարագյալի ուղղությամբ ձեռնարկված մարտական գործողությունները¹ Շուշիից ադրբեջանցիների ուշադրությունը շեղելու, Շուշիի ադրբեջանական կայազորին օգնություն հասցնելուն խանգարելու, ինչպես նաեւ Լաչինի շրջանից այս եւ հարակից գյուղերը մեկուսացնելու նպատակն էին հետապնդում:

¹ Կարագյալի վնասվածման մասին այս ժողովրդական հարցում են մեր ղեկավարությանը Ա. Ռ. Բարսեղյանի գրած «Արցախյան գոյատույնը. Շուշիի ազատագրումը» ռեֆերատից: Մեխիանյակեր, 2000, էջ 12-14

Մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը Բաղարայից Սուրեն Օհանյանի, Խանգքից Վազգեն Գաբրիելյանի, Դահրավից Էդիկ Խաչատրյանի եւ Դաշբուլաղից Վովա Ղազարյանի հրամանատարությամբ գործող տեղական ինքնապաշտպանական ջոկատներն աննկատ հասնում են Էլման դիրքեր: Առավոտյան ժամը 6-ին, Կարեն Արզումանյանի հրամանատարությամբ հարձակումը սկսվում է: Արագ ու անակնկալ գործողությունների արդյունքում գրավվում են ռազմավարական նշանակության մի շարք հենակետեր: Քիչ անց Լաչի-նի շրջանի գյուղերից օգնություն է հասցվում Կարազյավին: Հակառակորդի նոր ժամանած ուժերը փաստորեն հայտնվում են հայ ազատամարտիկների թիկունքում: Գյուղամերձ բարձունքներում մարտերը շարունակվում են մինչև երեկո: Հակառակորդը տալիս է մեկ տասնյակից ավելի զոհեր: Թեև հայ մարտիկները մարտընչում էին թշնամական օղակի մեջ եւ դրությունը գրեթե օրհասական էր, բայց կարողացան հնտորեն խուսափել զոհեր ու վիրավորներ տալուց: Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը, ապահովելով մշտական կապը հյուսիս-արեւմտյան ուղղության հրամանատարի հետ, Կ. Արզումանյանն անձամբ մեկ առ մեկ հանդիպեց ջոկատների հրամանատարների հետ եւ ավետեց Շուշիի ազատագրման ռազմագործողության հաջող ընթացքի մասին: Իսկ հակառակորդը խուճապի մեջ էր, ինչը հատկապես դրսևորվեց մայիսի 9-ի առավոտյան, երբ այլևս ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալ հարձակման անցած հայ մարտիկներին եւ հարկադրված լքեց Կարազյավը...

Մայիսի 8-ի գիշերվա ժամը 2-ի կողմերը 8-րդ վաշտի հարձակողական խումբը Կամո Գրիգորյանի եւ Վլադիմիր Ավագյանի հրամանատարությամբ շարժվեց Ղայբալիշենի ուղղությամբ՝ այնտեղից գործող գնդացրային կրակակետերը ճնշելու առաջադրանքով: Իսկ Հրազդանի (հրամանատար՝ Սասուն Միքայելյան), Սեւանի (հրամանատար՝ Սուրիկ Սարգսյան), Ստեփանավանի եւ այլ ջոկատներից կազմված համահավաք գումարտակը՝ Յուրի Յովհաննիսյանի ընդհանուր ղեկավարությամբ, «26»-ի ամրակետից շարժվեց Քյոսալարի ուղղությամբ: Մարտերը ծավալվեցին այդ գյուղի մերձակայքում, հակառակորդի զերանապատ ամրակառույց կրակակետի համար: Ջրահամեքենաները անհաջող գործեցին: Սլավա Դանիելյանը նստեց նշանառուի խցիկում եւ դիպուկ կրակահերթով փորձեց լռեցնել հակառակորդի ԴՕՏ-ը եւ թնդանոթը: 8-րդ վաշտի հարձակողական խումբը եւս տեղափոխվեց Քյոսալարի ուղղություն: Կատաղի մարտերից հետո համատեղ ուժերով հաջողվեց գրավել հակառակորդի ամրակառույց

կրակակետը: Հրետանային նախապատրաստությունից հետո Քյոսալարից հարձակման անցավ հակառակորդի հետեւակը: Մերձամարտում նռնակներ գործի դրվեցին: Մթնշաղին մարտերը հանդարտվեցին:

Մայիսի 9-ի առավոտյան հայ ազատամարտիկները մտան Քյոսալար: Դիմադրության տարանջատ կետերը ճնշվեցին արագ: Հակառակորդը, հրկիզելով իր իսկ S-72 տանկը եւ լքելով հակակարկտային ԿՍ-19 թնդանոթը, ճողոպրեց:

Այսպիսով, հյուսիս-արեւմտյան ուղղությունում գործող ստորաբաժանումները կատարեցին իրենց առաջ դրված խնդիրը. հնուտ կազմակերպված գործողություններով նրանք, նախ, ստիպեցին հակառակորդին՝ ուժեր հանել գլխավոր ուղղությունից՝ Շուշիից եւ ձգել դեպի Ջանհասան, ապա եւ համառ պաշտպանությամբ ու կազմակերպված նահանջով այդ ուժերը գամված պահեցին մինչև Շուշիի ճակատում ռազմական նախաձեռնության խլումն ու հայոց հինավուրց քաղաքի ազատագրումը¹: Մյուս կողմից Ստեփանակերտը ձերբազատվեց թշնամական մոտակա ու վտանգավոր կրակակետերից...

Հյուսիս-արեւմտյան ուղղությունում հաջողության գաղտնիքը հնուտ եւ գրագետ ղեկավարման, գործողության մանրազնիմ մշակման ու նախապատրաստման, հետախուզության եւ տեղանքի զննման, ինչպես նաեւ զինանձնակազմի համընդհանուր հերոսության ու անձնվիրության մեջ պետք է փնտրել...

Մայիսի 9-ի առավոտյան շարունակվեց ԼԳՀ ինքնապաշտպանության ուժերի առաջխաղացումը Շուշիի ուղղությամբ: Հակառակորդը տարերային դիմադրություն էր ցույց տալիս: Նրան չօգնեց Ադրբեջանի վարձած ռազմական ինքնաթիռն անգամ, որը ռումբեր նետեց Շուշիի ու Ստեփանակերտի վրա: Ազատագրված բերդաքաղաքի փողոցներում դարանակալ կրակոցներից հայ մարտիկներ զոհվեցին: Երեկոյան կողմ հիմնականում ավարտվեց Շուշիի «մաքրման» աշխատանքը²:

¹ «Մարտիկ», ք. 17, 1997 թ., ք. 18, 2000 թ.:

² Այս գլուխը գրելու համար օգտագործվել են նաեւ ռազմագործողության մասնակիցների, հարձակման ուղղությունների հրամանատարների եւ ակամսեստների ասանյակ վկայությունները:

ՎՈՒԽՏ ՇԻՆՔԵՐՈՐԴ

**ԽՈՒՒԼ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՃԵՂՔՈՒՄԸ:
ՇՈՒՇԻԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**1. ԱՍԿԵՐԱՆԻ ԵՎ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես եւ սպասվում էր, Շուշիի ռազմահանգրվանի կորըստից հետո հակառակորդը մեծ ուժերով ու միջոցներով լայնածավալ հարձակումներ ձեռնարկեց ԼՂՀ սահմանների մի քանի հատվածներում: Միաժամանակ ադրբեջանական լրատվամիջոցները, ապատեղեկատվություն էին տարածում իրենց բանակի նվաճած հստողությունների մասին: Սակայն, իրականում, Շուշիում կրած խայտառակ պարտությունից հետո հակառակորդը ձգտում էր փոխվրեժի հասնել, ամեն գնով հաջողություն ձեռք բերել ռազմաճակատի ցանկացած ուղղությունում: Այդ իսկ նպատակով մայիսի 10-ին հարձակում ձեռնարկվեց Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ ռազմավարական գծով: Մասնավորապես, Աղդամի հենակետից հակառակորդը հարձակվեց Դահրազ, Նախիջեւանիկ, Փրջամալ, Արանգամին, Սառնաղբյուր գյուղերի ուղղությամբ եւ ժամանակավորապես զավթեց նշված գյուղերը:

Իրավիճակը հատկապես ծանր էր Սառնաղբյուր գյուղում:

Հարձակման սկզբում հակառակորդի ունեցած տեխնիկական ու թվական գերակշռության շնորհիվ ձեռք բերված որոշակի հաջողությունը, սակայն, երկար չտևեց: Սառնաղբյուրի պաշտպաններին օգնության հասած Ասկերանի շրջանի ինքնապաշտպանության ուժերը՝ Վիտալի Բալասանյանի հրամանատարությամբ, երեկոյան ձեռնարկված սրընթաց հակագրոհով ազատագրեցին վերոհիշյալ գյուղերը եւ թշնամուն դուրս շարտեցին ԼՂՀ տարածքից, խափանելով ճեղքմամբ Շուշի հասնելու նրա խելահեղ ծրագրերի իրականացումը:

Ադրբեջանցիները մեկ անգամ եւս հաստատեցին իրենց վայրագությունը՝ նահանջի ճանապարհին հրի մատնելով Սառնաղբյուրի տների մեծ մասը:

Հասկանալի էր, որ ադրբեջանական լրատվամիջոցները ցանկանում էին ամեն կերպ արդարացնել իր անկախությունը համառոտեմ պաշտպանող արցախահայության նկատմամբ կիրառվող ագրեսիայի քաղաքականությունը: Սակայն փաստերի աղավաղումները՝ Շուշին հայերից վերագրավելու, ինչպես նաեւ Սառնաղբյուրի ենթաշրջանին տիրելու ստահող լուրերը ժիծաղելի իրավիճակի մեջ էին դնում ոչ միայն դրանց հեղինակներին ու պատվիրատուներին, այլեւ Ադրբեջանի՝ գլուխը կորցրած ղեկավարությանը¹:

Մայիսի 10-ին իրավիճակը կտրուկ սրվեց Մարտակերտի շրջանում: Ջրահատեխնիկայի մեծ կուտակումներ նկատվեցին Միր-Բաշիրում, Շոթլանդուում, Փափրավենդում: Երեկոյան սկսվեց Մարաղա, Կարմիրավան, Քաջավան գյուղերի, ապա եւ Մարտակերտ քաղաքի հրետակոծությունը: Վեց միավոր տեխնիկայի աջակցությամբ հարձակման ենթարկվեց Մարաղան, 1 տանկի ու 3 ՅՄՄ-ի ներգործությամբ՝ Չայլուն(Գետքը): Հակառակորդը վերսկսեց հարձակումը եւ զավթեց Մարաղան: Մարտեր ընթացան նաեւ Չայլվում: Ստացված պահեստազորի ու մարտական տեխնիկայի օգնությամբ հայ մարտիկները, 5 ժամյա մարտերից հետո, մայիսի 12-ին ազատագրեցին Մարաղան: Հակառակորդը կորցրեց 18 զինվոր եւ 3 միավոր տեխնիկա²:

Վերոհիշյալ ճակատներում հայ ազատամարտիկների տուկունությունն ու աննկունությունը նպաստեցին Շուշիի հաղթանակը պաշտպանելու, ապա եւ ամրապնդելու գործին:

2. ԱՉԻՆԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Շուշիի ազատագրումից 3 օր անց, ճնշվեցին Ջառիստ գյուղի թշնամական կրակակետերը: Հաջորդ օրը հակառակորդի մեծաքանակ մարտական տեխնիկան ու հետեւակը հարձակում ձեռնարկեցին Ջառիստ ներխուժելու եւ դեպի Շուշի շարժվելու նպատակով: Նախորդ գիշեր հայ մարտիկների տեղադրած ակամի վրա պայթած տանկը փակեց ճանապարհը: Փոխիրաձգության ընթացքում կորցնելով 40 զինվոր, հակառակորդը հետ շարտվեց: Միաժամանակ ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, ճնշելով միայն 2 գյուղերում դրսևորված հակառակորդի դիմադրությունը, վերահսկո-

¹ «Երկիր», p. 87, 1992 p.:
² ՊԲԿԱ, ՕՀ ԱՏ, № 142, էջ 46:

դուքսը հաստատեցին Շուշիի շրջանի շուրջ 17 գյուղերի նկատմամբ: Այնուհետեւ հարվածային խմբերը դուրս եկան Լիսազորի աջ ու ձախ կողմերի բարձունքները, այդ թվում նաեւ՝ «հեռուստաաշտարակները»: Մայիսի 17-ին ազատագրվեց Լիսազորը: Առաջինը Լիսազոր մտան Յուրի Յովհաննիսյանի ու Արթուր Ալեքսանյանի գլխավորած ստորաբաժանումները: Լիսազոր-Մեծ-շեն-Յին-շեն գծով հարձակվեցին Ակնաղբյուրի, Ավետարանոցի, ՅՅԴ վաշտերը: Ակնաղբյուրի վաշտի մի մասը շարժվեց խճուղով, իսկ մյուս մասը՝ Կարմեն Ավետիսյանի հրամանատարությամբ, Մուսուլմանլար (Զյոհնա-թյանո) ուղղությամբ: Մայիսի 17-ին, առանց մեծ դժվարությունների՝ ազատագրվեցին նաեւ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը: Ա. Ղարամյանի վաշտը Մեծ-շենից անտառներով շարժվեց դեպի Լաչին, ուր, կամրջի մոտ, մի տանկի շուրջ խմբված բավական մեծ բազմության վրա բացված կրակը ստիպեց հակառակորդին ճողոպրել: Ֆ. Գոդոյանի հրամանով Ակնաղբյուրի վաշտը եւ Բերդաձորի ջոկատը մտան Աղայանու գյուղը, փախուստի մատնելով այն պաշտպանող ադրբեջանցի զինյալներին: Արմեն Յայրապետյանը խփեց 1 ՅԻՄՍ: Ընդհանուր ջանքերով գերվեց 20 ադրբեջանցի: Լաչինում դիմադրությունը թուլացնելու նպատակով չփակվեց թշնամու նահանգի ճանապարհը եւ բացված միջանցքով ադրբեջանցիները ճողոպրեցին, գրեթե անպաշտպան թողնելով շրջկենտրոնը: ԻՊ ուժերը Լաչինի մոտ մաքրեցին եւս 3 ռազմական հենակետ: Մայիսի 18-ի առավոտյան, հրետանային նախապատրաստությունից հետո, ԻՊՈՒ կազմավորումները հարձակման անցան Լաչինի ուղղությամբ եւ ազատագրեցին այն: Հակառակորդն այլեւս ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալ: Նրա համընդհանուր բարոյալքմանը նպաստել է նաեւ «Դնեպր» հրետանային ստորաբաժանման կողմից դեռեւս Շուշիի ռազմագործողության նախօրեին ձեռնարկված Լաչին քաղաքի զանգվածային հրետակոծությունը՝ ի պատասխան Գորիսի շրջանի չդադարող հրթիռահրետակոծությունների: «Դնեպրիկ Բաղդասարյանի հրամանատարությամբ գործող հրետանավորները, ճնշելով քանակական ու դիրքային առավելություն ունեցող հակառակորդի հրետանու կրակակետերը, ոչ միայն խուճապի մատնեցին Լաչինի բնակչությանը եւ կայագրորին, այլեւ օբյեկտիվորեն նպաստեցին Շուշիի ազատագրմանը¹»: Այստեղից ԻՊ ուժերը բացազատվեցին

1. Արցախյան ազատամարտ. Շուշիի ազատագրումը եւ Լաչինի միջանցքի բացումը. 1992թ. մայիսի 8-18, հարձեգի եւ ուրվագծային ակնակրի հեղինակ Ռ.ա.Ֆիկ Թաղետյան, Ե., 1999թ.: Դնեպրիկ Բաղդասարյան, նւյ. գիրք, էջ 113-120

աջ ու ձախ՝ դեպի Քելբաջարի ու Ղուրաթլուի շրջանները: Մայիսի 18-ի կեսօրին, Շուշի, Ակնաղբյուրի, Ավետարանոցի ու ՅՅԴ վաշտերը դուրս եկան Աղայանու գյուղից եւ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի երկայնքով, հանդիպած գյուղերի միջով շարժվեցին մինչեւ նորակառույցները, որտեղից էլ անցան Կոռնիձոր: Այնտեղ միասնաբար ձեռնարկվեց Ջիջիմլի գյուղի վտանգավոր կրակակետերի վնասագերծումը: Մայիսի 19-ի առավոտյան Ֆաթալիփեյայի վրայով դեպի հարավ առաջացող հայկական առաջապահ կազմավորումները մտան Մալխալաֆ եւ Մազութլու գյուղերը: Լաչինի ազատագրմամբ, մաքառող Արցախն անմիջական հողային կապ հաստատեց Հայաստանի հետ, զենքի ուժով լուծելով խուլ շրջափակումը վերացնելու հրատապ հարցը...

Դրանից հետո, կապված միջնորդների խաղաղարարական ջանքերի, Բաքվում ներքաղաքական զգվտոցների, ինչպես նաեւ ադրբեջանական բանակի հարվածային ուժերի ջախջախման ու բարոյագրկման հետ, հակամարտության գոտում մարտական գործողությունները մի առ ժամանակ դադար առան: Առիթից օգտվելով, հակառակորդը նախապատրաստվում էր փոխվրեժի...

3. ՇՈՒՇԻԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի հսկայական աշխատանքի ու մանրակրկիտ նախապատրաստության, հմուտ ղեկավարության, բոլոր աստիճանների հրամանատարների հնարամտության ու փոխհամագործակցության, ինչպես նաեւ հայ ազատամարտիկների վճռական գործողությունների շնորհիվ հաջողվեց երկու օրում կոտրել հակառակորդի դիմադրությունը եւ ազատագրել ռազմավարական տեսակետից կարեւոր Շուշի քաղաք-ամրոցը: Այդ ռազմագործողության ընթացքում աչքի զարնվեցին ԻՊՈՒ-ի 1-ին, 4-րդ, 6-րդ վաշտերը, Այգեստանի վաշտը, հետախուզական ու այլ ստորաբաժանումներ¹:

Շուշիի ազատագրման փայլուն ռազմագործողությամբ վերացվեցին Ստեփանակերտի շրջակա թշնամական կրակակետերը եւ ռազմական հենակետերը: Հակառակորդին պատճառվեցին կենդանի ուժի ու տեխնիկայի նշանակալի կորուստներ: Թշնամուց առգրավվեց կամ խփվեց մոտ 10 միավոր զրահատեխնիկա, տասնյակ միավոր այլ փոխադրամիջոցներ, հարյուրավոր հրթիռ-

¹ «Մարտիկ», № 7, 1993թ.

ներ ու արկեր, մի քանի միավոր հրետանի եւ այլ զենք ու զինամթերք: Գերվեց 13 ադրբեջանցի¹: Հայկական կողմը եւս կորուստներ կրեց, ավելի քան 70 սպանված²: Ռ. Թադետոյանը բերում է այլ թվեր. «60 սպանված եւ 250 վիրավոր, իսկ թշնամին՝ 200-300 սպանված ու 600-700 վիրավոր³»: Սակայն առավել հավանական են հետեւյալ տվյալները. 57 սպանված եւ շուրջ 120 վիրավոր:

Դրանից հետո փոխվեց պատերազմի բնույթը: Եթե մինչ այդ մղվում էր հայրենական պատերազմ՝ ԼՂ Հանրապետության ներսում, եւ ուղղված էր ներքին թշնամուց ձերբագատվելուն, ապա Շուշիից հետո պատերազմն ընդունեց երկու պետությունների միջեւ սահմանային պատերազմի բնույթ: Շուշիի ազատագրումից հետո ամբողջական դարձավ ԼՂ Հանրապետության անկախությունը:

ՓՈՒԽ ՎՅՅՆՐՈՂ

ՇՈՒՇԻ ԱՀԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Շուշիի եւ Ջանհասան-Քյոսալարի ենթաշրջանի գյուղերի ազատագրման ռազմագործողության մշակումն ու իրագործումը հայ ժողովրդին յուրահատուկ ռազմական մտքի փայլուն հաղթանակն էր, որն առաջին լուրջ մարտական մկրտությունը դարձավ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի համար: Համեմատաբար փոքր կորուստների գնով հայկական ուժերի նվաճած փայլուն հաղթանակը ցույց տվեց ԻՊՈՒ հրամանատարության կողմից ռազմագործողություններ մշակելու, նախապատրաստելու եւ իրականացնելու գործում ադրբեջանական հրամանատարության նկատմամբ ունեցած անվիճելի առավելությունը, ինչպես նաեւ հայ ազատամարտիկի բարոյահոգեբանական անվիճարկելի գերազանցությունը հակառակորդի ասկյարի նկատմամբ:

Այն իր արժանի տեղը գտավ հայ ազգային ազատագրական շարժման պատմության տարեգրությունում: Հայկական հինավուրց քաղաքի ազատագրումը ռազմաքաղաքական ու բարոյահոգեբանական մեծ նշանակություն ունեցավ ազգային ազատագրական շարժման նոր փուլում: Պատմության այդ սրընթաց ակնթարթը, Լաչինի միջանցքի բացման հաջող ռազմագործողությունների շարքը հանգեցրին Լեռնային Ղարաբաղի շրջափակման օղակի ճեղքմանը, ինչու չէ նաեւ՝ կյանքի ճանապարհի բացմանը, հետեւաբար եւ արհեստականորեն մասնատված ժողովրդի երկու կեսի գործնական միավորմանը:

Շուշիի ռազմագործողությունն ազդարարեց Ադրբեջանի՝ արցախյան հողատարածքի նկատմամբ ռեալ իրավունքների ու հավակնությունների ավարտը: Այդ մասին, թեւ տհաճությամբ, խոսում եւ խոստովանում են անգամ ադրբեջանցիները¹:

Շուշիի ազատագրումը նպաստեց մեր ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը, վերջնականապես հողմացրիվ արեց թվաքանակով ու միջոցներով գերակշռություն ունեցող հակառա-

¹ *Аппаратный журнал радиостанции, начат 24 апреля 1992г. - окончено 12 мая 1992 г., передача от 21⁴⁰ ч. 10.05.1992г.*

² Չոֆի Բախյան, նվաճ գիրք, էջ 152:

³ *Արցախյան ազատամարտ. Շուշիի ազատագրումը և Լաչինի միջանցքի բացումը. 1992 թ. մայիսի 8-18, ֆախեօի և ուրվագծային ակնարկի հեղինակ Ռ. Թադետոյան, Ե., 1999թ.:*

¹ *Султанов Зияддин, Агдарадан калан вар. Баку, 1993, сак. 14.*

կորդի դեմ սեփական ուժերով հաղթանակ տանելու անհնարինության մասին առասպելը: Մյուս կողմից, խորտակիչ բարոյահոգեբանական հարված հասցվեց հակառակորդին, որն այդպես էլ չկարողացավ հետագա մարտական գործողությունների ընթացքում, ունեցած մարտավարական ու նույնիսկ ռազմավարական բնույթի ժամանակավոր հաջողություններով հանդերձ, հաղթահարել պարտվածի բարդույթը:

Այս հաղթանակն ավելոծեց հողագնդի ծագերով մեկ ցրված ամբողջ հայությանը՝ առիթ տալով խորհել ազգային շահերի միասնության ու ընդհանրության մասին, վերադարձրեց հավատը կամքի ազատ արտահայտման ու ինքնորոշման իր անկապտելի իրավունքները պաշտպանելու հնարավորության նկատմամբ: Շուշիի ազատագրումով ժողովուրդը վերստացավ ոչ միայն պատմական նշանակության մի քաղաք, այլև համայն հայությանը ոգեշնչող մի գաղափար, առանց որի, թերևս, չիրականանար Շուշիի ազատագրման իղձը¹:

Շուշիի հաղթանակի հաղորդած համընդհանուր լիցքը, այդ կարեւոր հաղթանակը կորցնելու տագնապը օգնեցին արցախահայությանը՝ դիմանալ, տոկալ հակառակորդի՝ 1992թ. հունիսի 12-ի լայնածավալ ագրեսիային, Շահումյանի ու Մարտակերտի անկմանը, մայրաքաղաքի ու մյուս խաղաղ բնակավայրերի անմարդկային ռմբահարումներին ու հրթիռահրետակոծություններին հաջորդած անլուր տառապանքներին ու զրկանքներին:

Շուշիի ռազմագործողությունում ձեռք բերված հաղթանակը համաշխարհային հասարակայնության համար բացահայտեց առաջ քաշված հիմնահարցի նպատակների ու խնդիրների ողջ լրջությունը:

Շուշիի ռազմագործողությունն իրենով նշանավորեց առանձին գործող ինքնապաշտպանական ջոկատներից ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի՝ նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցման եւ արագ զարգացման փուլի սկիզբը²:

Շուշին սկսեց վերստանալ իր հայեցի շունչն ու դեմքը: Ներկա ու գալիք սերունդները դատապարտված են եւ պարտավորված՝ այն այլևս չկորցնել, պահել անառիկ: Բոլոր առումներով էլ՝ թե պատմական, թե ռազմաքաղաքական, թե տնտեսական եւ թե մշակութային-հոգեւոր, առանց հայոց Շուշիի ապագա չկա³:

ՎԵՐՋԱԲԱՆ

Տարեցտարի Շուշիի ազատագրումն ավելի ու ավելի է իմաստավորվում, նոր կողմերով ու նշանակությամբ պատկերանում տարիների հեռավորությունից:

Շուշիի ազատագրման օրը դարձել է եռակի տոն՝ ԼՂՀ պաշտպանության բանակի եւ գերմանական ֆաշիզմի նկատմամբ տոնված հաղթանակի հետ միասին, որ նշվում է ամեն տարի մեծ շուքով, զորահանդեսով, պարգևատրումներով ու այլ տոնական միջոցառումներով:

Պատահական չէ, որ Երկրապահ կամավորականներն իրենց նոյեմբերյան համագումարում մայիսի 8-ը հռչակել են որպես Երկրապահի օր, քանի որ 1992թ. մայիսի 8-ի երեկոյան Շուշիի ազատագրումն արդեն իրական էր, որում ոչ քիչ ջանք ու ներդրում ունեցան կամավորական-ազատամարտիկները¹:

Ժողովուրդն ամեն տարի մեծարում է իր քաջորդիներին, նրանց սխրանքը, գլուխ խոնարհում բոլոր նահատակների մշտավատ հիշատակի առջև եւ ծաղիկներ դնում Շուշիի տանկ-հուշարձանի պատվանդանին, Շուշիի ազատարարներին նվիրված խաչքարերին:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը 1993թ. մայիսի 7-ի որոշմամբ ընդունել է «Շուշիի ազատագրման համար» մեդալ հիմնելու մասին ԼՂՀ ԳԽ նախագահության որոշման նախագիծը²: «Շուշիի ազատագրման համար» մեդալի էսքիզի հեղինակը Ռաֆայել Ազիզյանն է³: ԼՂՀ նախագահի հրամանագրով, 2000թ. սեպտեմբերի 3-ի դրությամբ, այդ մեդալին արժանացել են 120 ազատամարտիկներ: Տասնյակ ազատամարտիկներ այդ մեդալով պարգևատրվել են 1994թ. եւ հետագա տարիներին մայիսի 9-ի առթիվ տեղի ունեցած հանդիսությունների ժամանակ:

Դեռևս պատերազմի սկզբնական շրջանի ճակատամարտերում դրսևորված հայ ռազմիկների տոկունությունն ու արիություն-

¹ «Հայաստանի Հանրապետություն», ք. 90, 1998 թ.:

² ԼՂՀ ԱԾ ընթացիկ ախիվ, ԼՂՀ ԳԽ նախագահության 1993թ. մայիսի 7-ի նիսիսի հ. 97 արձանագրություն:

³ Նույն տեղում, Արձանագրություն հ. 156, 19 հուլիսի 1994 (Էսիզի հեղինակին դարգևատրելու մասին):

¹ «Շուշի», ք. 2, 1996 թ.:

² «Մարտիկ», ք. 18, 1999 թ.:

³ «Ազգայնագրություն», ք. 53, 1999 թ.:

նը, օրեցօր աճող հրամանատարական կադրերի հմտությունը, բարդ պայմաններում զինվորական ստորաբաժանումները կառավարելու նրանց արվեստը, զարգացման որակական նոր փուլ թեվակոխեցին: Ճիշտ եւ խորապես գնահատելով ստեղծված օպերատիվ ու մարտավարական իրադրությունը, ԼՂՀ ՊԲ զորամասերը հակառակորդի հարվածներին հակադրեցին հզոր պատնեշումներ եւ, հմտորեն խուսավարելով՝ պատասխան հարվածներ էին հասցնում, ի չիք դարձնելով թշանու դիրքային առավելություններն ու ստիպելով նրան՝ նահանջել զավթած տարածքներից: Այնուհետեւ, հաջողվեց ծակատային գիծը տեղափոխել ԼՂՀ սահմաններից դուրս, ստեղծելով Հանրապետության անվտանգությունն ապահովող անմատչելի բուֆերային գոտի:

Դեպի հակառակորդի դասավորության խորքը հայկական զորքերի առաջխաղացման սպառնալիքը Ադրբեջանի ղեկավարությանը ստիպեց նստել բանակցությունների սեղանի շուրջ եւ 1994թ. մայիսին պայմանավորվել մոսկովյան հայտնի զինադադարի շուրջ¹:

ԼՂ Հանրապետության հետպատերազմյան խաղաղ կյանքի զարգացումն աչքի է ընկնում արտակարգ կարգավորվածությամբ ու առաջընթացով: Աներեւակայելի կարճ ժամկետներում ավերակներից վեր են հառնում քաղաքներն ու գյուղերը: Ջարգանում է նաեւ խաղաղության գլխավոր երաշխավորը՝ բանակը: Բանակային առօրյան ԼՂՀ սահմանների պահպանության մշտական մարտական հերթապահություն կրելն է, միաժամանակ, հրամանատարաշտաբային, մարտավարական զորավարություններում ու վարպետության կատարելագործումը:

Եվրոպայի կենտրոնում ու Չեչնիայում տեղի ունեցող իրադարձությունների ֆոնի վրա նորովի է վերաիմաստավորվում ազգային ազատագրական պայքարում նվաճված հաղթանակը, մանավանդ Շուշիի ազատագրումը: Սեփական ուժերով ռազմական ագրեսիային դիմակայելու եւ թշնամուն հաղթելու հանգամանքը հայ ժողովրդին իրավունք է վերապահում արդարացի ազգային ազատագրական պատերազմում նվաճած հաջողություններն ամրապնդել եւ իր պետության շահերը պաշտպանել մինչեւ վերջնական հաղթանակ:

¹ «Մարտիկ», p. 18, 1999թ.:

8
 Կրկնաբար 7000-ը
 ժողովուրդ (111)

10) Այս բանջարի կոմբինատում
 շատ քիչ քանակությամբ
 արտադրվում է սերունդ

16) Բարձր քանակությամբ
 արտադրվում է սերունդ
 արտադրվում է սերունդ
 արտադրվում է սերունդ

7) Բարձր քանակությամբ
 արտադրվում է սերունդ

8) Բարձր քանակությամբ
 արտադրվում է սերունդ

17) Բարձր քանակությամբ
 արտադրվում է սերունդ

2. Այս բանջարի կոմբինատում
 արտադրվում է սերունդ

3. Այս բանջարի կոմբինատում
 արտադրվում է սերունդ

4. Այս բանջարի կոմբինատում
 արտադրվում է սերունդ

5. Այս բանջարի կոմբինատում
 արտադրվում է սերունդ

«Շուշիի առումը» մարտական հրամանի առաջին եւ վերջին էջերը



ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ
ԼՂՀ ԳԽ եւ Պաշտպանության
խորհրդի առաջին նախագահ



ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ առաջին նախագահ



ՈՌԲԵՐՏ
ՔՈՉԱՐՅԱՆ
ԼՂՀ առաջին
նախագահ



ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ դաշտանության
նախարար



ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
ԼՂՀ ինֆանտապաշտպանության
կոմիսեի նախագահ



ԳՈՒՐԳԵՆ ԳԱԼԻԲԱԼԹՅԱՆ



ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ




ՖԵԼԻԿՍ ԳԶՈՂՅԱՆ




ԼԵՈՆԻԴ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ




ԱՐԹՈՒՐ ՓԱՓԱԶՅԱՆ




ՌԱԶՄԻԿ ՄԵԼԶՈՒՄՅԱՆ



ՎԱՆԵՐԻ ՉԻԹՉՅԱՆ




ԱՐԿԱԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՍԱՄՎԵԼ ԲԱՐԱՅԱՆ




ՍԵՅՐԱՆ ՕՇԱՆՅԱՆ




ԱՇՈՏ ԴՈՒԼՅԱՆ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ




ԱՐԳԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՄԼԵՏ ԱՏԵՓԱՆՅԱՆ




ՈՐՈՒՍԱՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ



ԱՐՇԱՎԻՐ ՂԱՐԱՍՅԱՆ




ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ




ԺՈՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ




ՍԵՐԳԵՅ ԹՈՎԱՍԱՅԱՆ




ՎԻԼԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ



ՎԱՆԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՎԱՆԵՐԻ ՀԱՅՐԻՅԱՆ



ՎԱՆԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ




ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆ



ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ



ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ



ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ




ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆ




ՄԻՄՈՆ ԱՉԻԿԳՅՈՉՅԱՆ



Հասված «26»-ի անդակեփց



Ազատագրված Շուշին




Շուշիի կենտրոնական մասը



Հայ ազատամարտիկները «սանրում» են քաղաքատերը



ՀՅԴ վաճառի մի խումբ մարտիկներ Մղնայի անտառներում Շուշիի ռազմագործողության նախօրյակին



Շուշիի բանօջ



Ազատամարտիկների առաջխաղացումը Ջանհասանի ուղղությամբ



Յուրի Հովհաննիսյանը ղեկավարում է մարտը



Դրվագ ադրբեյջանի 29-ին Ստեփանակերտի մատույցներում մղված մարտից



Ջանհասան-Քյոսալարի ուղղությամբ



Դրվագ հյուսիս-արեւմտյան ուղղությամբ մղված մարտից



Ջրահատեխնիկան օգնություն է հասցնում




Ատրիի 29-ի մարտն



Նեղոն Ստեփանյանի հուշարձանի վերաբացումը Շուշիում



Շուշիի ռազմագործողության մի խումբ մասնակիցներ: Չախից-աջ՝ Ասլան Գ-րիգորյան, Ռոլեն Աղաջանյան, Ժորա Գասպարյան, Սամվել Գեորգյան, Պարզե արհեստակրոտու Սարսիրոսյան, Վաչագան Իշխանյան, Արեւիկա Ղարամանյան, Վիսալի Բալասանյան, Մարտիկ Հայրապետյան, Մխիթար Ավարյան, Վլադիմիր Ավագյան



Վահան Ղարիբյանը Շուշիի ազատագրման ժամանակ



Գեորգի Պետրոսյանը եւ Սամվել Աղայանը Ս. Ղազանչեցոց եկեղեցու քակում



Ց ՈՒ Ց Ա Կ
«ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԸՄՄԱՐ»
ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾՆԵՐԻ

ԼՂՀ զին
ՆԱԽԱՎԱՀՈՒԹՅԱՆ
Թ. ՆՆ 0334-1 1994Թ. ՄԱՅԻՍԻ 5-Ի
ՀՐԱՍՆԱԳՐՈՎ

1. Աբրահամյան Էդվարդ Իլյիչի
2. Աբրահամյան Սուրեն Իլյիչի
3. Ամիրբարյան Արմեն Վյաչեսլավի
4. Ասրյան Արթուր Արմենի
5. Ավանեսյան Ալեքսանդր Սերգեյի
6. Ավշարյան Գագիկ Էդիկի
7. Բախտամյան Գեոնդի Մամիկոնի
8. Գասպարյան Արսեն Հենրիկի
9. Գրիգորյան Ստեփան Արմենի
10. Դանիելյան Արմեն Արամի
11. Եսայան Կառլեն Ջիվանչիրի
12. Խաչիյան Յաշա Ասծատուրի
13. Հակոբյան Դավիթ Էդվարդի
14. Հայրիյան Ջենյալ Թալիշի
15. Ղարիբյան Արթուր Վլադիմիրի (հետմահու)
16. Միքայելյան Վիլեն Բագրատի
17. Մկրտումյան Ժիրայր Սլավիկի
18. Ներսիսյան Մանվել Նիկոլայի
19. Պետրոսյան Արթուր Իվանի
20. Փափազյան Արթուր Վարդանի

ԼՂՀ զին ՆԱԽԱՎԱՀՈՒԹՅԱՆ
Թ. ՆՆ- 0349-1 1994Թ. ՄԱՅԻՍԻ 24-Ի
ՈՐՈՇՄԱՄԲ

21. Բեգիյան Վազգեն Իվանի (հետմահու)
22. Գրիգորյան Աշոտ Լեոնոսի (հետմահու)

23. Գրիգորյան Ավետիս Սարգսի (հետմահու)
24. Կարապետյան Երվանդ Ռաֆայելի (հետմահու)
25. Հովսեփյան Հովհաննես Սերգեյի (հետմահու)
26. Ղամբարյան Յուրի Ալեքսանդրի (հետմահու)
27. Ղարիբյան Էդուարդ Ալեքսանի (հետմահու)
28. Մխոյան Պետրոս Հմայակի (հետմահու)
29. Մկոյան Մյասնիկ Մկրտչի (հետմահու)
30. Շահբազյան Աշոտ Վլադիմիրի (հետմահու)
31. Շահբազյան Հունան Արամայիսի (հետմահու)

ԼՂՀ զին ՆԱԽԱՎԱՀՈՒԹՅԱՆ
Թ. ՆՆ-0403-1 1994Թ. ՆՈՅՄԲԵՐԻ 9-Ի
ՀՐԱՍՆԱԳՐՈՎ

32. Աթայան Գարիկ Շահենի
33. Անդրյան Ռազմիկ Վլադիմիրի
34. Առստամյան Արթուր Ալբերտի
35. Առստամյան Կառլեն Սերգեյի
36. Բաղասյան Վազգեն Ալեքսանդրի
37. Գրիգորյան Նաիրի Բաբկենի
38. Գրիգորյան Սամվել Իսպանդարի
39. Դանիելյան Ռոմա Ասծատուրի
40. Թեւանյան Լեոն Միքայելի
41. Իշխանյան Հայասեր Սերգեյի
42. Իսրայելյան Սամվել Ռազմիկի
43. Խաչատրյան Գառնիկ Գրիգորի
44. Ծատրյան Հմայակ Արմենակի (հետմահու)
45. Հակոբյան Ալեք Գրիգորի (հետմահու)
46. Համբարձումյան Արմեն Գրիգորի

**ՇՈՒՇԻԻ ԱՉԱՏԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՁՈՂՎԱԾ
ԱՉԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ**

Ց Ո Ւ Ց Ա Կ *

- | | |
|---------------------------------|---|
| 1. Ադամյան Աշոտ Ալեքսանդրի | 1972, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 2. Ազատյան Գառնիկ Մանվելի | 1969, ք. Կարմիր Շուկա, 08.05, Ջանհասան |
| 3. Ամիրբարյան Արմեն Վյաչեսլավի | 1969, ք. Ստեփանակերտ, 09.05, Ջանհասան |
| 4. Առստամյան Ալեքսանդր Գեորգիի | 1962, ք. Ստեփանակերտ, 08.05, Ջանհասան |
| 5. Առստամյան Զմայակ Յուրիի | 1970, գ. Աղբուլաղ, 08.05, Շուշի |
| 6. Ասրյան Զրանտ Շավարշի | ք. Երեւան, 08.05, Շուշի (?) |
| 7. Ավագյան Կանո Սերգեյի | 1959, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 8. Ավանեսյան Աշոտ Ավանեսի | 1965, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 9. Ավանեսյան Զենրիխ Շմավոնի | 1953, ք. Բաքու, 08.05, Շուշի |
| 10. Ավանեսյան Վալերի Ջավենի | 1958, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 11. Բարսեղյան Վասակ Վլադիմիրի | 1969, գ. Այգեստան, 08.05, Ջանհասան |
| 12. Գաբրիելյան Վլադիմիր Մուրադի | 1963, ք. Բաքու, 08.05, Շուշի |
| 13. Գաբրիելյան Յուրի Ալեքսանդրի | 1959, 08.05, Ջանհասան |
| 14. Գասպարյան Աշոտ Շիրինի | 1962, գ. Քարին-տակ, 08.05, Նաբիլար |
| 15. Գրիգորյան Աշոտ Լերմոնտի | գ. Ախուրյանի շրջ., 08.05, Ջանհասան |
| 16. Դանիելյան Կառլեն Էդուարդի | 1971, ք. Բաքու, 08.05, Քիրս |
| 17. Դանիելյան Նաիրի Ռաֆիկի | 1965, գ. Ավետարանոց, 08.05, Քիրս |
| 18. Ջաքարյան Վիգեն Կարապետի | 1969, ք. Բեյրութ, 09.05, Ջանհասան |
| 19. Կարապետյան Երվանդ Ռաֆիկի | 1968, ք. Երեւան, 09.05, Շուշի |
| 20. Ծատրյան Զմայակ Արմենակի | 1964, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 21. Հովհաննեսով Ջոհրաբ Մկրտիչի | 1969, ք. Վանաձոր, 08.05, Շուշի |
| 22. Հայրապետյան Ռադիկ Զրանտի | 1969, ք. Բաքու, 08.05, Քիրս |
| 23. Հովսեփյան Հովիկ Արտյուշայի | 1962, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 24. Հովսեփյան Հովհաննես Սերգեյի | 1964, գ. Ախուրյան, 08.05, Ջանհասան |
| 25. Դամբարյան Յուրի Ալեքսանդրի | 1959, ք. Բաքու, 08.05, Ջանհասան |
| 26. Դարիբյան Էդուարդ Ալեքսանի | 1969, ք. Երեւան, 08.05, Շուշի |
| 27. Մայիլյան Գարիկ Ավանեսի | 1955, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 28. Մանուչարյան Միքայել Արտեմի | 1960, գ. Սարուշեն, 08.05, Շուշի |
| 29. Մարգարյան Էդվարդ Վանյայի | 1968, գ. Ներքին Սզնեք, 08.05, Շուշի |
| 30. Մարտիրոսյան Կիմ Սերգեյի | 1964, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 31. Մեհրաբյան Սլավա Ալեքսանդրի | 1955, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 32. Միքայելյան Սերգեյ Ռաֆայելի | 1963, ք. Բաքու, 08.05, Շուշի |
| 33. Մկոյան Մյասնիկ Մկրտիչի | ք. Գյումրի, 08.05, Ջանհասան |
| 34. Մկրտչյան Արմեն Միքայելի | 1969, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 35. Մկրտչյան Բենիկ Ժիրայրի | 1964, ք. Գյումրի, 08.05, Ջանհասան |
| 36. Մխոյան Պետրոս Զմայակի | 1947, գ. Ախուրյան, 08.05, Ջանհասան |
| 37. Նասիբյան Վլադիմիր Ավանեսի | 1939, ք. Ստեփանակերտ, 08.05 «26»-ի դիրք |
| 38. Ներսիսյան Ալբերտ Վարդանի, | 1957, գ. Վաղուհաս, 08.05, Քյոսալար |
| 39. Շահբազյան Աշոտ Վլադիմիրի | 1968, գ. Ախուրյան, 08.05, Ջանհասան |
| 40. Շահբազյան Զուհան Արամայիսի | 1968, գ. Ախուրյան, 08.05, Ջանհասան |

- | | |
|----------------------------------|---------------------------------------|
| 41. Շաքարյան Վլադիկ Սամվելի | 1949, գ. Քոսանի, 08.05, Շուշի |
| 42. Պետրոսյան Արմեն Գավրուշի | 1971, գ. Այգեստան, 08.05, Ջանհասան |
| 43. Պետրոսյան Վալերի Երմոնի | 1959, ք. Ստեփանակերտ, 08.05, Քյոսալար |
| 44. Պետրոսյան Վլադիմիր Լենդրուշի | 1963, ք. Բաքու, 08.05, Շուշի |
| 45. Պողոսյան Դավիթ Ապրեսի | 1974, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 46. Սարգսյան Մարտիկ Գուրգենի | 1969, ք. Սոււճայիթ, 08.05, Շուշի |
| 47. Սարգսյան Շահեն Արշավիրի | 1955, գ. Խաչմաչ, 08.05, Շուշի |
| 48. Սարգսյան Վազգեն Կոստիի | 1947, գ. Այգեստան, 08.05, Ջանհասան |
| 49. Փիրումյան Օլեգ Լազարի | 1953, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 50. Օսիպով Գագիկ Սերգեյի | 1964, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |

ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԸ

- | | |
|-----------------------------|------------------------------------|
| 1. Թավրիզյան Ռազմիկ Արկադիի | 1966, ք. Ստեփանակերտ, 08.05, Շուշի |
| 2. Խաչատրյան Մարտիկ Յուրիի | 1974, ք. Բաքու, 08.05, Քյոսալար |

* Այն դեռևս ամբողջական չէ

- Օգոստոսի 12*
Հակոբ Կամարի գյուղի ու Մարտակերտ շրջկենտրոնի վրա գերիշխող բարձունքների զավթումը:
Հակառակորդի հերթական լայնածավալ հարձակումը եւ առաջխաղացումը մինչեւ Մեծ-շեն-Մաղավուզ գիծը: Արտակարգ դրության հայտարարումը ԼՂՀ-ում: 18-45 տարեկան արական սեռի բնակչության զորահավաքը:
- Օգոստոսի 14*
ԻՊՈՒ կազմակերպական-հաստիքային ճոր կառուցվածքի անցնելու մասին ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագիրը եւ ՊՇԸ-ների ստեղծումը:
- Օգոստոսի 15*
ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի(ՊՊԿ-ի) ստեղծումը(նախագահ՝ Ռ. Ս. Քոչարյան):
- Օգոստոսի 31
Սեպտեմբերի 4*
Մեհմանայի անկումը:
Մարտունու եւ Ասկերանի շրջանների արանքը մխրձված Ավդալ-Գյուլափուլու գյուղախմբի վնասագերծումը եւ Ասկերանի շրջանի՝ դեռեւս հունիսի 12-ին բռնազավթված բնակավայրերի ազատագրումը:
Վաղուհասի ազատագրումը:
- Սեպտեմբերի 18-19
Սեպտեմբերի 26
Պեկտեմբերի 2*
Ռազմավարական հանգույց Ղլղրանի անկումը:
Մարտունու շրջանի Ամիրանլար, Մուղանլու, Կուրուպատկինո գյուղերի եւ ռազմավարական Դուրուչուխ լեռան հենակետերի վնասագերծումը:
Ռազմավարական Չեիլ բարձունքի եւ Մարզիլլու գյուղի ուղղության կրակակետերի ճնշման ռազմագործությունը:
- Պեկտեմբերի 5-6*

1993 թ.

- Յունվարի 4*
Կըզըլկայա բարձունքի ռազմագործողությունը եւ Ներքին Վեյսալու գյուղի վնասագերծումը:
- Յունվարի 18-20*
Հակառակորդի ծավալուն հարձակման կասեցումը Մարտակերտի ռազմաճակատում:
- Փետրվարի 5*
Մարտակերտի շրջանի բռնազավթված բնակավայրերի ազատագրման ռազմագործողության սկիզբը:
- Փետրվարի 12-13*
Վաղուհասի, Կոճողտի եւ Գետավանի ազատագրումը:
- Փետրվարի 16
Փետրվարի 19-21*
Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի ազատագրումը:
Չափար, Իմերեթ-Քերեվենդ, Ջարդախաչ, Ջագլիկ եւ Ումուքլու բնակավայրերի ազատագրումը:
- Մարտի 17-18
Մարտի 27-ապրիլի 5*
Գյուլաթաղ եւ Ջանյաթաղ գյուղերի ազատագրումը:
Մարտակերտի շրջանի արեւմտյան մասի ազատագրումը եւ Քելբաջարի շրջանի ազատագրման ռազմագործողությունը:
- Յունիսի 15*
ԼՂՀ ԳԻՆ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի հրաժարականը՝ կապված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւից բխող «Անվտանգության միջոցառումների ժամանակացույցի» անընդունելի պայմանների հետ:
- Յունիսի 26*
Աղդարա (Հեռուստաաշտարակ) եւ Թագախաչինյալ (Պուշկեն-յալ) ռազմավարական բարձունքների ազատագրումը:

- Յունիսի 27
Յուլիսի 22-23*
Մարտակերտ քաղաքի ազատագրումը:
Ադրբեջանի խոշոր ռազմական հենակետերից մեկի՝ Աղդամ քաղաքի առումը:
- Յուլիսի 25-28*
ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ երկկողմ բանակցությունները, հրադադարի շուրջ բանավոր պայմանավորվածության ձեռքբերումը:
- Օգոստոսի 15-20*
ԻՊՈՒ հակահարձակումը Հադրուքի շրջանում եւ հայկական բնակավայրերի ազատագրումը:
- Օգոստոսի 22*
Ֆիզուլի քաղաքի թշնամական կրակակետերի ճնշումը:
- Օգոստոսի 23
Օգոստոսի 31
Պեկտեմբերի 24-30*
Ջաբրայիլ քաղաքի առումը:
Ղուբաթլի շրջկենտրոնի առումը:
Հորադիզ երկաթուղային կայարանի ու Մինջեւանի ազատագրման ռազմագործողությունը:
Չանգելան քաղաքի առումը:
Մինջեւան հանգույցի առումը:
ԻՊՈՒ-ը ԼՂՀ պաշտպանության բանակի վերակազմավորելու մասին ՊՊԿ նախագահի հրամանագիրը:
ԼՂՀ սահմանագծի ողջ երկայնքով հակառակորդի լայնածավալ ագրեսիայի սկիզբը:
- Պեկտեմբերի 29
Պեկտեմբերի 30
Նոյեմբերի 10*
- Պեկտեմբերի 21*

1994 թ.

- Յունվարի 4*
ԼՂՀ պաշտպանության բանակի կառուցվածքի հաստատումը ՊՊԿ-ի կողմից:
- Փետրվարի 18*
Քելբաջարի երկրորդ ռազմագործողության ավարտը եւ ռազմավարական Օմար լեռնանցքի ազատագրումը:
Հայաստանի, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի ռազմական գերատեսչությունների ղեկավարները ստորագրեցին հակամարտության կարգավորման հարցերի վերաբերյալ արձանագրություն:
- Ապրիլի 12*
Մարտակերտի շրջանի Լեւոնարխ գյուղի ազատագրումը:
- Ապրիլի 14*
Նույն շրջանի պատմական Թալիշ գյուղի ազատագրումը:
- Ապրիլի 15*
Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման ընթացքում ընդունվեց ճոր հայտարարություն ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ:
Բիշքեքյան արձանագրության մշակումը:
Աղդամի շրջանի Ղափանլի գյուղի կրակակետերի ճնշումը:
- Մայիսի 5
Մայիսի 11*
Հայաստանի, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի ռազմական գերատեսչությունների ղեկավարների հանդիպումը Մոսկվայում եւ մայիսի 17-ի 00 ժամից հրադադարի հաստատման շուրջ համաձայնության գալը:
Հրադադարի հաստատումը ղարաբաղ-ադրբեջանական հակամարտության գոտում:
- Մայիսի 17*

ՇԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ուսումնասիրողներից ոմանք միջնադարյան Կարկառ ամրոցը տեղադրում են Շուշի սարահարթակի վրա եւ նույնացնում Շուշիբերդի հետ (Տես՝ Բակուր Կարապետյան, Հարյուր տարվա երկխոսություն: Երեւան, 1990, էջ 93, նույնի՝ Շուշի բերդաբաղաբը: Երեւան, 2000, էջ 13, Սլավա Սարգսյան, Արցախ. պատմաաշխարհագրական ճշգրտումներ: Երեւան, 1996, էջ 17): «Կարկառ» նշանակում է քարերի կույտ, քարքարուտ կամ քարքարոտ վայր, ժայռի դուրս ցցված մաս(Տես ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր երրորդ: Երեւան, 1974, էջ 80, հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արձանագրական բառարան, Բ հատոր: Երեւան, 1973, էջ 554):

Շուշիի նախնական Քար անվանումը (Տես՝ Յակոբ Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց հաշիկ վարդապետի Դաղեան. ժողոված 1878-1898, Մասն Բ: Վաղարշապատ, 1900, էջ 35, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ: Երեւան, 1959, էջ 609, АВПР, ф. 100, 1739, л. 2, л. 49 и об., подлинник եւ այլն) հիմք է տալիս անմիջական կապ տեսնել «Կարկառ» եւ «Քար» տեղանունների միջեւ: «Շուշի»-ի նոր ստուգաբանությունը Հովհաննես Կարապոպյանի կողմից (Տես Յովհաննես Կարապետյան, Սեպագիր տեղանուններ, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, Հատոր Ա, գիրք Ա: Երեւան, 1998, էջ 111), այն է՝ «լեռ», «բլուր», հուշում է «Կարկառ»-«Քար»-«Շուշի» հնարավոր անցման մասին, ինչը, սակայն, հիմնարար ուսումնասիրության կարիք ունի: Ամեն պարագայում, Շուշիի հիմնադրման տարեթիվը դեռեւս պարզված չէ եւ բոլոր թվագրումներն առայժմ պայմանական ու հարաբերական բնույթ են կրում: - 7

[2] Շուշիի գրավան հետ առնչվող իրադարձությունները «միայն դավաճանությամբ» է՝ իրոճում քայքայելու Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յ. Մամեդովը: Արդեն իսկ մայիսի 11-ին հանրապետական հեռուստատեսությամբ ժողովրդին ուղղված դիմումում նա հայտարարել է, թե Շուշիում դավաճանություն է եղել՝ մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը քաղաքից դուրս է բերվել կայազորի մեծ մասը: Մամեդովը քննադատել է պաշտպանության նախարարությանը՝ ադրբեջանական բանակի կողմից Շուշին պաշտպանելու վերաբերյալ կեղծ հաղորդումների համար (Տես՝ «Երկիր», ք. 88, 1992թ.): Բաբվում լույս տեսնող «հավի գագետի» թերթի մայիսի 13-ի համարում նա հաղորդել է, որ դավաճանության փաստը իր հետ ունեցած գրույցում հաստատել է ՊՆ գլխավոր շտաբի պետ Շ. Մուսաելը: Վերջինս, մասնավորապես հայտնել է, որ Շուշիի մատույցներում տեղակայված հակատանկային եւ ոչ մի կալան չի գործել, իսկ ադրբեջանական զրահատեխնիկան լքված է եղել ջրով: Բացի այդ, հայերի ձեռք են ընկել Շուշիի պաշտպանության քարտեզ-սխեմաները: Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռ. Դազիբը դավաճանության մեջ մեղադրել է իր երկրի «բարձրագույն շրջանակներին»: (Տես՝ «Երկիր», ք. 90, 1992թ.): Սակայն, ադրբեջանական ընդդիմադիր մամուլի արժարժած այն միտքը, թե հանրապետության ղեկավարությունը Շուշին հանձնել է հայերին, որ իրադրության սրման պայմաններում չէրայլ հայտարարի նախագահական ընտրություններն ու մնա իշխանության գլուխ, աներկապ վկայում է Շուշիի կայտառակ պարտությունը քաղաքական շահարկումների առարկա դարձնելու Ադրբեջանի իշխանություններին եւ ընդդիմության հավակնությունների մասին: - 9

[3] Մասնավորապես, նման վարկած է առաջ քաշել Ռաֆիկ Թաղետյանը (տես՝ նրա «Արցախյան ազատամարտ.» օրացույց-հանրագիտակ: Երեւան, 1998, «Շուշիի ազատագրումը եւ Լաչինի միջանցքի բացումը» պատկերազարդ քարտեզ: Երեւան, 1999): - 9

[4] «ՕՍՕՆ» եւ «օմնական» արտահայտչաձևերը ռուսերեն տառադարձությամբ են: - 16

[5] Այդ մասին հարյուրավոր հաղորդագրություններ ու ամփոփագրեր կան ժամանակի մամուլում: - 17

[6] Մինչեւ 1917 թվականը՝ Ելիզավետպոլ, խորհրդային շրջանում՝ Կիրովաբադ, ներկայումս՝ Գյանջա: - 17

